

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՆԻ ՀՐԱՉՅԱՅԻ ԱՃԱՌՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԻՆՏԵՐԻԵՐԻ ԴԻԶԱՅՆԸ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԺԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն»
մասնագիտությամբ արվեստագիտության թեկնածուի
գիտական աստիճանի համար

Գիտ. ղեկավար՝
ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր
Դավիթ Քերթմենջյան

ԵՐԵՎԱՆ 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	էջ 4-9
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. Պատմատեսական ակնարկ, բնագավառի միջազգային փորձը և ուսումնասիրության ենթակա օբյեկտների ընտրությունը.....	էջ 10-44
1. Պատմական ակնարկ.....	էջ 10-12
2. Թանգարանների ծագումն ու զարգացումը.....	էջ 12-15
3. Թանգարանների դասակարգումը	էջ 15-17
4. Թանգարանների հատակագծային հիմնախնդիրները.....	էջ 17-18
5. Թանգարանային ինտերիերի դիզայնի առանձնահատկությունները.....	էջ 18-21
6. Ինտերիերի դիզայնի նախագծային գործընթացի կազմակերպումն ու կառավարումը.....	էջ 22-25
7. Թանգարանների ինտերիերի դիզայնը ըստ պրոֆիլների	էջ 25-28
8. Թանգարանների միջազգային կարևորագույն օրինակներն ու զուգահեռները	էջ 29-32
9. Թանգարանների ինտերիերի նախագծման փուլերը.....	էջ 32-39
10. Պատմական ակնարկ հայկական թանգարաններից.....	էջ 39-44
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. Երևանի խորհրդային ժամանակաշրջանի թանգարանների ինտերիերի դիզայնը.....	էջ 45-92
1. Երևանի խորհրդային ժամանակաշրջանի թանգարանների ցուցակագրումը ըստ պրոֆիլների և դրանց ինտերիերի դիզայնը.....	էջ 45-47
2. Հայաստանի ազգային պատկերասրահ	էջ 47-57
3. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան	էջ 57-62
4. Հայաստանի փայտարվեստի թանգարան	էջ 62-66
5. Հայաստանի պատմության թանգարան	էջ 66-72
6. Հովհաննես Թումանյանի թանգարան	էջ 72-76
7. ՀՀ ՊՆ Մայր Հայաստան զինվորական թանգարան	էջ 76-83
8. Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան.....	էջ 83-91
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. Երևանի հետխորհրդային ժամանակաշրջանի թանգարանների ինտերիերի դիզայնը.....	էջ 92-119

1. Երևանի հետխորհրդային ժամանակաշրջանի թանգարանների ցուցակագրումը ըստ պրոֆիլների և դրանց ինտերիերի դիզայնը.....	էջ 92-93
2. Հայաստանի ճարտարապետության ազգային թանգարան- ինստիտուտ.....	էջ 93-100
3. Գաֆեսճյան արվեստի կենտրոն.....	էջ 100-103
4. Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ.....	էջ 103-107
5. Հայաստանի բնության պետական թանգարան	էջ 107-110
6. Կոմիտասի թանգարան-ինստիտուտ	էջ 110-116
7. Կալենց թանգարան	էջ 116-119
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	էջ 120-122
ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ. ԳԾԱՊԱՏԿԵՐ.....	էջ 123
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	էջ 124-128
ՀԱՎԵԼՎԱԾ.....	էջ 129-186

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թանգարանային ինտերիերի դիզայնը միջավայրի ներդաշնակ, ազդեցիկ և ֆունկցիոնալ գեղարվեստական հորինվածքի նախագծումն է: Այն համակարգային կերպով ամփոփում է թանգարանային միջավայրի գոտևորման, լուսավորության, գունային համադրությունների, կահավորման, տեսողական հաղորդակցության, ցուցանմուշների անվտանգ պահպանման և ներկայացման գործառույթները: Թանգարանային ինտերիերի դիզայնը բավականին բարդ և համակարգված գործընթաց է, որը մեծ կարևորություն ունի համաշխարհային պրակտիկայում: Թանգարանները կարևորագույն նշանակություն ունեն երկրի մշակութային, հասարակական և քաղաքական բնագավառներում, ուստի ցուցանմուշների գրագետ մատուցումը, պահպանումը և անվտանգությունը առաջնային դեր ունեն: Հայաստանը, տարածաշրջանում հանդիսանալով մշակութային խոշոր կենտրոն, հարուստ է իր հնամենի գոյությունն ու զարգացող ներկան ապացուցող խոշոր ներկայանալի նյութով, որը զետեղված է բազմաբնույթ և բազմապրոֆիլ թանգարաններում: Թանգարաններ կան Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում, որոնց մեծ մասը կենտրոնացած է մայրաքաղաքում: Թանգարանային ինտերիերի դիզայնի միտումները օրեցօր զարգանում են Երևանում, սակայն միջազգային օրինակների համատեքստում, դրանց մեծամասնությունը դիզայներական տեսանկյունից շարունակում է մնալ թերի: Ներկայիս Երևանյան թանգարանների ինտերիերի դիզայնի սակավաթիվ հաջողված օրինակների կողքին նկատելի են բազմաթիվ արդիականացման կարիք ունեցող օրինակներ, որտեղ պահպանվում և ներկայացվում են մշակութային հսկայական արժեք ունեցող նմուշներ: Ուստի անհետաձգելի է դրանց մասնագիտական փաստագրումն ու վերանայումը: Այդ առումով սույն ատենախոսության մեջ ներկայացվում են թանգարանների դիզայներական հիմնախնդիրները և դրանց բարելավման հնարավորությունները, որոնք կատարվում են տիպաբանական, հորինվածքային և տեխնոլոգիական մոտեցումներով: Ուսումնասիրության մեջ քննարկվող միջազգային զուգահեռները, դրանցում առկա ինտերակտիվ սարքավորումների, հորինվածքային մտահղացման, նորանոր նյութերի համադրման և միջավայրի կազմակերպման այլ միտումներ թույլ են տալիս օբյեկտիվորեն գնահատել

Երևանի թանգարանների ինտերիերի դիզայնը՝ հող նախապատրաստելով դրանց ապագա արդիականացման համար: Ներկայումս տարեցտարի Հայաստանի Հանրապետությունում զարգանում է զբոսաշրջությունը, որի խթանիչներից մեկը այցելությունն է հյուրընկալ թանգարաններ: Այսպիսով՝ ժամանակին համընթաց դրանց գեղագիտական միտումները զարգացնելու հեռանկարները գտնելու համար անհրաժեշտ է կատարել թանգարանների ինտերիերի մասնագիտական փաստագրում, վերլուծություն և հետազոտություն:

Ուսումնասիրությունը մասնագիտորեն ներգրավում է թանգարանային ինտերիերի դիզայնի զարգացման վերլուծությունը, մեթոդիկան, տեսակներն ու տիպերը, ոճային և պրոֆիլային առանձնահատկությունները, ինչպես նաև՝ ձևավորման հորինվածքային տեսությունը, նախագծային սկզբունքները, հայկական իրականության հետ թեմայի առնչությունները:

Այսօր Երևանի թանգարանների ինտերիերի դիզայնի միջազգային զուգահեռներով վերլուծությունը անհետաձգելի անհրաժեշտություն է, որն օժանդակում է մասնագիտական գործունեության ոլորտների հարստացմանը և միջոցների ամբողջացմանը: Փաստն այն է, որ ներկայումս համաշխարհային մեծ նշանակություն ունեցող թանգարաններում չափազանց շատ է կարևորվում ինտերիերի դիզայնի գեղագիտական կազմակերպումը: Դրա վկայությունն է Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությանը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ին կից թանգարանների միջազգային խորհրդի Հայաստանի ազգային կոմիտեի (ICOM) կողմից վերջին տարիներին կատարված թանգարանների ինտերիերի դիզայնի վերաբերյալ բազում հրապարակումներն ու դասախոսությունները: Ուստի Երևանի թանգարանների ինտերիերի դիզայնի արդիականացումը արդեն կարելի է դիտարկել, որպես համաշխարհային նշանակության և կարևորության հարցադրում:

Հետազոտության հիմնահարցը Երևանի թանգարանների դիզայնի արդիականացման լուծումների ու առանձնահատկությունների համակողմանի բնութագրումն է, որը կարող է ծառայել նաև որպես դիդակտիկ նյութ հետագա մասնագիտական գործընթացների համար:

Բնականաբար նման ուսումնասիրությունը մասնագիտական միջազգային իրականությունից և անցած ուղուց ունի իր ելակետերը, որոնցից և ածանցվում են Երևանի թանգարանների ինտերիերի դիզայնի իրականության բնութագրման չափորոշիչները: Որպես այդպիսին ատենախոսությունում գիտական խնդիրներ են սահմանում հետևյալ կետերը.

1. միջազգային իրականությունում թանգարանների ինտերիերի դիզայնի զարգացման նախադրյալների ուսումնասիրումն ու տարածումը Հայաստանի Հանրապետությունում,
2. թանգարանային ինտերիերի դիզայնի կազմակերպման փուլերի ուսումնասիրությունն ու բնութագրումը,
3. Երևանի թանգարանների ցուցակագրումը ըստ պրոֆիլների,
4. պրոֆիլային առանձնահատկությունների քննական ուսումնասիրությունը. ներառյալ՝ ինտերիերի գունային հարաբերության, ցուցադրական տարրերի համամասնության հիմնախնդիրները, միջավայրի՝ կերպարային և մթնոլորտի կազմակերպումը, տարաբնույթ նյութերի համադրումը, տեսողական հաղորդակցությունը, բնական և արհեստական լուսավորությունը և այլն,
5. Երևանի թանգարանների փաստագրական-վերլուծական ուսումնասիրությունը,
6. միջազգային և երևանյան թանգարանների ինտերիերի դիզայնի բնութագրիչ առանձնահատկությունների համեմատական ուսումնասիրությունը,
7. Երևանի թանգարանների ինտերիերի դիզայնի հիմնական ոճերի ուսումնասիրությունը:

Ատենախոսության մեթոդը հիմնվում է պատմական ու տեսական գիտելիքների, միջազգային առաջատար փորձի բնութագրի վրա, որը զուգահեռաբար համեմատության մեջ է դրվում Երևանի թանգարանների ինտերիերի դիզայնի փաստագրավերլուծական տվյալների հետ: Հետևաբար հետազոտությունը որակական մեթոդով է իրականացված: Հետազոտության ընթացքում կատարվել է թանգարանների ուսումնասիրություն տեղում, դրանց ինտերիերի դիզայնի կարևոր մասնագիտական խնդիրների մասնավորում ու վերլուծություն՝ դիտարկելով դրանց գեղարվեստական արտահայտչամիջոցները: Ըստ պրոֆիլների համակարգվել և

ընտրվել են Երևանի թանգարանների կարևոր օրինակները, որոնք իրենց ինտերիերի դիզայնով վերլուծական խոշոր նյութ են ներկայացնում:

Մինչ օրս չկա որևէ ծավալուն կամ համառոտ ուսումնասիրություն Երևանի թանգարանների ինտերիերի դիզայնի և նրա մասնագիտական ճյուղերի ուսումնառության պրակտիկայի առնչությամբ: Թանգարանների ինտերիերի դիզայնը, որպես ատենախոսության ուսումնասիրության առարկա հանդես գալով առաջին անգամ, իր մեջ ներառում է.

- Երևանում գործող թանգարանների ըստ պրոֆիլների փաստագրումը,
- միջավայրային և նախագծային առանձնահատկությունների, լուսավորության, գոտևորման, հորինվածքի, տեսողական հաղորդակցության, կահավորման վերլուծությունը,
- թանգարանների համեմատական վերլուծությունը միջազգային նույնապրոֆիլ թանգարանների լավագույն օրինակների հետ,
- Երևանի թանգարանների ինտերիերի դիզայնի տիպաբանական, ոճային հորինվածքային և տեխնոլոգիական վերլուծությունը,
- թանգարանների ինտերիերի դիզայնի արդիականացման հնարավորությունների առաջարկներ:

Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել գործնական նախագծման, ինչպես նաև տեսական ու մեթոդական ուսումնասիրությունների համար: Ատենախոսության դրույթները հրապարակվել են ՀՀ մասնագիտական մամուլում հոդվածների ձևով: Աշխատության հիմնական դրույթների մասին հրապարակումներ են կատարվել ՀՀԳԱԱ Արվեստի ինստիտուտի երիտասարդ հայ արվեստաբանների գիտական նստաշրջաններում, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի հետազոտական կենտրոնի և գիտական մասի կողմից կազմակերպված հանդիպումներում:

Աշխատության գիտական գրականության տեսության մի մասը կազմում են Հայաստանի Հանրապետությունում դիզայնի բնագավառին առնչվող սակավաթիվ հրատարակությունները: Անհրաժեշտ է նշել, որ եղած հրատարակությունների մեծամասնությունը մասնագիտական մեթոդական բնույթ չեն կրում և կարիք ունեն

քննական ընդհանրացման: Բացի այդ ՀՀ պրակտիկայում դեռևս չկա թանգարանային ինտերիերի դիզայնին նվիրված որևէ նշանակալի գիտական հրատարակություն: Գոյություն ունեցող հրապարակումները ընդգրկում են ընդհանուր դիզայնի մասնագիտությամբ պաշտպանված մի քանի ատենախոսություններ, մնացյալն առնչվում է թանգարանագիտական բնագավառին: Գիտական գրականության մյուս մասը կազմում են տեսության պատմության, ժամանակակից դիզայնի արվեստաբանության և պրակտիկային նվիրված գործերը: Ատենախոսության տեսական խնդիրների համար ներգրավվել են տուրիստական, թանգարանագիտական, ճարտարապետական և դիզայնետական հրատարակություններ: Քանի որ դիզայնի վերաբերյալ հայկական աշխատությունները սակավ են, սույն ատենախոսությունում օգտագործվել են միջազգային հրապարակումներ, որոնք տպագրված և համացանցի օրինակներով ներգրավված են ատենախոսության բովանդակության մեջ:

Ատենախոսության շարադրման գործընթացում օգտագործվել են թանգարանային ինտերիերի դիզայնին առնչվող միջազգային և տեղական պատմատեսական նյութեր, հոդվածներ և հրապարակումներ¹: Հարկավոր է նշել, որ աշխատությունը շարադրելիս բացի նշված գրականությունից օգտագործվել են թանգարանների արխիվային նյութեր, ինչպես նաև տեղում կատարվել է հետազոտություն: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից և վերատպություններից:

¹ Գիրս Բ., Սանի Մ., Թոմսոն Ջ., «Շարունակական կրթությունը թանգարաններում», Եվրոպական ձեռնարկ, Երևան, 2005, 106 էջ:

Հարությունյան Մ., Բեմական նորագույն տեխնոլոգիաների հնարավոր կիրառումը Հայաստանի դիտադահլիճային շինությունների վերակառուցումներում, ՀՀ ԳԱԱ Արվեստի Ինստիտուտ, Անտարես, Երևան, 2016, 167 էջ:

Տիգրանյան Է., Հասարակական շենքերի ճարտարապետական առանձնահատկությունների մասին, Լույս հրատ., Երևան, 1989, 37 էջ:

Иконников А., Степанов Г., Основы архитектурной композиции, Москва, изд. Искусство, 1971, 225 стр. .

Darragh J., Snyder J., Museum Design: Planning and Building for Art, New York, Oxford University Press, 1993, 319 pages.

Bogle E., Museum Exhibition planning and Design, Lanham, AltaMira Press, 2013, 418 pages.

Ներածությունում ներկայացված են ատենախոսության հիմնական նպատակներն ու խնդիրները, աշխատանքի իրականացման տեսական և մեթոդաբանական հիմքը, թեմայի կարևորությունն ու արդիականությունը, գիտական նորույթը, գործնական նշանակությունը, սկզբնաղբյուրների ու գրականության հակիրճ տեսությունը:

«Պատմատեսական ակնարկ, բնագավառի միջազգային փորձը և ուսումնասիրության ենթակա օբյեկտների ընտրությունը» վերնագիրը կրող առաջին գլխում ուսումնասիրվել են թանգարանային պատմության տեսական վկայությունները, թանգարանային ինտերիերի դիզայնի հիմնական առանձնահատկությունները, նախագծման փուլերը, ինչպես նաև կատարվել է Երևանի թանգարանների պրոֆիլային դասակարգման ցուցակագրումը:

«Երևանի խորհրդային ժամանակաշրջանի թանգարանների ինտերիերի դիզայնը» վերնագիրը կրող երկրորդ գլխում ուսումնասիրվել են խորհրդային շրջանում հիմնադրված թանգարանների տիպաբանական և ոճային առանձնահատկությունները, առանձնակի վերլուծության են ենթարկվել Հայաստանի ազգային պատկերասրահի, Հայաստանի պատմության թանգարանի, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի, Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի, Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանի, ՀՀ ՊՆ «Մայր Հայաստան» զինվորական թանգարանի, Հայաստանի փայտարվեստի թանգարանի ինտերիերները, ինչպես նաև ներկայացվել են դրանց միջազգային զուգահեռները:

«Երևանի հետխորհրդային ժամանակաշրջանի թանգարանների ինտերիերի դիզայնը» վերնագիրը կրող երրորդ գլխում ուսումնասիրվել են հետխորհրդային շրջանում հիմնադրված թանգարանների տիպաբանական և ոճային առանձնահատկությունները, առանձնակի վերլուծության են ենթարկվել Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի, Հայաստանի բնության պետական թանգարանի, Գաֆեսճեան արվեստի կենտրոնի, Կալենց թանգարանի, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի ինտերիերները, ինչպես նաև ներկայացվել են դրանց միջազգային զուգահեռները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ՊԱՏՄԱՏԵՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ, ԲՆԱԳԱՎԱՌԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Պատմական ակնարկ

Հանդիսանալով մշակութային, տեղեկատվական ու պատմահնագիտական խոշոր կենտրոններ՝ թանգարաններն իրենցից ներկայացնում են խոշոր արժեք: Յուրաքանչյուր թանգարանի կարևորագույն խնդիրներից է մշակութային արժեքների պահպանումը և դրանց ներկայացումը կրթական, ճանաչողական և գիտական տեսանկյուններից: Թանգարանները, կախված ցուցադրված հավաքածուների բովանդակությունից, կրում են յուրօրինակ առանձնահատկություններ, որոնք դրսևորվում են թե՛ ցուցանմուշների պահպանման, և թե՛ մատուցվող նյութի ներկայանալի միջավայրի կազմակերպման գործում: Դրանք իրենց մեջ կրում են խոշոր ֆունկցիոնալ առանձնահատկություններ, որոնք կոչված են ապահովելու տեղեկատվական, ցուցադրական ու ուսումնասիրողական նյութերի ներկայանալի մատուցումը:

Թանգարաններն ասես այցեքարտ են հանդիսանում յուրաքանչյուր երկրի պատմամշակութային կերպարի ներկայացման գործում: Դրանք կոնկրետ թեմատիկ հավաքածուներում ամփոփում են ցուցադրված ժառանգության միասնական նկարագիրը: Այսպիսով, յուրաքանչյուր թանգարան՝ ըստ բնույթի և տեսակի ունի իր ուրույն հավաքածուն ու ցուցադրությունը, որով կոորդինացնելով կոնկրետ ժամանակաշրջան, արվեստի տեսակ և այլն, հնարավորություն է տալիս կարճ ժամանակահատվածում մատչելի ձևով ներկայացնել ամենատարբեր երևույթներն ու ուսումնասիրությունները:

Համաշխարհային պատմությունը վկայում է, որ ի սկզբանե թանգարանները, որպես հասարակական մշակութային վայրեր ձևավորված չեն եղել: Թանգարան էին համարվում մեծահարուստ անհատներին, ընտանիքներին կամ մշակութային հաստատություններին պատկանող հավաքածուները, որոնք ներկայացվում էին համապատասխան սրահներում և հասանելի չէին հասարակության լայն շերտերին: Հետագայում արդեն բացվեցին թանգարաններ, որոնք նախատեսված էին հասարակության միջին և բարձր դասի համար: Այսպիսով տարեցտարի

թանգարանային մշակույթը զարգացավ՝ համակարգելով թե՛ այցելուների հոսքի կառավարումը, թե՛ ցուցադրության կազմակերպումը, և թե՛ ցուցանմուշների անվտանգ պահպանումը²:

Փորձը ցույց է տալիս, որ մշտապես մեծ ուշադրություն է դարձվում թանգարանների ներքին միջավայրի գրագետ կազմակերպմանը, քանի որ այստեղ հիմնականում մեծ հազեցվածությամբ ցուցադրվում է չափազանց խիտ տեղեկատվական նյութ: Այդ իսկ պատճառով բարդ խնդիր է դառնում նմուշների ճիշտ մատուցման, մարդկային հոսքի, շարժման ուղղորդման, իրերի անվտանգ պահպանման կազմակերպումը: Այսպիսով պարզ է դառնում, որ բավականին դժվար գործառույթ է իրենից ենթադրում թանգարանային ինտերիերի դիզայնը, որի ֆունկցիոնալ առանձնահատկությունները չափազանց մեծ խնդիրներ են առաջացնում նախագծման գործընթացում: Ժամանակակից զարգացած թանգարաններն ունեն միջավայրի կազմակերպման դիզայնների հսկայական աշխատակազմ, որոնց գործունեությունը չի սահմանափակվում երկչափ կամ եռաչափ մոդելավորմամբ, այլ նաև ընդգրկում է տեսաձայնային մասնագետների, ծրագրավորողների, հետազոտողների, նկարիչների համակարգային աշխատանքը: Ցուցադրության կազմակերպման մեջ առաջնային տեղ է տրվում արտահայտման պլանին, որով մշակվում են այցելուին ընդգրկելու և համապատասխան ուղերձը հղելու ամենաարդյունավետ եղանակները:

Երկրի մշակութային ու հասարակական կյանքի առանցքային ուժը մշտապես թանգարաններին է պատկանել: Ներկայումս հայկական թանգարանների մեծ մասը դեռևս ունի ավանդական ինտերիերի դիզայնի հորիինվածք և հիմնվում է առավելապես թանգարանային դասական օրինակների վրա: Սակայն հարկ է նշել, որ դրանցում ամփոփված խոշոր տեղեկատվական և պատմամշակութային արժեք ներկայացնող նյութը մեծ պահանջ է ներկայացնում գրագետ մատուցվելու համար:

² Майстровская М., Музей как объект культуры. Искусство экспозиционного ансамбля, Москва, изд.

Прогресс-Традиция, 2015, стр. 98.

Թանգարաններ գործում են Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում՝ թե՛ մարզերում, թե՛ մայրաքաղաքում: Չնայած արդի թանգարանների մեծ մասը վերանորոգման արդյունքում հագեցվել է բավականին լուրջ տեխնոլոգիաներով և դիզայնի և արվեստի լուծումներով, բայց հարկ է նշել, որ այդ թանգարաններն առավելապես կենտրոնացված են Երևանում:

2. Թանգարանների ծագումն ու զարգացումը

Թանգարանները, հանդիսանալով գիտական և գիտալուսավորական հիմնարկություններ, համակարգում, պահպանում, ուսումնասիրում, տարածում են նյութական, բնապատմական և հոգևոր մշակույթի այն նմուշները, որոնք համարվում են բնության և մարդկային հասարակության զարգացման մասին գիտելիքների սկզբնաղբյուրներ: Թանգարանների ֆոնդերում գլխավորապես համակարգվում են արվեստի ստեղծագործություններ, գրավոր աղբյուրներ, իրեղեն առարկաներ և այլն:

Թանգարանների առաջին օրինակներն ի հայտ են եկել մարդկության զարգացման այն փուլում, երբ առարկաների բնատիպերը սկսվել են պահպանվել ոչ թե որպես կիրառական-տնտեսական արժեքներ, այլ որպես վավերական, գեղագիտական վկայություններ: Թանգարանների նախատիպեր կարելի է համարել Հին Եգիպտոսի տաճարներում պահվող հավաքածուները (մ.թ.ա. 3-րդ հազարամյակ), Կնոսի պալատի պահոցը Կրետե կղզում (մ.թ.ա. 16-րդ դար), Նինվեի պալատի գրադարանը (մ.թ.ա. 7-րդ դար) և այլն: Արվեստի նմուշների մեկ հարկի տակ կենտրոնացման և պահպանման առաջին քայլերը սկսվել են Վերածննդի ժամանակաշրջանում և առավել զարգացել 16-17-րդ դարերում Իտալիայում, ապա՝ Ֆրանսիայում, Անգլիայում, Գերմանիայում և Արևմտյան Եվրոպայի մյուս երկրներում: Թանգարանների ծագման և զարգացման սկզբնական շրջանում լայն տարածում են ունեցել պալատական հավաքածուները՝ կունստկամերները: Այդ շրջանում են ստեղծվել նաև անտիկ արվեստի հուշարձանների հավաքածուն Ֆլորենցիայում (Լ. Մեդիչի, 15-րդ դար), Հռոմում (Վատիկանի թանգարաններ, 16-րդ դար), Դրեզդենում (Ա. Սաքսոնսենի, 16-րդ դար) և այլն: Ներկայումս գործող թանգարանների մեծ մասը ստեղծվել է 18-19-րդ դարերում: Դրանցից են Բրիտանական թանգարանը Լոնդոնում (1753թ.), Լուվրը Փարիզում (1793թ.), Պրադոյի գեղարվեստի թանգարանը Մադրիդում (1819թ.),

Մետրոպոլիտեն թանգարանը Նյու Յորքում (1870թ.), Գեղարվեստա-պատմական թանգարանը Վիեննայում (1891թ.) և այլն: Ռուսաստանում հարուստ հավաքածուներ են եղել Վլադիմիրի Տրոիցե Սերգիևյան, Կիևի Կիև-Պեչորյան վանքերում և Նովգորոդի Ս. Սոֆիայի տաճարում: 15-17-րդ դարերում կազմավորվել են Մոսկվայի Զինա պալատի հավաքածուն և Պատրիարքարանի հուշարձանների ավանդատունը: 1719թ. Պետերբուրգում բացվել են առաջին մասսայական թանգարանները՝ Կուստկամերան, 1756թ.՝ Հրետանային պատմության թանգարանը և 1764թ.՝ Էրմիտաժը³:

Հայաստանի տարածքում թանգարանային ավանդույթներն ունեն բավականին խոր արմատներ, հասնելով մ. թ. ա. IX–VI-րդ դարեր: Հետագայում այդպիսի ավանդատներ դարձան հին հայկական հեթանոսական տաճարները և արքայական պալատները: Սակայն Հայկական թանգարանների կազմակերպման գործը լայն տարածում ստացավ XIX–րդ դարում⁴:

Թանգարանային ինտերիերի դիզայնի մասին խոսելիս պետք է հիշել, որ դրա առանցքային պարտականություններից է հասարակության կրթական զարգացումը և բնակչության առավել լայն շերտերին պատմամշակութային ժառանգությանը հաղորդակից դարձնելը: Թանգարանային միջավայրի նախագծման մեջ մյուս կարևոր գործոնը դրա աշխատակիցների և հասարակության հետ կապի ապահովումն է: Բացի այդ թանգարանները, որպես պատմամշակութային արժեքների մասին հիմնական վկայարաններ, առանձնահատուկ պարտականություն են կրում հետազոտական աշխատանքների իրականացմանը նպաստելու համար:

Թանգարանների ինտերիերի դիզայնի մասին խոսելիս պետք է հիշել, որ դրանց հիմնական դերն է պահպանել հավաքածուներն ապագայի համար, և հետազոտական, կրթական աշխատանքների, մշտական ցուցադրությունների, ժամանակավոր ցուցահանդեսների միջոցով նպաստել գիտելիքի զարգացմանն ու տարածմանը: Ուստի միջավայրի նախագծման համար պետք է հաշվի առնել բոլոր վերը նշված գործառույթներն ու դրանց առանձնահատկությունները: Այդ ամենից զատ թանգարանների ինտերիերը պետք է ապահովի հավաքածուների ֆիզիկական

³ Поправко Е., История музеев, <https://abc.vvsu.ru/books/muzeebed/page0004.asp>. (հասանելի է 13.04.2015).

⁴ Լաֆադարյան Կ., Միջնադարյան Հայաստանի թանգարանները, գանձատուները և ավանդատուները, Փարիզ, «Անդաստան», №13, 1962, էջ 97:

անվտանգությունը և դրանց պահպանման համար պատշաճ պայմանները: Պետք է մշտապես հաշվի առնվեն անվտանգության բոլոր չափորոշիչները, արդյունքում ստեղծելով այնպիսի միջավայր, որը նվազագույնի կհասցնի գողության, վանդալիզմի ռիսկերը և կունենա ջերմախոնավային և հակահրդեհային հատուկ համակարգեր⁵: Հաշվի առնելով նաև հաշմանդամների հատուկ կարիքները՝ այն պետք է լիովին համապատասխանի պետական օրենսդրությանը՝ կապված առողջության, անվտանգության և տարածքի մատչելիության հետ:

Թանգարանային ինտերիերի դիզայնը ոչ միայն պետք է գեղագիտորեն ներկայացնի ցուցանմուշները, այլև պետք է լուծի որոշակի խնդիրներ՝ կապված իրերի անվտանգության, ջերմալուսային պայմանների, թեմատիկ հաջորդականության, մարդկային հոսքի ուղղորդման ու հասարակության տարբեր շերտերի պահանջները բավարարելու համար: Այս գործառույթներն ապահովելու համար առաջնային է ցուցադրական ծրագրի հստակ մշակումը, այնուհետև ցուցադրվող նյութերի պահպանման, անվտանգության, բովանդակային և ժամանակային պահանջներին համապատասխան կազմակերպել ինտերիերի աշխատանքները⁶: Ինչպես արդեն նշվեց, ի սկզբանե թանգարաններն ամփոփվում էին մասնավոր հավաքածուներում և հասանելի չէին հասարակության լայն շերտերին: Դրանք հիմնականում ամփոփվում էին տաճարներում և դղյակներում, որով էլ պայմանավորված է թանգարանների մասնավորապես տաճարային ճարտարապետությունը: Շատ ուսումնասիրություններ են կատարվել այս ուղղությամբ, որոնց վերլուծության մեծ մասը դրա բացատրությունն է համարում տաճարային՝ դեպի վեհը ձգտող արարողակարգային մոտեցումը՝ զուգահեռներ անցկացնելով կրոնական ծիսակարգի և թանգարան այցելության, կամ թանգարանի արտաքին ձևավորման և տաճարի միջև: Երկու դեպքում էլ շփումը կատարվում է վեհի հետ: Նման մոտեցում է առաջադրում նաև թանգարանների շինությունների առջև շատ հաճախ տեղադրված շատրվանները կամ արձանները, որոնք ասես գեղարվեստական նախերգանք են հանդիսանում դեպի մարդկային կյանքի նոր աշխարհ, այդպիսով սահմաններ դնելով մարդկային առօրյա կյանքի և

⁵«Ժառանգություն» հասարակական կազմակերպություն, «ԻԿՕՄ-ի մասնագիտական վարքագծի կանոնագիրք», Երևան, 2003, էջ 11:

⁶Monti F., Keene S., Museums and Silent Objects: Designing Effective Exhibitions, Burlington, Ashgate Publishing limited, 2013, page 22.

թանգարանների միջև: Դրանք կտրում են մարդուն առօրյա աշխարհիկ կյանքի հոգսերից՝ տանելով դեպի ավելի վեհ ու վսեմ գաղափարներ, ինչպես նաև տեղափոխում մի ժամանակաշրջանից հեռու կամ այլ հեռանկարներ⁷: Ինչպես արդեն նշվեց թանգարանների և հնարավոր այցելուների միջև անջրպետը 19-րդ դարում թերևս ավելի փոքր էր: Այդ ժամանակ Եվրոպայում թանգարանները հասարակության համար առանձնահատուկ դեր ունեին, որն արտացոլում էր իշխանության նկարագիրը, ազգային ինքնության ստեղծումը և լայն զանգվածների կրթական ու բարոյական զարգացումը: Թեև թանգարանները սկզբնապես նախատեսված էին լայն զանգվածներին զարմացնելու և կրթելու համար, շուտով դրանք դարձան միջին դասի մենաշնորհը, ինչը շարունակեց ազդեցություն ունենալ ժամանակի մշակույթի և հանրության վրա⁸:

Վերոհիշյալ բոլոր երևույթներն իրենց բացատրությունն են ստանում թանգարանների տիպերի դասակարգմամբ, որոնք էլ թելադրում են դիզայնի կազմակերպման հետագա ողջ էությունը:

3. Թանգարանների դասակարգումը

Ժամանակակից գիտական դասակարգմամբ թանգարանները տարբերվում են ըստ տիպերի և պրոֆիլների: Ըստ տիպերի լինում են հետազոտական-գիտալուսավորական, հետազոտական և ուսումնական, ըստ պրոֆիլի՝ պատմության, բնագիտության, գեղարվեստական, հուշային, ճարտարապետական, տեխնիկայի: Առանձին խումբ են կազմում կոմպլեքսային թանգարանները: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր թանգարան, ըստ պրոֆիլային առանձնահատկությունների և տիպային նշանակության իր վրա է կրում որոշակի գործառույթներ, որով էլ պայմանավորվում է տվյալ թանգարանի ողջ ինտերիերի դիզայնը: Ուստի և յուրաքանչյուր թանգարան իր նշանակությունից ելնելով պետք է նախագծված լինի համապատասխան գունալուսային, ջերմային, մարդկային հոսքի ուղղորդման և անվտանգության նկատառումներով: Այն միաժամանակ պետք է

⁷ Preziosi D., The Art of Art History: A Critical Anthology, Oxford History of Art, New York, Oxford University Press, 2009, page 473.

⁸ Գիքս Ք., Սանի Մ., Թոմսոն Զ., «Շարունակական կրթությունը թանգարաններում», Եվրոպական ծեռնարկ, Երևան, 2005, էջ 19:

պահպանի ընդհանուր ներդաշնակություն ցուցանմունքների գրագետ ներկայացման և մթնոլորտի ուսուցողական, տեղեկատվական գործառույթներն ապահովելու հարցում: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ յուրաքանչյուր այցելու մուտք է գործում թանգարան իր ակնկալիքներով, և ինտերիերի դիզայնը միակ միջոցն է բավարարելու բոլորի հետաքրքրություններն ու նախասիրությունները⁹:

Ինտերիերի դիզայնի գրագետ լուծումներով հատկապես աչքի ընկնող թանգարանները ստորև ցուցակագրված են ըստ պրոֆիլային դասակարգման.

Գեղարվեստական	1. Լուվր. Փարիզ 2. Փոլ Գեթթի թանգարան. Լոս Անջելես 3. Նորթոն Սայմոնի թանգարան. Փասադենա 4. Էրմիտաժ. Սանկտ Պետերբուրգ
Պատմական	1. Գերմանիայի պատմության թանգարան. Բեռլին 2. Պերգամոնի թանգարան. Բեռլին 3. Եգիպտական թանգարան. Կահիրե
Բնագիտական	1. Բնության պատմության ամերիկյան թանգարան. Նյու Յորք 2. Բնության պատմության թանգարան. Լոնդոն 3. Բնության պատմության թանգարան. Բեռլին
Հուշային	1. Էնթոնի Գաուդիի տուն-թանգարան. Բարսելոնա 2. Մոցարտի տուն-թանգարան. Ավստրիա 3. Միխայիլ Բուլգակովի թանգարան. Մոսկվա
Ճարտարապետական	1. Լե Կորբյուզե հիմնադրամ. Ֆրանսիա 2. Ա. Վ. Շչուսևի անվան ազգային ճարտարապետական թանգարան. Մոսկվա
Կոմպլեքսային	1. Ժորժ Պոմպիդուի կենտրոն. Փարիզ

⁹ Ambrose T., Paine C., ICOM, Museum Basics, New York, Routledge, 1993, page 6.

Վերը նշվածից երևում է, որ յուրաքանչյուր թանգարան ըստ պրոֆիլի պետք է ունենա միանգամայն ուրույն ինտերիերի դիզայն, որով և կապահովվի թանգարանի և այցելուների միջև շփման բոլոր առանձնահատկությունները: Պետք չէ անտեսել նաև այն կարևոր հանգամանքը, որ յուրաքանչյուր թանգարան իր բովանդակային նշանակությունից ելնելով՝ պետք է ունենա իրեն համապատասխան տեղակայումը ընդհանուր քաղաքային միջավայրում, կարևորելով իր դիրքը, հասանելիությունը, ճակատային հորինվածքի համապատասխանեցումը բովանդակային նշանակությանը, մուտքերի գրագետ կազմակերպումը, մարդկային հոսքերի և շարժման գրաֆիկների ընդհանուր հասանելիությունը, կայանատեղիների առկայությունը: Այսպիսով թանգարանային ինտերիերի դիզայնը, կարելի է ասել, որ իրենից ենթադրում է բավականին լուրջ և խրթին նախագծային փուլ, որը արդի հայ իրականությունում երբեմն թերանում է, ելնելով հատկապես այն կարևոր հանգամանքից, որ Երևանի թանգարանների մեծ մասը ի սկզբանե նախագծված չի եղել որպես թանգարան, այլ հետո է տեղակայվել կոնկրետ տրամադրված շինություններում, հարմարեցվելով արդեն գոյություն ունեցող հատակագծային լուծումներին:

4. Թանգարանների հատակագծային հիմնախնդիրները

Յուրաքանչյուր թանգարան նախագծելիս պետք է հաշվի առնել մի շարք առանձնահատկություններ, որոնք վերաբերում են դրա թե՛ ներքին, թե՛ արտաքին հարդարանքին, և թե՛ ընդհանուր քաղաքային միջավայրի կազմակերպմանը: Որպես օրինակ անհրաժեշտ է նշել, որ թանգարաններն իրենց պրոֆիլային պատկանելությունից ելնելով՝ թելադրում են իրենց դիրքը բնակելի միջավայրում: Դա է պատճառը, որ թանգարանների և հատկապես պատկերասրահների մեծ մասը հիմնականում զետեղված է լինում մեծ քաղաքների կենտրոնում, որով ապահովում է հասարակության հետ կապը և հասանելիությունը՝ միաժամանակ շեշտելով իր բովանդակային կարևորությունը: Այսպիսով թանգարանային ինտերիերի դիզայնի մասին խոսելիս անհրաժեշտ է անդրադարձ կատարել դրա կառուցման վայրի նպատակահարմարությանը, և հասանելի դարձնել այն տրանսպորտային միջոցների, զբոսաշրջիկների, մարդկային խմբերի ներգրավվածությանը: Թանգարանները պետք է ապահովեն նաև կանխատեսելի այցելություններին համապատասխան

կայանատեղիներ, երկար ժամանակ թանգարանում ուսումնասիրություններ կատարողների համար նախատեսված հանգստի գոտիներ և այլն: Այսպիսով թանգարանը իրենից ենթադրում է բազմաֆունկցիոնալ մի համալիր, որի գրագետ և ներդաշնակ կազմակերպումը առանցքային պարտականություն է¹⁰:

Այսպիսով թանգարանների տեղակայումը քաղաքային միջավայրում, դրանց տրամադրվող տարածքների չափերը և դիրքը, տրանսպորտային կապերի ապահովման և անվտանգության խնդիրները պետք է լուծվեն տարածքի գլխավոր հատակագծի մշակման և հաստատման ընթացքում:

Հայտնի փաստ է, որ թանգարաններ հաճախում է մարդկանց հոծ զանգված, որի արդյունքում համաշխարհային մեծ նշանակություն ունեցող թանգարաններում, նույնիսկ նախնական հերթագրման դեպքում, հաճախ հերթեր են գոյանում, հետևապես և սպասողների ժամանակի գրագետ կազմակերպումն ու կայանատեղիների ապահովումը առաջնային խնդիրներ են դառնում: Գաղտնիք չէ նաև, որ թանգարան այցելում են ինչպես անհատներ, այնպես էլ զբոսաշրջիկների, աշակերտների և այլ խմբեր, ուստի արտաքին միջավայրում անհրաժեշտություն է դառնում երկու տիպի մեքենաների շարժման և կայանման ապահովումը: Երկրորդ կարևոր նախապայմանը հետիոտների համար ճանապարհների կազմակերպումն է: Երկու դեպքում էլ ճանապարհները պետք է կարճ ուղիներով մոտենան թանգարանին և դուրս գան այնտեղից, հագեցած լինելով տեսողական հաղորդակցության գրագետ և մատչելի լուծումներով: Ինչպես նաև գլխավոր մուտքից բացի, յուրաքանչյուր թանգարան պետք է ունենա առնվազն երկու մուտք, որով հնարավոր կլինի առանց այցելուների հետ շփման կատարել ցուցանմուշների տեղափոխում: Սա նաև կարևոր նախապայման է անվտանգության նկատառումներից ելնելով:

5. Թանգարանային ինտերիերի դիզայնի առանձնահատկությունները

Թանգարանների ինտերիերի դիզայնի առանձնահատկությունների մասնավորումից առաջ անհրաժեշտ է անդրադարձ կատարել դիզայն հորինվածքի ընդհանուր սկզբունքներին: Յուրաքանչյուր դիզայն հորինվածք հիմնվում է ներքին և

¹⁰ Darragh J., Snyder J., Museum Design: Planning and Building for Art, New York, Oxford University Press, 1993, page 25.

արտաքին միջավայրի բովանդակային միասնականության և ներդաշնակության վրա: Ընդհանուր գեղագիտորեն ներդաշնակ կազմակերպված յուրաքանչյուր դիզայն հորինվածք ընդգրկում է ծավալատարածական լուծումների համաչափությունների, ֆակտուրալ, տեքստուրալ, լուսային, գունային և տեխնոլոգիական հնարավորությունների համատեղ մշակումը, նախագծումը և ներկայացումը մեկ միասնական ոճավորմամբ¹¹: Ինչպես արդեն նշվեց թանգարանային ինտերիերի դիզայնը համակարգային գործընթաց է, որն իր մեջ ամփոփում է մի շարք գործառույթներ՝ կախված պրոֆիլային առանձնահատկություններից, տիպային պատկանելությունից և նշանակությունից: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ թանգարանների ինտերիերի դիզայնը հիմնականում կազմակերպվում է պատմաբովանդակային հերթականությունը պահպանելով, դիտողին ընդգրկելով համապատասխան մթնոլորտում: Յուրաքանչյուր թանգարան մուտքը պետք է ուղղորդվի թեմատիկ նախերգանքով, որը սահուն և գրագետ կերպով պետք է կազմակերպի դեպի ներս այցելուների անխոչընդոտ ներթափանցումն ու հետագա ուղղորդիչ միջանցքների կազմակերպումը:

Թանգարանային միջավայրը կարևոր դեր է խաղում ցուցանմուշներն ընկալելու, այցելուների ինտելեկտուալ հետաքրքրասիրությունը բավարարելու, այցելությունների արդյունավետությունը խթանելու գործում: Այն այցելուները, ովքեր իրենց ֆիզիկապես հարմարավետ են զգում թանգարանային տարածքում, ավելի շատ հաճույք են ստանում իրենց այցից, ուստի և գրավում են առավել լայն շերտերի¹²:

Վերջին երեք տասնամյակներում եվրոպական թանգարաններում ինտերիերի դիզայնը զգալի զարգացում է ապրել մի շարք գործոնների պատճառով, որոնցից են նոր նյութերի և տեխնոլոգիաների կիրառումը: 1977թ.-ից սկսած Եվրոպական թանգարանների ֆորումի կողմից կատարվում է ամենամյա հետազոտություն, որը «Տարվա Եվրոպական թանգարան» մրցանակի համար մինչ օրս դիտարկել է ավելի քան 1000 թանգարան՝ գնահատելով նրանց նորարարությունները: Ստորև ներկայացված են որոշ տարրեր, որոնք ցույց են տալիս վերջին տարիներին

¹¹ Հարությունյան Մ., Բեմական նորագույն տեխնոլոգիաների հնարավոր կիրառումը Հայաստանի դիտադահլիճային շինությունների վերակառուցումներում, ՀՀ ԳԱԱ Արվեստի Բնասիտուտ, Երևան, Անտարես, 2016, էջ 83:

¹² Roppola T., Designing for the Museum Visitor Experience, New York, Routledge, 2012, page 12.

թանգարանային միջավայրի զարգացումը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ցուցահանդեսներին ու ցուցադրությունների տեխնիկային:

Այցելուների ֆիզիկական հարմարավետությունը: Թանգարան այցելելը կարող է շատ հետաքրքիր և գրավիչ լինել, բայց ֆիզիկական առումով այն խաճախ հոգնեցնող է: Ցուցանմուշներին կենտրոնացված ուշադրություն դարձնելը և միաժամանակ բավական շատ ինֆորմացիա լսելը, քայլելը և կանգնելը խիստ մտավոր և ֆիզիկական ջանքեր են պահանջում, որը շատերի ամենօրյա վարվելակերպին չի համապատասխանում: Միջին վիճակագրական տվյալների համաձայն այցելուն նման փորձառությունից ուժասպառ է լինում մոտ երկու ժամվա ընթացքում: Հյուրընկալ թանգարանը հանգստի գոտիներ ստեղծելու միջոցով փորձում է նվազագույնի հասցնել նմանատիպ ազդեցությունը՝ օգտագործելով նստարաններ, աթոռներ և դադար առնելու այլ հնարավորություններ՝ համապատասխանեցնելով դրանք ընդհանուր միջավայրի դիզայնին¹³:

Իսլանդիայի Ազգային թանգարանը երկու հետաքրքիր նորարարություն է ներդրել. դրանցից մեկը նստարան է, որի երկու ծայրերին լսափող է ամրացված: Դրա միջոցով կարելի է ձայնագրված տեքստ լսել այնպես, որ այցելուները կարող են հանգիստ շրջվել 180° և կենտրոնանալ սենյակի տարբեր մասերում ցուցադրվող առարկաների վրա: Նույն թանգարանում այցելուները կարող են օգտվել հանգստի սենյակից, որը կահավորված է բարձ, սավան և վերմակ ունեցող մահճակալով: Այն կարող են օգտագործել թանգարանի այցելուները հոգնած լինելիս՝ այն դեպքում, երբ թանգարանն այնքան էլ մեծ չէ:

Այցելուների կողմնորոշումը: Թանգարաններում տեղադրված կողմնորոշիչ ցուցանակները և նշանները նախատեսված են տարբեր տարիքային, սոցիալական, ազգային, մշակութային խմբերի համար և հիմնված են նրանց ուշադրությունը գրավող աուդիո, վիդեո և թվային օժանդակ սարքավորումների վրա: Եթե տեսողական հաղորդակցությունը կատարված լինի ոչ պատշաճ կերպով՝ ցուցասրահների զուգահեռ պատմությունը կարող է դառնալ խրթին և հակառակ արդյունք տալ: Նույն կերպ, թանգարանում չափազանց ուղղորդված շարքով քայլելը կարող է, ըստ էության,

¹³ Chang T., Effects of Design Features on Visitors' Behavior in a Museum, Lawrence, University of Kansas, 2008, page 7.

խոչընդոտել այցելուներին՝ բացահայտելու ցուցանմուշների իրական բովանդակությունը¹⁴:

Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը թանգարանային միջավայրում: Տեխնոլոգիաների կիրառումը թանգարանային միջավայրում ժամանակի ընթացքում կրել է բազում փոփոխություններ: Առավել մեծ թանգարաններում նախ կինոթատրոնների էկրաններ են տեղադրվել, ապա հեռուստացույցներ, վիդեոսարքավորումներ և այլն: Լայնորեն կիրառվող համակարգիչները, այժմ թանգարաններում կարևոր տեղեկատվական և կրթական գործիք են դարձել: Զգայուն էկրանների միջոցով այժմ այցելուները կարող են հեշտությամբ ծանոթանալ տեղեկատվական աղբյուրներին: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ծայնային սարքավորումներ, որոնց միջոցով տարբեր պատմություններ են հաղորդվում թե՛ անհատական, և թե՛ խմբային ուսումնառության հնարավորություններ ստեղծելով¹⁵:

Մանչեսթերի Կայսերական ռազմական թանգարանը, մեծ արդյունավետությամբ օգտագործում է ժամանակակից տեխնոլոգիաներ: Օրինակ՝ պատկերները այստեղ պրոեկտվում են ամբողջ սրահով այնպես, որ այցելուները խորասուզվում են պատկերի և ծայնի մեջ, որի միջով էլ կարողանում են քայլել:

Ուշագրավ ներկայություն: Յուրաքանչյուր թանգարան այցելուներին գրավելու իր միջոցներն ունի, որոնք մասնավորապես բնորոշվում են դրա փիլիսոփայական ռազմավարությունից: Շատ թանգարաններում այժմ լայն կիրառություն ունի անիմատրոնիկան, որն իրենից ենթադրում է մարդու կամ կենդանու նմանությամբ հեռակառավարվող սարքավորում, որը անմիջական շփում է առաջացնում այցելուի հետ: Այսպիսի մոտեցման վառ օրինակ է հանդիսանում Բեռլինի Հաղորդակցության թանգարանը, որտեղ այցելուներին ողջունող ռոբոտները, ինտերիերի ինտերակտիվ մասն են կազմում¹⁶:

¹⁴ Farrelly L., Weddell J., Design Objects and the Museum, London, Bloomsbury Academic, 2016, page 180.

¹⁵ Линдси Д., Все о цвете, Москва, изд. Книжный клуб, 2011, стр. 315.

¹⁶ Preziosi D., The Art of Art History: A Critical Anthology, Oxford History of Art, New York, Oxford University Press, 2009, page 93-96.

6. Ինտերիերի դիզայնի նախագծային գործընթացի կազմակերպումն ու կառավարումը

Ցանկացած տարածքի նախագծման համար նախ և առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել տվյալ տարածքը, աշխարհագրական դիրքը, տեղանքը, հասկանալ աշխատանքի ծավալը, բնույթը, ժամանակային գործոնը, և հիմք ընդունելով կատարված հետազոտությունը՝ ձեռնամուխ լինել բուն նախագծի իրականացմանը, մշտապես առաջնորդվելով տվյալ թանգարանի պրոֆիլային առանձնահատկություններով ու պահանջներով:

Թանգարանային նախագծման գործընթացում անհրաժեշտ է վերլուծել նաև մարդկային հոգեբանության մի շարք կարևոր գործոններ, որոնք թելադրում են այցելուների ներգրավվածությունն ու հետաքրքրությունը: Այսպիսով այցելուն թանգարանին մոտենալիս արդեն պետք է որոշ չափով նախապատրաստվի այն ամենին, ինչ իրեն սպասվում է պատերի ներսում: Ճակատային լուծումների գրագետ կազմակերպումը կարող է նաև հրավիրող գործառույթներ ապահովել: Համաշխարհային թանգարաններից իրենց ճակատային հետաքրքիր լուծումներով աչքի են ընկնում Սալվադոր Դալիի թանգարանը, Բրիտանական ռազմական թանգարանը և այլն: Ճակատների գրագետ կազմակերպմանը հաջորդում է մուտքի նախագծումը, որը պետք է կատարվի հաշվի առնելով հասարակական վայրերում էրգոնոմիկ առանձնահատկությունները: *Մուտքի* նախագծման մեջ կա մի նրբություն՝ միակողմանի կամ երկկողմանի մուտքի և ելքի միանվագ ապահովումը: Մուտքի գոտու կազմակերպումը պայմանականորեն բաժանվում է 2 մասի՝ թանգարանային մուտքից դուրս և ներս: Դրսի հատվածում հիմնական խնդիրը հրավիրող գործառույթն է և մուտքի հարմարավետությունը: Ուստի հաշվի առնելով մարդկային հոսքի քանակը, ինչպես նաև անվտանգության նկատառումները, անհրաժեշտ է առավելագույնս օգտագործել մուտքերի բացվածքները խցանումներից խուսափելու համար: Այսպիսով թանգարանների մուտքերը նախագծելիս ճիշտ կլինի երկփեղկ դռների չափերն ընդունել ոչ պակաս քան 1600x2300մմ, իսկ տարածքային բավարար հնարավորության դեպքում է՛լ ավելի հարմարավետ կլինի մուտքի և ելքի դռների միանգամայն առանձնացումը միմյանցից: Անհրաժեշտ է նշել նաև, որ մտածելու տեղիք է տալիս նաև

մուտքերի դռների հետ շփումը, և հարց է առաջանում արդյո՞ք ճիշտ է, որ այցելուն ինքը բացի դռները, թե հիգիենիկ և հարմարավետության տեսանկյուններից ավելի հյուրընկալ կլինեն ավտոմատացված համակարգով բացվող դռները՝ հաշվի առնելով, որ հասարակական վայրերում միշտ ավելի ճիշտ է նվազեցնել հպումները:

Վերը նշվածից երևում է, որ թանգարան մուտքը հիմնականում առանձնացված է լինում ելքից, սակայն երբեմն տարածքի ոչ բավարար առկայությունը թույլ չի տալիս առանձնացնել մուտքի և ելքի գոտիները, միաժամանակ մեծ վտանգ առաջացնելով անվտանգության և տարհանման տեսակետից: Հաջորդիվ սկսվում է նախասրահը, որի նախագծումը հանդիսանում է թանգարանային ինտերիերի դիզայնի ամենաբարդ մասը, քանի որ այն հանդիսանում է մի շարք գոտիների համակարգող և ուղղորդող օղակ: Նախասրահը հանդիսանալով հրավիրող, ընդունող գոտի, պետք է համապատասխանի թանգարանի ընդհանուր բովանդակությանը, այցելուին ուղղորդի դեպի այն սրահները, ուր սկսված է նրա հետաքրքրությունը, տրամադրի տեղեկատվական ինֆորմացիա և այլն: Նախասրահում հիմնականում կենտրոնանում են տեղեկատվական գոտին, տոմսերի վաճառքի կետը, մուտքերը դեպի ցուցասրահներ, աշխատասենյակներ, դահլիճ, գրադարան, խանութ, սրճարան և այլն: Այսպիսով վերը թվարկվածից երևում է, որ նախասրահ մտնելիս այցելուն արդեն կտրվելով արտաքին աշխարհի առօրեականությունից պետք է ամենամատչելի և արագ կերպով հասնի իր նպատակակետին: Այս գործառույթների համակարգն ապահովելու համար կարևորվում են ինչպես հատակագծային լուծումները, այնպես էլ տեսողական հաղորդակցության հասանելի նախագծումը: Բացի այդ կարևորություն է տրվում թեմատիկ հաջորդականությանը, ըստ որի գոտիների նման համակարգումը պետք է ներդաշնակորեն ընկալվի որպես մեկ ամբողջական հորինվածք, ստանալով տվյալ թանգարանին բնորոշ միջավայր: Հաջորդիվ սկսվում է դեպի ցուցասրահներ ուղիների նախագծումը, աստիճանավանդակների առկայության դեպքում նախագծումն է՝ և ավելի է բարդանում, քանզի մարդկային սովոր հոսքի դեպքում այստեղ կուտակումներից խուսափելը խնդրահարույց է դառնում: Չափազանց մեծ կարևորություն է տրվում առաստաղի լայնության և պատերի բարձրության հարաբերությանը, քանի որ նման հաստատություններում դրանք ճնշող և վտանգավոր տպավորություն կարող են

թողնել¹⁷: Ցուցասրահների նախագծումն իր ուրույն դրսևորումն է ստանում ըստ թանգարանի պրոֆիլային պատկանելության, բայցևայնպես կան մի շարք ընդհանուր դրույթներ, որոնք ընդհանրական են բոլոր դեպքերում: Այսպիսով ցուցասրահներում իրերի դասավորությունը պետք է կազմակերպվի ժամանակաբովանդակային հաջորդականությամբ՝ ունենալով գունային անցումներ և համապատասխան լուսավորություն: Սրահից սրահ անցումը պետք է լինի սահուն, միաժամանակ տարբերվող և թարմություն հաղորդող: Ցուցասրահներում հորինվածքային հիմնական առանձնահատկությունները ծավալվում են թեմային համապատասխան: Ըստ դրա է կազմակերպվում հիմնական դիզայնի ոճը և նախագիծը, սակայն երբեմն տարածքային սահմանափակությունը թույլ չի տալիս լիովին ազատ դիզայներական լուծումներ դրսևորել¹⁸:

Թանգարանային ինտերիերի դիզայնի առանձին մաս են կազմում արխիվային պահոցները և աշխատասենյակները, որոնց հորինվածքները թանգարանի պրոֆիլից կախված կարող են տարբեր լինել: Այնուամենայնիվ արխիվային պահոցների, աշխատասենյակների և այցելուների միջև շփումը պետք է մեկուսացված լինի՝ անվտանգության տեսանկյունից ելնելով (բացառությամբ տեղեկատվական աշխատակազմի): Յուրաքանչյուր ժամանակակից թանգարանի անբաժանելի մասն են կազմում գրադարանը, քննարկումների դահլիճը, հուշանվերների սրահը և սրճարանը: Կարևորվում է նաև սանհիգիենայի գոտու կազմակերպումը, որի տեղակայումը թանգարանի հատակագծում պետք է գրավի ոչ այդքան բացահայտ տեղ և ունենա հասարակական սանհանգույցին բնորոշ բոլոր չափորոշիչները՝ նվազագույնի հասցնելով շփման հնարավորությունները¹⁹:

Թանգարանային դիզայնի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրանց բաղկացուցիչ մասն են կազմում ինտերակտիվ ցուցադրությունները, որոնք է՛լ ավելի են խթանում այցելուների ուշադրությունը՝ թույլ տալով նրանց անմիջական մասնակցություն ունենալ ցուցադրությանը: Եթե նախկինում թանգարանը համարվում էր ուղղակի մի վայր, որտեղ այցելուն պարզպես դիտորդ էր, ապա այժմ նա դառնում է

¹⁷ Уэйншенк С., 100 новых главных принципов дизайна, Санкт-Петербург, изд. Питер, 2016, стр. 28.

¹⁸ Кухта М., Дизайн и технологии, Томск, изд. STT, 2016, стр.68.

¹⁹ Lord G., The Manual of Museum Planning, 2nd edition, Lanham, AltaMira Press, page 116.

մասնակից և ցուցադրության բաղկացուցիչ մաս: Այս երևույթը ժամանակակից թանգարանային մենեջմենթի առանցքային դրույթներից է: Թանգարանի ինտերիերի դիզայնում նաև կարևոր դեր ունեն այնպիսի կրթական ծրագրերի իրականացումը, որոնք նախատեսված են ինչպես մեծահասակների, այնպես էլ դպրոցականների և երեխաների համար: Ուստի բացի նմուշների ցուցադրությունից ինտերիերը պետք է համապատասխանի նաև այդպիսի միջոցառումների և ծրագրերի իրականացմանը: Ողջ թանգարանային ինտերիերի դիզայնը ուղեկցվում է տեսողական հաղորդակցության գրաֆիկական լուծումներով, որոնք տեղեկատվական տվյալներ են փոխանցում ինչպես թանգարանի գոտիների տեղակայման, այնպես էլ ցուցանմուշների մասին²⁰:

7. Թանգարանների ինտերիերի դիզայնը ըստ պրոֆիլների

Ինչպես արդեն նշվել է թանգարանները տարբերվում են ըստ տիպերի և պրոֆիլային ուղղվածության: Յուրաքանչյուր պրոֆիլի թանգարան մատուցում է յուրօրինակ ցուցադրություն, որը պահանջում է համապատասխան ինտերիերի նախագիծ: Հետևապես թանգարանների կոնկրետ օրինակների վերլուծությունը ներկայացնելուց առաջ անհրաժեշտ է հասկանալ, թե ըստ պրոֆիլի ինչ առանձնահատկություններ է կրում ինտերիերի դիզայնը:

Այսպիսով թանգարանները լինում են *գեղարվեստական, պատմական, հուշային, ճարտարապետական, բնագիտական, ռազմական, տեխնիկական և կոմպլեքսային*:

Գեղարվեստական թանգարանները պատկերասրահներ են, որտեղ թեմատիկ հավաքածուներում ամփոփված են գեղարվեստական աշխատանքներ: Այստեղ ինտերիերի հորինվածքը ծավալվում է ցուցասրահներում, որտեղ համապատասխան լուսավորությամբ շեշտվում են գեղարվեստական ցուցանմուշները: Նման թանգարաններում առաջադրված խնդիրները հետևյալն են. գեղարվեստական աշխատանքների ջերմալուսային անվտանգությունը, յուրաքանչյուր աշխատանքի ուղղորդված լուսավորումը ընդհանուր միջավայրում, համապատասխան մասնագիտական խմբերի հետազոտությունների համար միջավայրի ապահովումը,

²⁰ Jacobson R., Information Design, Massachusetts, First Mit Press, 2000, page 131.

գունային հարաբերությունների այնպիսի մատուցումը, որը մեկ ցուցասրահում բազմաբնույթ աշխատանքների համար լինի ընդհանրական և միաժամանակ չեզոք դեր խաղա՝ չխոչընդոտելով յուրաքանչյուր աշխատանքի գույների ճիշտ ընկալմանը:²¹ Կարևոր դեր ունեն նաև շրջանակների համապատասխանությունը և դրանց աչքի հորիզոնի նկատմամբ ճիշտ բաշխվածությունը, որը տարաչափ աշխատանքների դեպքում պետք է չխաթարի ընդհանուր ներդաշնակությունը: Պետք չէ մոռանալ նաև տարամասշտաբ արձանների ցուցադրման և ցուցափեղկերի դիզայնի մասին, որոնք ևս թելադրում են լուսաստվերի փոխհարաբերության ճիշտ մատուցում: Բոլոր թանգարանների դեպքում կարևոր հանգամանք է մարդկային հոսքի ճիշտ ուղղորդումը, որը թելադրվում է այցելուին ըստ նրա քմահաճույքի նպատակակետին հնարավորինս հեշտ հասնելու համար: Կարևոր են նաև դադարի և հանգստանալու գոտիների ապահովումը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում առանձին աշխատանքի առջև կենտրոնանալու հնարավորությունը: Առանձին նշանակություն ունի նաև մուտքի և նախասրահի դիզայնը, որը պետք է ուղղորդող, ճանաչողական նախերգանք հանդիսանա յուրաքանչյուր ցուցասրահի և ինչու՞ ոչ թանգարանի համար²²:

Պատմական թանգարաններում ցուցադրվում են որևէ դարաշրջանին կամ երևույթին առնչվող նմուշներ, որոնք վկայում են պատմական տարբեր երևույթներ, իրադարձություններ կամ ցուցադրում պատմամշակութային արժեք ունեցող նմուշներ: Այստեղ կարևորվում է ինչպես իրերի պահպանման պայմանների ապահովումը, այնպես էլ գունալուսային այնպիսի հարաբերությունները, որոնք փոքր ու ոչ լրիվ պահպանված հնամաշ իրերն առավել կշեշտի և ուշադրության արժանի կդարձնի: Յուրաքանչյուր ժամանակաշրջան ևս իր ցուցադրման յուրահատկությունն ունի, որը չաղճատելով հորինվածքի ամբողջականությունը, պետք է պահպանի յուրաքանչյուր նմուշի յուրօրինակությունն ու ոգին: Պատմական թանգարաններում ցուցանմուշները սովորաբար լինում են ամենատարբեր բնույթի և չափերի, ուստի դրանց գրագետ

²¹ Ревякин В. , Художественные музеи, справ. пособие, Москва, Стройиздат, 1991, стр. 179.

²² Self R., The Architecture of Art Museums: A Decade of Design: 2000 – 2010, New York, Routledge, 2014, page 70.

մատուցումից բացի անհրաժեշտություն է առաջանում յուրաքանչյուրի համար ստեղծել համապատասխան ջերմախոնավային պայմաններ: Բացի այդ պատմական թանգարաններում հիմնականում ինտերիերը նախագծվում է այնպես, որ յուրաքանչյուր այցելու կարողանա հոգեպես տեղափոխվել տվյալ ժամանակաշրջան և դառնալ ցուցադրության անմիջական մասնակիցը: Այսպիսի թանգարաններում ևս մեծ նշանակություն ունեն տեսողական հաղորդակցության գրաֆիկական լուծումները և դրանց տեղակայումը ընդհանուր միջավայրում, ինչպես նաև տեղեկատվական վահանակների, բացատրական ծանոթագրությունների ընթեռնելի, մատչելի մատուցումը:

Բնագիտական թանգարաններում ցուցադրվում և պահպանվում են բուսական, կենդանական, կենսաբանական յուրահատուկ արժեք ներկայացնող տեսակներ, որոնց կից հիմնականում կատարվում են գիտական ուսումնասիրություններ և փորձեր: Այս ամենը պահանջում է յուրահատուկ դիզայներական մոտեցում: Յուրաքանչյուր նմուշ պահպանման համար պահանջում է տարաբնույթ բնական պայմաններ, որոնք բարդ խնդիր են առաջացնում դիզայնում: Այսպիսով ինտերիերի դիզայնը պետք է ապահովի ինչպես յուրաքանչյուր ցուցանմուշի անհատական ջերմալուսային, բնական պահանջները, այնպես էլ ապահովի ընդհանուր միջավայրային ներդաշնակությունը: Այսպիսի թանգարաններում, ինչպես նշվեց նաև գիտական ուսումնասիրություններ և փորձեր են կատարվում, որը ևս ցուցանմուշների մատուցման դիզայնի վրա անմիջական ազդեցություն է ունենում: Այստեղ ևս, ինչպես յուրաքանչյուր թանգարանում, անհրաժեշտ է դառնում ճիշտ կազմակերպել մուտքի գոտին, որով պետք է բացահայտվի ներքին բովանդակությունը, ինչպես նաև պետք է ապահովվի մարդկանց ճանաչողական, տեղեկատվական գործառույթներ: Այսպիսի թանգարաններին կից սովորաբար լինում են նաև ինստիտուտներ՝ հարակից լաբորատորիաներով: Բնագիտական թանգարաններում նմուշները հիմնականում դասակարգվում են կենդանականի և բուսականի՝ արտահայտելով ֆլորայի և ֆաունայի նշանակալի տեսակների առանձնահատկությունները:

Տեխնիկական թանգարաններում ցուցադրվում են տեխնիկայի տարբեր միջոցներ: Հատկանշական են տրանսպորտային միջոցների ցուցադրությունները,

որոնք երբեմն իրենց հսկայական չափերի պատճառով պահանջում են մեծ տարածքներ: Այսպիսի մոնումենտալ ցուցադրություններում կարևորվում է հատկապես մարդու և ցուցանմուշի միջև անհատական շփման հնարավորությունը, որով առավել անմիջական միջավայրային փոխհարաբերություն է ստեղծվում: Այստեղ ինտերիերի դիզայնի հասկացողությունը հարաբերական բնույթ է կրում և առավել պարզեցված է, քանի որ չի պահանջում յուրահատուկ ջերմային, լուսային կամ կլիմայական պայմաններ իրերի անվտանգությունն ապահովելու համար: Այստեղ առավելապես կարևորություն է տրվում ժամանակաբովանդակային համապատասխանությանը ընդհանուր համակարգի մեջ:

Հուշային թանգարանը հիմնականում որևէ հեղինակի տունն է հանդիսանում, որտեղ ինտերիերի դիզայնը գրեթե փոփոխության չի ենթարկվում: Այստեղ առանցքային խնդիրը տվյալ հեղինակի կենդանության և ժամանակի շունչը պահպանելն ու հաղորդելն է: Նույնիսկ որոշ չափով թափթփված աշխատանքային միջավայրն առավել շեշտում է այդ զգացողությունը: Սակայն այս ամենի հետ մեկտեղ լինում են հուշային թանգարաններ, որտեղ առանձին ոչ բնակելի սրահներում կազմակերպվում են ցուցահանդեսներ, կինոդիտումներ, քննարկումներ և այլն:

Ճարտարապետական թանգարաններում կազմակերպվում են ինչպես մշտական այնպես էլ ժամանակավոր ցուցահանդեսներ: Հիմնականում ցուցանմուշների տեսքով ներկայացվում են պլանային գծագրեր, ճակատային հորինվածքներ և մանրակերտեր: Այստեղ դիզայնի և լուծումները պետք է տրված լինեն առավելապես սրելու և կենտրոնացնելու դիտողի ուշադրությունը հստակ կոնկրետ գծագրերի ճշգրտության և ծավալատարածական լուծումները շեշտելու ուղղությամբ: Այսպիսի թանգարաններում կատարվում են նաև հետազոտություններ:

Կան նաև *կոմպլեքսային*՝ համակարգային թանգարաններ, որտեղ մեկ ցուցադրությունում համակարգված են տարաբնույթ նմուշներ: Օրինակ՝ թատրոնի, կինոյի և գրականության: Այսպիսի թանգարաններում առավելապես ինտերիերի լուծումների միջոցով է թելադրվում մեկ միջավայրից մյուսին սահուն անցումը, որով և թելադրվում են բովանդակային տարբերությունները:

8. Թանգարանների միջազգային կարևորագույն օրինակներն ու զուգահեռները

Երևանի թանգարանների ինտերիերի դիզայնի մասնագիտական ուսումնասիրության համար մեծ կարևորություն ունի միջազգային ներքոհիշյալ փորձի ներդրումը, որպեսզի դրա լույսի ներքո հնարավոր լինի ճշգրտությամբ մշակել կամ զարգացնել այն: Թեև Հայաստանը հարուստ է մշակութային խոշոր արժեք ներկայացնող ցուցանմուշներով, սակայն դրանց մատուցումը, այնուամենայնիվ, ունի արդիականացման կարիք: Վերջին տարիներին Երևանում բացվեցին մի շարք նոր թանգարաններ, հենրից շատերն էլ վերանորոգվեցին, բայց թվային հարաբերությամբ դրանք շատ փոքր մաս են կազմում և վերստին ունեն վերանայման կարիք:

Ինտերիերի դիզայնի միջազգային լավագույն լուծումներ ունեցող թանգարաններին անդրադառնալուց առաջ անհրաժեշտ է ցուցակագրել այն բոլոր թանգարանները, որոնք ունեն առավելագույն տարեկան այցելությունների թիվ.

Թանգարան	Քաղաք	Երկիր	Այցելությունների տարեկան թիվը	Ցուցանմուշների քանակը	Մակերեսը
Լուվր	Փարիզ	Ֆրանսիա	9.260.000	350.000	60.600մ ²
Չինաստանի ազգային թանգարան	Պեկին	Չինաստան	7.530.000	1.050.000	200.000մ ²
Բնության պատմության ազգային թանգարան	Վաշինգտոն	ԱՄՆ	7.300.000	126.000	123.000մ ²
Բրիտանական թանգարան	Լոնդոն	Անգլիա	6.701.043	8.000.000	75.000մ ²
Օդային և տիեզերական ազգային թանգարան	Վաշինգտոն	ԱՄՆ	6.700.000	60.000	71.000մ ²
Ազգային պատկերասրահ	Լոնդոն	Անգլիա	6.416.724	2300	46.396մ ²

Մետրոպոլիտեն արվեստի թանգարան	Նյու Յորք	ԱՄՆ	6.162.147	2.000.000	200.000մ ²
Վատիկանի թանգարան	Վատիկան	Վատիկան	5.891.332	100.000	67.002մ ²
Թեյթ մոդեռն	Լոնդոն	Անգլիա	5.785.427	70.000	242.000մ ²
Ազգային Փալաս թանգարան	Թայվեյ	Թայվան	5.402.325	696.000	50.000մ ²
Ազգային պատմության թանգարան	Լոնդոն	Անգլիա	5.388.295	80.000.000	1000մ ²
Բնության պատմության ամերիկյան թանգարան	Նյու Յորք	ԱՄՆ	5.000.000	100.000	190.000մ ²
Շանհայի գիտության և տեխնիկայի թանգարան	Շանհայ	Չինաստան	440.000.000	14 .000	98.000մ ²
Ամերիկայի պատմության ազգային թանգարան	Վաշինգտոն	ԱՄՆ	400.000.000	3.300.000	750.000 մ ²
Ազգային պատկերասրահ	Վաշինգտոն	ԱՄՆ	3.892.459	14.000	113.900մ ²
Կորեայի ազգային թանգարան	Սեուլ	Հյուսիսային Կորեա	3.536.677	7790	295.951մ ²
Օրսեյի թանգարան	Փարիզ	Ֆրանսիա	3.500.000	2600	20.000մ ²

Պոմպիդու կենտրոն	Փարիզ	Ֆրանսիա	3.450.000	100.000	103.305մ ²
Գիտության թանգարան	Լոնդոն	Անգլիա	3.356.072	300.000	700.000մ ²
Վիկտորիա և Ալբերտ թանգարան	Լոնդոն	Անգլիա	3.180.450	4.500.000	51.000 մ ²

Վերը նշված ցուցակագրությունից երևում է, որ հասարակության լայն շերտերի համար առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում գեղարվեստական թանգարանները: Դրա բացատրությունը կարելի է գտնել նրանում, որ արվեստի նկատմամբ հետաքրքրությունը առավել լայն տարածում ունի՝ ի տարբերություն մյուս պրոֆիլի թանգարանների, որոնք հաճախ պահանջում են մասնագիտական վերաբերմունք²³:

Թեև տվյալ աղյուսակում ցուցակագրված են առավել շատ այցելություններ ունեցող թանգարանները, սակայն դա չի նշանակում, որ դրանք ինտերիերի դիզայնի առումով լավագույն լուծումներով են հագեցած: Թանգարանները և դրանց դիզայնը չափազանց բազմազան են: Ինչպես փորձը ցույց է տալիս, միմյանց միջև շատ ընդհանրություններ ունենալուց բացի, թանգարաններն ունեն նաև իրարից հիմնովին տարբերվող մոտեցումներ՝ կախված ցուցանմուշների առանձնահատկություններից, ռազմավարությունից, փիլիսոփայությունից և պրոֆիլային պատկանելությունից: Փաստորեն, Երևանի թանգարանների ինտերիերի դիզայնը հասկանալու համար, ի հավելումն ուսումնասիրված ընդհանուր դրույթների, ստորև կներկայացնենք թանգարանների ներքոհիշյալ նախագծամեթոդական միջոցառումները:

²³ Аксенова М., Музеи мира, Москва, изд. Мир энциклопедий, 2011, стр. 96.

Թանգարանների նախագծման հիմնական նպատակն է այցելուների համար ապահովել հարմարավետություն, գրավչություն, տարածքի արդյունավետ օգտագործում, ցուցանմուշների գրագետ մատուցում ու անվտանգություն: Թանգարանների ինտերիերի դիզայնի տեխնոլոգիական նախագծումը պետք է համապատասխանի էրգոնոմիկայի, գունային հոգեբանության, շարժման գրաֆիկների, տեսողական հաղորդակցության, անվտանգության բոլոր պահանջներին:

9. Թանգարանների ինտերիերի նախագծման փուլերը

Թանգարանների ինտերիերի դիզայնի նախագծման *առաջին փուլը* հատակագծի գոտևորումն է ըստ նախատեսված բաժինների: Ինչպես արդեն նշվել է թանգարանների ինտերիերը հիմնականում ճիշտ է բաժանել հետևյալ գոտիների. մուտք, նախասրահ, տեղեկատվական սրահ, աշխատասենյակներ, արխիվ, ցուցասրահներ, դահլիճ, գրադարան, հուշանվերների խանութ, սրճարան, սանհանգույց, ելք: Վերը նշված գոտևորման դրույթները ընդհանրական են բոլոր թանգարանների ինտերիերի դիզայնի գրագետ կազմակերպման համար՝ անկախ պրոֆիլային առանձնահատկություններից: Փորձը ցույց է տալիս, որ նման գոտևորումը և բաժանումը հաճախ մեծ մակերեսներ է պահանջում, ուստի շատ թանգարաններ սահմանափակվում են միայն հիմնական գոտևորմամբ. մուտք, նախասրահ, ցուցասրահներ, արխիվ, սանհանգույց, ելք: Այսպիսի գոտևորումը հատկապես շահեկան է այն թանգարանների համար, որոնք իրենց տեղն են գտել ոչ նպատակային կառուցված շինություններում՝ հարմարեցնելով իրենց ինտերիերի դիզայնը արդեն գոյություն ունեցող հատակագծերում՝ դրանցում չնչին փոփոխություններ մտցնելով: Երևանի թանգարանների մեծ մասը ունի այս խնդիրը և դրա լուծումը հիմնականում պետք է գտնել ինտերիերի հատակագծային, գունալուսային, գրաֆիկական միջոցներով: *Երկրորդ փուլը* մուտքի և նախասրահի կազմակերպումն է, որտեղ անհրաժեշտաբար տեղադրված են լինում տեղեկատվական գոտիները, որոնց էլ հաջորդում է մուտքը դեպի ցուցասրահներ՝ ուղղորդվելով միջանցքերով կամ հենց սրահից սրահ անխոչընդոտ ներթափանցմամբ: Նախասրահի ինտերիերի կազմակերպման մեջ կա մեկ առանձնահատկություն. թանգարանի աշխատողների

համար նախատեսված գոտին ցանկալի է որոշ չափով մեկուսացված լինի հասարակության հետ շփման հնարավորությունից, ուստի տարածքի առկայության դեպքում նախընտրելի է արխիվային աշխատասենյակների մուտքերը միանգամայն մեկուսացնել՝ բացառելով ելքը դեպի նախասրահ, որտեղ սովորաբար կուտակվում է այցելուների հոծ բազմություն²⁴:

Թանգարանների ինտերիերի դիզայնի կազմակերպման *երրորդ փուլը* ցուցասրահների դիզայնն է: Քանի որ յուրաքանչյուր այցելու մտնում է թանգարան հենց ցուցասրահներում իր հետաքրքրությունները բավարարելու, ուստի և դրանց գոտևորումը առանցքային է յուրաքանչյուր թանգարանի համար: Այստեղ հիմնականում ճիշտ է առաջնորդվել ցուցանմուշների ժամանակաբովանդակային հաջորդականությամբ՝ հաշվի առնելով նմուշների բնույթը, տեսակը, թեման, խորհուրդը՝ ինտերիերում համապատասխանաբար գունային և տեխնիկական լուծումներ տալով: Ցուցասրահներում պետք է հաշվի առնել նաև նմուշների պահպանման ջերմալուսային պահանջները և անվտանգությունը: Սրահների միջև հերթափոխային անցումը ևս բովանդակային հաջորդականությունից ելնելով պետք է կրի փոփոխություններ՝ թարմություն մտցնելով միապաղաղ երթին: Ցուցասրահներում ինֆորմացիան հիմնականում ծավալուն է լինում, որի ընկալումը ֆիզիկապես և հոգեպես բավականին մեծ խնդիրներ է առաջացնում յուրաքանչյուր այցելուի համար, այդ իսկ պատճառով այստեղ ևս պետք է լինեն դադարի, հանգստի գոտիներ: Կարևորվում է նաև հակահրդեհային պաշտպանության կանոններով համապատասխանող տարիանման ելքերի գրագետ կազմակերպումը: *Չորրորդ փուլը* հարակից գոտիների՝ սրճարանների, դահլիճների, վաճառքի սրահների տեղակայումն ու կազմակերպումն է: *Հինգերորդ փուլը* սանհանգույցի նախագծումն է, որը պետք է տարանջատված լինի այցելուների և աշխատակիցների օգտագործման համար: Սանհանգույցը պետք է նախագծված լինի էրգոնոմիկ տեսանկյունից բոլոր պահանջներին համապատասխանելով՝ ունենալով նաև հաշմանդամների համար նախատեսված հատուկ պայմաններ: *Վեցերորդ փուլը* ելքի նախագծումն է, որը տարածքի առկայության դեպքում պետք է տարբեր լինի այցելուների և

²⁴ Macleod S., Reshaping Museum Space: Architecture, Design, Exhibitions, New York, Routledge, 2005, page 39.

աշխատակիցների համար: Անվտանգության նկատառումներից ելնելով արժեքավոր ցուցանմուշների տեղափոխումը ուղղակիորեն անթույլատրելի է բազմության միջով: Ելքերի նախագծումը ևս պետք է լինի էրգոնոմիկ կանոններին համապատասխան՝ հաշվի առնելով օրական միջին այցելությունների թիվը, այն պետք է ապահովի այցելուների առանց կուտակումների ազատ ելքը և անվտանգության նկատառումներից ելնելով ունենա հսկիչ տեխնիկական սարքավորումներ²⁵:

Նախագծային գործընթացը անհրաժեշտ է սկսել ցուցանմուշների նախնական ուսումնասիրությունից, ինչը թույլ կտա սահմանել տարածքները և օժանդակ, վարչական գոտիները՝ համապատասխան մակերեսներով: Հաջորդաբար պետք է մշակվի այցելուների շարժի սխեման և համապատասխան գոտիների տեղակայումը՝ ըստ առանձին բաժինների: Փորձը ցույց է տալիս, որ հոգեբանական տեսանկյունից ելնելով մարդկային հոսքը նպատակահարմար է ուղղել ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ: Մարդկային հոսքի ճիշտ կազմակերպումը հնարավորություն է ընձեռում լուծել շատ ֆունկցիոնալ և գեղագիտական հարցեր: Թանգարաններում գոտիների, բաժինների և սրահների տեղակայումը իրականացվում է այնպես, որ դրանք ներդաշնակորեն լրացնելով միմյանց, ընկալվեն որպես մեկ ամբողջական համալիր, առաջնորդվեն տրամաբանական հաջորդականությամբ՝ դիտողին ապահովելով առավելագույն հարմարավետությամբ, նվազեցնելով ֆիզիկական և հոգեբանական ծանրաբեռնվածությունը²⁶: Յուրաքանչյուր թանգարանի նախագծում պետք է նախատեսվի հաշմանդամների կողմից ազատ տեղաշարժը: Թանգարանների նախագծման գործընթացում ի հայտ են գալիս մի շարք խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ է ճարտարապետների, ինժեներների, դիզայներների և թանգարանագետների համատեղ թիմային աշխատանքը: Ինչ վերաբերում է բուն ինտերիերի ձևավորմանը, ապա գլխավոր և առաջնային դերը տրվում է ֆունկցիոնալիզմին՝ առաջնորդվելով թանգարանի գաղափարախոսությունից և արտահայտվելով համապատասխան գեղարվեստական միջոցներով:

²⁵ Crimm W., Morris M., Wharton C., Planning Successful Museum Building Projects, Lanham, Rowman Altamira, 2009, page 55.

²⁶ Иконников А., Степанов Г., Основы архитектурной композиции, Москва, изд. Искусство, 1971, стр. 58.

Թանգարանների ինտերիերի նախագծման գործընթացը կազմակերպելիս միշտ պետք է հիշել, որ առաջին հերթին դրանցից յուրաքանչյուրն ունի իր ճարտարապետական պլանը, որին անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել: Ինչպես արդեն նշվել է ինտերիերի դիզայնը համալիր գործընթաց է, որը վերաբերում է տարածքի գոտևորմանը, լուսավորությանը, էրգոնոմիկ, գունային, տեքստուրալ համադրություններին, կահավորմանը և այլն: Ուստի թանգարանների ինտերիերի դիզայնի մասին խոսելիս անհրաժեշտ է քննարկել վերոհիշյալ կետերից յուրաքանչյուրը:

Թանգարանների լուսավորությունը

Թանգարանային ինտերիերի դիզայնում չափազանց մեծ կարևորություն ունի լուսավորությունը: Այստեղ պրոֆիլային առանձնահատկություններից ելնելով պահանջները տարբեր են, սակայն այնուամենայնիվ, ցրված լույսի օգտագործումը լայն տարածում ունի, որը համատեղվում է ցուցափեղկերում նմուշների համար նախատեսված օժանդակ ուղղորդված լուսավորության հետ: Թանգարանային լուսավորությունն ապահովելու համար ժամանակակից ընկերություններից շատերը արտադրում են համապատասխան պրոֆեսիոնալ ուղղորդող լույսեր, որոնք բացառապես անվտանգ են ցուցանմուշների պահպանության համար: Մասնագետները պնդում են, որ ճիշտ ընտրված լույսը կարող է լուծել շատ խնդիրներ:²⁷

Լուսավորության մյուս առանձնահատկությունը հատկապես արտահայտվում է գեղարվեստական թանգարաններում: Այստեղ հանգամանորեն պետք է հաշվի առնել ապակեպատ շրջանակներով փակցված նկարների փայլի և արտացոլանքների առկայությունը, ինչպես նաև լուսավորությունը մշտապես պետք է պահպանի դրանց բնական գույները՝ երբեք թույլ չտալով դրանց աղավաղումը: Արտացոլանքները պետք է հաշվի առնվեն նաև տարաբնույթ ցուցափեղկերի պարագայում՝ այցելուների դիտակետից ելնելով:

Լուսավորությունը իր ուրույն լուծումն է պահանջում նաև քանդակների ցուցադրություններում, որտեղ առավելագույն կերպով հարկ է շեշտել լուսաստվերի նրբին անցումներն այնպես, ինչպես վարպետներն են նախատեսել տվյալ

²⁷ Gautrand M., Museum Architecture and Interior Design, Hong Kong, Design Media Publishing Limited, 2014, page 138.

աշխատանքը կերտելիս: Լուսավորության առանձնահատուկ պահանջներ կան նաև ճարտարապետական թանգարաններում, որտեղ գծագրերի կողքին հիմնականում ցուցադրվում են սպիտակ մանրակերտեր: Դրանց գրագետ լուսավորումը հնարավորություն է տալիս ճիշտ ընկալել կառույցների ծավալային լուծումները, որը չափազանց կարևոր հանգամանք է տվյալ պարագայում:

Տարատեսակ ցուցանմուշների համար անհրաժեշտ է օգտագործել իրարից տարբեր լուսավորության համակարգեր: Օրինակ՝ այն լամպերը, որոնք նախատեսված են ցուցափեղկերում առկա քանդակների ցուցադրման համար, չեն կարող օգտագործվել բնագիտական թանգարաններում հատուկ ջերմալուսային պայմաններ պահանջող բուսականության համար:

Վերը նշվածից կարելի է հանգել եզրակացության, որ թանգարանում յուրաքանչյուր գոտի պահանջում է առանձնահատուկ լուսավորության համակարգ, որն այնուամենայնիվ, պետք է պահպանի համալիրի հորինվածքային ամբողջականությունը²⁸:

Թանգարանների կահավորումը

Թանգարանները առաջին հերթին կոչված են մեծարժեք իրերի պահպանման, ապա դրանց ցուցադրման համար: Այդ իսկ պատճառով թանգարանային ինտերիերի նախագծման առաջնային կարևորությունը պետք է տրվի հենց դրանց պահպանության համար նախատեսված հարմարություններին: Այսպիսով ցուցափեղկերի, պատվանդանների նախագծումը բավականին մեծ կարևորություն ունի դիզայնի ողջ կոնտեքստում:

Էրգոնոմիկ տեսանկյունից ելնելով պետք է հաշվի առնել, որ յուրաքանչյուր նմուշ, իր կարևորությունը շեշտելով, պետք է տեղադրված լինի դիտակետին համապատասխան ուղղու վրա: Այստեղից կարելի է հանգել հետևության, որ յուրաքանչյուր իր, կախված չափերից ու տեսակից, պետք է տեղադրված լինի տարբեր բարձրություն, լայնություն, խորություն և ընդհանուր գաբարիտային կառուցվածք ունեցող ցուցափեղկերում: Ավանդական ցուցափեղկերի տիպերը հիմնականում լինում են ուղղահայաց և հորիզոնական դիտման համար նախատեսված: Օրինակ հուշային

²⁸ Bogle E., Museum Exhibition planning and Design, Lanham, AltaMira Press, 2013, page 40.

ցուցանմունքները, հայտնի մարդկանց հագուստը հիմնականում տեղադրվում են ուղղահայաց ցուցափեղկերում, իսկ հաստափոր ձեռագիր մատյանները, պատառիկները հիմնականում տեղադրվում են հորիզոնական ցուցափեղկերում: Այս լուծումը ինտերիերի դիզայնի տեսակետից բավական դրական ազդեցություն է ունենում այցելուների վրա, քանի որ զերծ է պահում միապաղաղությունից, թույլ տալով, որ դիտողի հայացքը սահուն անցում կատարի վերից վար հաջորդականությամբ և հակառակը: Թեև թանգարանների կահավորումն առաջին հայացքից սահմանափակվում է ցուցափեղկերի դիզայնով, սակայն չպետք է մոռանալ մյուս կարևոր մոդուլների մասին, որոնք ապահովում են թանգարան այցելության ողջ համակարգը: Ցուցասրահների կահավորումը պետք է վերաբերի նաև հանգստի գոտիների կազմակերպմանը, քանի որ թանգարաններում անընդհատ սրահից սրահ քայլելը մեծ ֆիզիկական ջանքեր է պահանջում և յուրաքանչյուր այցելու դադարի կարիք է զգում: Այդ գործառույթը հիմնականում բոլոր թանգարաններում կազմակերպվում է ցուցասրահների մեջտեղում տեղադրված երկկողմանի օգտագործման նստարանների միջոցով: Դրանք թույլ են տալիս միաժամանակ և՛ դադար առնել, և՛ չլքելով սրահը ուսումնասիրել ցուցանմունքները: Այս լուծումը ամենապարզ և մատչելին է թանգարանների կահավորման մեջ, ուստի և լայն տարածում ունի:

Կահավորման մեծ մասը հիմնականում կուտակված է լինում նախասրահում, որտեղ տեղադրված են լինում թվային ինտերակտիվ, տեղեկատվական սարքավորումները, տեղեկատվական պահարանները, որտեղից կարելի է վերցնել թռուցիկներ, բուկլետներ կամ կողմնորոշիչ քարտեզներ: Նախասրահի կահավորման մեծ մասը հիմնականում բոլոր թանգարաններում հատկացվում է տեղեկատվական գոտուն, որը բաժանվում է ընդհանուր նախասրահից սեղան հիշեցնող կահավորմամբ, որի հակադարձ կողմում աշխատակիցների կողմից կատարվում են տեղեկատվական, ուղղորդման և տոմսավաճառության գործառույթները²⁹: Ցուցափեղկերի նախագծման կարևոր պայմաններից է դրանցում յուրօրինակ ջերմալուսային սարքավորումների ներկառուցումը: Այս մոտեցումը լայնորեն կիրառելի է հին ձեռագրատներում,

²⁹ Գիբս Բ., Սանի Մ., Թոմսոն Զ., «Շարունակական կրթությունը թանգարաններում», էջ 82:

քնագիտական թանգարաններում, ինչպես նաև հին գտածոներ, մասունքներ ամփոփող թանգարաններում: Հաստատուն ջերմային պայմաններ են պահանջում նաև կտավները: Այս խնդիրը լուծելու համար ևս կարող է օգտագործվել օդափոխության համակարգի գրագետ մշակում³⁰:

Ինչպես արդեն նշվեց յուրաքանչյուր թանգարան նախագծվում է հաշվի առնելով նաև հաշմանդամների օգտագործումը, ուստի կահավորման ընդհանուր համակարգը պետք է նրանց համար ևս հարմարավետ լինի:

Այսպիսով կահավորման մասին խոսելիս պետք է հաշվի առնել ինչպես ցուցանմուշների առանձնահատկությունները, այնպես էլ դրանց նյութերի ու գունային հարաբերությունները, որոնք սերտորեն կապի մեջ պետք է լինեն թանգարանի ընդհանուր փիլիսոփայության, ոճի և հորինվածքի հետ:

Տեսողական հաղորդակցությունը թանգարաններում

Թանգարանային ինտերիերի դիզայնի անբաժանելի մասն են կազմում տեսողական հաղորդակցության գրաֆիկական լուծումները: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ մեծ թանգարաններ այցելելիս մարդիկ հիմնականում ուղղորդվում են այն սրահներ, որոնք իրենց հետաքրքրում են: Բացի այդ կան թանգարաններ, որոնց ամբողջական դիտումը պահանջում է շատ երկար ժամանակ, նույնիսկ մի քանի օր, ուստի այցելուն պետք է կարողանա ճիշտ կողմնորոշվել տարածության մեջ, որպեսզի հեշտությամբ գտնի իր նպատակակետը:

Մարդկային տեսողական ապարատը բավականին բարդ կառուցվածք ունի, և ուշադրություն սևեռելու համար հիմնականում օգտագործվում են կոնտրաստային համադրությունները, ինչպես նաև խորհրդանշական մինիմալիստական լուծումները: Ուշագրավ է այն կարևոր հանգամանքը, որ նախատեսված լինելով հասարակության լայն շերտերի և ամենատարբեր ազգությունների համար, թանգարաններում տեսողական ուղղորդումը պետք է իրականացվի ոչ միայն տեքստային, այլև գրաֆիկական լուծումներով: Թանգարաններում վերոհիշյալ ուղղորդիչ նշանների մշակումը պետք է առաջնորդվի թե՛ ընդհանուր ոճավորման առանձնահատկություններով, թե՛ բաժիններին ամենաբնորոշ խորհրդանիշների

³⁰ Володина Е., Материаловедение для дизайнеров интерьеров, Том 1, изд. Москва, Издательские решения, 2015, стр. 62.

գրաֆիկական սիմվոլիկ մշակմամբ: Ընդհանրապես տեսողական հաղորդակցության սահմաններում նախընտրելի են կոնտրաստային գույների՝ սևի, սպիտակի, եզրագծային և գունային լուծումների հնարավոր տարբերակների համադրումը³¹:

Այսպիսով թանգարանի նախասրահում տեղադրվում են տեսողական ուղղորդիչ նշանների մեծ մասը, քանի որ հենց այստեղից այցելուն պետք է ճիշտ կողմնորոշվի նպատակակետին հասնելու համար: Օրինակ՝ զբոսաշրջիկների մեծ մասը այցելում է Լուվր գլուտ Մոնա Լիզան կամ Միլոսյան Վեներան տեսնելու, չնայած որ այնտեղ ցուցադրված են անհամար մեծարժեք աշխատանքներ:

Ուղղորդիչ նշանների առանձին խումբ են կազմում դեպի մուտք և ելք ուղղորդիչները, որոնք թեև իրենց ոճավորումով ընդհանրական են, սակայն կարող են ունենալ այլ ծավալային կառուցվածք: Այս լուծումներով պետք է լինեն նաև դեպի սանհանգույց ուղղորդիչ նշանները: Միևնույն գրաֆիկական ոճավորումով, բայց տարբերվող լուծումներով անհրաժեշտ է առանձնացնել նաև դահլիճի, հուշանվերների խանութի, գրադարանի և սրճարանի գրաֆիկական խորհրդանիշները: Առանձնակի շեշտակիություն չեն պահանջում արխիվների և աշխատասենյակների ուղղորդիչ նշանները, քանի որ դրանք չպետք է հասանելի լինեն յուրաքանչյուր այցելուի համար:

Տեսողական հաղորդակցության համակարգի առանձին մասն է կազմում ցուցանմուշների մասին տեղեկատվական նյութի մատուցումը: Դա հիմնականում իրականացվում է ցուցափեղկերի կամ պատերի վրա փակցված տեքստերի միջոցով, որոնք հիմնականում ունենում են պարզ ոճավորում: Լայն տարածում ունի սպիտակի վրա սև ամենաընթեռնելի և պարզ տառատեսակների ավանդական օգտագործումը³²:

10. Պատմական ակնարկ հայկական թանգարաններից

Հայաստանում պատմական անցյալի վկայությունը մշակութային հարուստ ժառանգությունն է՝ իր ամենատարբեր դրսևորումներով: Մշակույթային նմուշներն այստեղ այնքան շատ են և բազմատեսակ, որ գիտնականները մեր երկիրը նմանեցրել են բաց երկնքի տակ գտնվող թանգարանի: Հայաստանը դեռ հնագույն

³¹ Serrell B., Exhibit Labels: An Interpretive Approach, Lanham, AltaMira Press, 1996, page 9.

³² Ламцов И., Туркус А., Элементы архитектурной композиции, Москва, Стройиздат, 1938, стр. 11-21.

ժամանակներից սկսած ունեցել է թանգարաններ: Հայաստանի տարածքում թանգարանների նախատիպեր կային դեռևս ուրարտական ժամանակաշրջանում, մ.թ.ա. IX–VI-րդ դարերում: Սկզբնական շրջանում արվեստի հնագույն նմուշները հիմնականում պահվում էին Տուշպայի, Մուծածիրի, Էրեբունիի, Թեյշեբահինի տաճարներում: «Լուվրյան աղյուսակում» հանգամանորեն նկարագրվում են Մուծածիրի արքայական և տաճարային գանձատուն-թանգարանները:^{*} Այստեղ իրերը ներկայացված էին համապատասխան ցուցադրությամբ, որն էլ որոշ առումներով բնորոշ է ներկայիս թանգարանների օրինակներին: Իրերը պահպանվում էին ըստ պատրաստման նյութի: «Լուվրյան աղյուսակում» դրանք առանձին խմբերով են հիշատակված: Իրերի մեծ մասը կրում էին արձանագրություններ, որոնք ներկայիս թանգարանագիտական լեզվով կարելի է բնորոշել որպես բացատրագրեր: Այստեղ ցուցադրության նպատակը աստվածային վեհության բացահայտումն էր, իսկ ողջ ցուցադրությունն ուղղված էր ապագային³³: Հետագայում թանգարաններ դարձան հին հայկական հեթանոսական տաճարները և արքայական պալատները: Նշանավոր էր Երեզ՝ Երիզա-Երզնկա ավանի Անահիտ դիցուհուն նվիրված մեհյանը: Հովհ. Դրասխանակերտցու «Հայոց պատմության» մեջ X-րդ դարի երեք տիպի թանգարանների մասին է հիշատակվում՝ արքունի, իշխանական տների և եկեղեցական: Մեծ վանքերը՝ Սանահինը, Հաղպատը, Հավուց Թառը ունեին հատուկ գանձատներ: Հայկական թանգարանների կազմակերպման գործը ընդլայնվեց XIX-րդ դարում: 1846թ.-ին Երևանի գավառական դպրոցին կից Իս. Աբովյանը հիմնեց Հայկական հնությունների կաբինետ: Թանգարաններ կազմակերպվեցին Վասպուրականի Վարազա վանքում՝ 1858թ.-ին, Էջմիածնում՝ 1868թ.-ին, Երուսաղեմի և Պոլսի պատրիարքարաններում, Վենետիկում և այլուր: XIX-րդ դարի վերջին և XX-րդ դարի սկզբին Էջմիածնում հիմնվեց Հայրիկյան թանգարանը, 1907-1908թթ.

³³ Հմայակյան Ս., Քաղաքային գանձատուն- թանգարանը Վանի թագավորությունում, Անտառ ծննդոց հողվածների ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատ., 2015, էջ 132:

^{*}«Լուվրյան աղյուսակ» - Սարգոն I-ի ուղերձը Աշուր աստծուն, որտեղ նկարագրվում է մ.թ.ա 714թ. արշավանքը դեպի Վանի թագավորություն:

Թիֆլիսում՝ Ազգագրական-հնագիտական թանգարանը (1921-1922թթ. տեղափոխվեց Երևան), 1904-1909թթ. հիմնվեց Անիի թանգարանը³⁴:

Հայաստանը հանդիսանալով խոշոր մշակութային կենտրոն տարածաշրջանում և ունենալով բազմադարյա պատմություն՝ ունի իր վաղեմի գոյությունն ապացուցող և մշակութային անցյալն ու ներկան վկայող խոշոր ներկայանալի նյութ, որը և հանրամատչելի դարձնելու համար ցուցադրված է բազմաբնույթ և բազմապրոֆիլ թանգարաններում: Թեև Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կան բազմաթիվ թանգարաններ, սակայն դրանց մեծ մասը հատկապես կենտրոնացված է մայրաքաղաքում:

Երևանում գործում են 42 թանգարան, որոնք ըստ տիպերի և պրոֆիլների դասակարգվում են հետևյալ կերպ³⁵:

Գեղարվեստական	1. Հայաստանի ազգային պատկերասրահ, 2. Հայաստանի փայտարվեստի թանգարան, 3. Ժամանակակից արվեստի թանգարան, 4. Գևորգ Գրիգորյանի (Ջոտտո) արվեստանոց-թանգարան, 5. Ռուսական արվեստի թանգարան (պրոֆ. Ա. Աբրահամյանի հավաքածու), 6. Երվանդ Քոչարի թանգարան, 7. Գաֆեսճեան արվեստի կենտրոն, 8. Կալենց թանգարան, 9. Մ. Սարյանի տուն-թանգարան 10. Հակոբ Կոջոյանի և Ա. Սարգսյանի տուն-թանգարան, 11. Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոն 12. «Էդուարդ Իսաբեկյան» ցուցասրահ	12
---------------	---	----

³⁴Ղաֆադարյան Կ.Գ., Միջնադարյան Հայաստանի թանգարանները, գանձատուները և ավանդատուները, Փարիզ, «Անդաստան», №13, 1962, էջ 112:

³⁵ Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայք /Թանգարաններ, <https://www.yerevan.am/am/allmuseums/museums-of-yerevan/>. (հասանելի է 04.29.2014):

Պատմական	1. Հայաստանի պատմության թանգարան 2. Երևանի պատմության թանգարան 3. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, 4. «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան, 5. ՀՀՊՆ «Մայր Հայաստան» զինվորական թանգարան, 6. Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի պատմության թանգարան, 7. «Զորավար Անդրանիկ» թանգարան, 8. Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 9. Հայ Յեղափոխական Դաշնակցության պատմության թանգարան 10. Արարատ կոնյակի գործարանի թանգարան	10
Բնագիտական	1. Հովհաննես Կարապետյանի անվան երկրաբանական թանգարան, 2. Հայաստանի բնության պետական թանգարան	2
Տեխնիկական	1. Հայաստանի երկաթուղու թանգարան 2. Կապի թանգարան 3. Տիեզերքի թանգարան	3
Հուշային	1. Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան, 2. Հովհաննես Թումանյանի տուն-թանգարան, 3. Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան, 4. Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարան, 5. Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան, 6. Եղիշե Չարենցի տուն-թանգարան, 7. Դերենիկ Դեմիրճյանի տուն-թանգարան,	13

Հուշային	8. Արամ Խաչատրյանի տուն-թանգարան, 9. Կոմիտասի թանգարան-ինստիտուտ 10. Սիլվա Կապուտիկյանի տուն-թանգարան, 11. Կարեն Դեմիրճյանի թանգարան 12. Ֆրիտյոֆ Նանսենի թանգարան 13. Շառլ Ազնավուրի տուն-թանգարան	
Ճարտարապետական	1. Ալեքսանդր Թամանյանի ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ	1
Կոմպլեքսային	1. Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան	1
Ընհանուր թանգարանների թիվը	42	

Ինչպես երևում է վերը բերված ցուցակագրումից Երևանում քանակային առումով գերազանցում են հուշային թանգարանները, սակայն մեծ է նաև գեղարվեստական և պատմական թանգարանների քանակը:

Այսպիսով վերոհիշյալ ցուցակագրությունն ընդհանրական է և վերաբերում է ներկայումս գործող Երևանյան թանգարանների պրոֆիլային պատկանելությանը, ըստ որի ատենախոսության հաջորդ գլուխներում ցուցակագրվում են Երևանի խորհրդային և հետխորհրդային շրջանի թանգարանները:

Այսպիսով ամփոփելով կարելի է ասել, որ թանգարանային ինտերիերի դիզայնը Հայաստանում իր անցյալն ունենալով հանդերձ, ի դեմս տվյալ ուսումնասիրության մեջ քննականորեն հետազոտվող թանգարանների՝ նորություն է հայ իրականության մեջ: Դրանց դիզայներական ձևավորումը մեծամասամբ հիմնվում է միջազգայնորեն հաստատված մեթոդիկայի վրա՝ հաշվի առնելով գունային, տեքստուրալ, լուսավորության, կոմպոզիցիոն գոտևորման և էրգոնոմիկ չափորոշիչները: Թանգարանների ինտերիերի դիզայնը անմիջականորեն փոխկապակցված է դրանց պրոֆիլային դասակարգումից: Ինտերիերի դիզայնի գրագետ կազմակերպման համար

բացի պրոֆիլային դասակարգումից, անհրաժեշտ է նաև գիտակցել թանգարանի առջև դրված հիմնական գործառույթները, որոնք ծավալվում են ցուցանմուշների պահպանման, մատուցման և անվտանգության սահմաններում: Նախագծման մեջ առանձնակի ուշադրություն է դարձվում մարդկանց այցելությունների քանակի, շարժման գրաֆիկների, տեսողական հաղորդակցության համակարգի մշակմանը: Թեև վերջին տարիներին Երևանում կառուցվող և վերանորոգվող թանգարաններում բավականին մեծ ուշադրություն է դարձվում ինտերիերի դիզայնին, բայց այնուամենայնիվ, միջազգային օրինակների համատեքստում սրանց մեծամասնությունն ունի արդիականացման կարիք, որի համար կարևոր զուգահեռներ կարող են ծառայել Լուվրը, Ուֆֆիցին, Էրմիտաժը, Սալամոն Գուգենհայմի, Փոլ Գեթթի, Սալվադոր Դալիի, Էնթոնի Գաուդիի, Նորթոն Սայմոնի թանգարանները: Վերոհիշյալ գլխում ցուցակագրվել են տարեկան այցելությունների թվով առավել աչքի ընկնող միջազգային թանգարանները, քննարկվել են թանգարանների ինտերիերի նախագծման հիմնական դրույթները, առանձնահատկությունները և փուլերը, պրոֆիլային բաժանումով ցուցակագրվել են նաև Երևանում գործող 42 թանգարանները, որոնք հետագա գլուխներում կուսումնասիրվեն կառուցման խորհրդային և հետխորհրդային տարբերակներով: Այդ թվում են խորհրդային ժառանգություն հանդիսացող երկրորդ գլխում ուսումնասիրվող 25 թանգարաններ, և երրորդ գլխում անկախության տարիներին արդիականացված և նոր կառուցված 17 թանգարանների ինտերիերի դիզայնը: Բացառություն է կազմում Արարատ կոնյակի գործարանի թանգարանը, որը հիմնադրվել է 1887թ.- ն վաճառական Ներսես Թահիրյանի կողմից Հին Էրիվան ամրոցի վայրում: Վերը նշվածից կարելի է հանգել եզրակացության, որ ըստ պրոֆիլային պատկանելության Երևանում առկա թանգարաններից 13-ը հուշային են, 12-ը՝ գեղարվեստական, 10-ը՝ պատմական, 2-ը՝ բնագիտական, 1-ը՝ ճարտարապետական, 3-ը՝ տեխնիկական, 1-ը՝ կոմպլեքսային:

**ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ԵՐԵՎԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ
ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԻՆՏԵՐԻԵՐԻ ԴԻԶԱՅՆԸ**

**1. Երևանի խորհրդային ժամանակաշրջանի թանգարանների
ցուցակագրումը ըստ պրոֆիլների և դրանց ինտերիերի դիզայնը**

Ինչպես նշվեց առաջին գլխում Երևանում այժմ գործում են 42 թանգարաններ, որոնց մեծ մասը կառուցվել է խորհրդային շրջանում: Դրանց ինտերիերի դիզայնը որոշ թանգարաններում մինչ օրս փոփոխությունների չի ենթարկվել, որոշ դեպքերում էլ մասնակի կոսմետիկ վերանորոգումների է ենթարկվել, իսկ մյուս մասն էլ վերջին տարիներին հիմնանորոգվել և արդիականացվել է:

Երևանի խորհրդային շրջանում հիմնադրված թանգարանների ինտերիերի դիզայնի առանձնահատկությունները քննարկելու համար ստորև ներկայացնում ենք այդ թանգարանների ցանկը.

Երևանի խորհրդային շրջանի թանգարանները		
1.	Հայաստանի ազգային պատկերասրահ	1921թ.
2.	Հայաստանի պատմության թանգարան	1921թ.
3.	Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան	1921թ.
4.	Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան	1921թ.
5.	Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի պատմության թանգարան	1922թ.
6.	Հովհաննես Շարամբեյանի անվան Ժողովրդական ստեղծագործության կենտրոն	1935թ.
7.	Ռուսական արվեստի թանգարան (պրոֆ. Ա. Աբրահամյանի հավաքածու)	1936թ.
8.	Հովհաննես Կարապետյանի անվան Երկրաբանական թանգարան	1937թ.
9.	Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան	1938թ.
10.	Հովհաննես Թումանյանի տուն-թանգարան	1953թ.

11.	Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան	1963թ.
12.	Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարան	1963թ.
13.	Եղիշե Չարենցի տուն-թանգարան	1964թ.
14.	Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան	1967թ.
15.	«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան	1968թ.
16.	ՀՀՊՆ «Մայր Հայաստան» զինվորական թանգարան	1970թ.
17.	Ժամանակակից արվեստի թանգարան	1972թ.
18.	Հակոբ Կոջոյանի և Արա Սարգսյանի տուն-թանգարան	1973թ.
19.	Հայաստանի փայտարվեստի թանգարան	1977թ.
20.	Գևորգ Գրիգորյանի (Ջոտտո) արվեստանոց-թանգարան	1977թ.
21.	Դերենիկ Դեմիրճյանի տուն-թանգարան	1977թ.
22.	Արամ Խաչատրյանի տուն-թանգարան	1978թ.
23.	Երվանդ Քոչարի թանգարան	1984թ.

Վերոհիշյալ ցուցակագրումը վկայում է, որ Երևանում գործող թանգարանների մեծամասնությունը կառուցվել է խորհրդային ժամանակաշրջանում, սակայն դրանցից մի քանիսը մասնակի կամ հիմնովին վերանորոգվել է անկախության տարիներին: Կան թանգարաններ, որոնց գործող մասնաշենքերին վերջին տարիներին համակառույցներ են ավելացվել կամ էլ արդեն առկա կառույցները փոխարինվել են նորերով:

Ստորև ներկայացնում ենք նաև այն թանգարանների ցանկը, որոնք կառուցվել են խորհրդային տարիներին, բայց հիմնանորոգվել են անկախության ժամանակաշրջանում.

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան	1921թ. – 2011թ.
Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան	1938թ. – 2005թ.
Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարան	1963թ. – 2012թ.
Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան	1967թ. – 2016թ.
Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան	1921թ. – 2011թ.

Այսպիսով Երևանի խորհրդային շրջանի թանգարանների ինտերիերի դիզայնի առանձնահատկությունները հասկանալու համար նախ և առաջ անհրաժեշտ է անդրադառնալ դրանց լավագույն օրինակներին: Հարկ է նշել, որ Երևանում առկա ոչ բոլոր խորհրդային շրջանի թանգարաններն են դիզայնի տեսանկյունից աչքի ընկնում իրենց ինտերիերի լուծումներով, ուստի ստորև հետազոտության մեջ ընդգրկված են այն օրինակները, որոնք այդ տեսանկյունից առավել մեծ նշանակություն ունեն և արժանի են ուշադրության:

2. Հայաստանի ազգային պատկերասրահ (տե՛ս նկար 1,2)

Հայաստանի ազգային պատկերասրահի դերն ու նշանակությունը անգնահատելի է հայ իրականության մեջ, քանի որ այստեղ են կենտրոնանում ինչպես հայկական, այնպես էլ միջազգային արվեստագետների արժեքավոր աշխատանքները: Պատկերասրահի հարուստ և բազմաժանր հավաքածուն իր առանձնահատուկ նշանակությունն ունի ոչ միայն Հայաստանում, այլև տարածաշրջանում: Գտնվելով մայրաքաղաքի կենտրոնում՝ այն բավականին նպաստավոր դիրք ունի զբոսաշրջիկների և այցելուների հեշտ կողմնորոշման համար: Այստեղ գործում են ինչպես մշտական, այնպես էլ ժամանակավոր ցուցադրություններ:

Խորհրդային Հայաստանի կառավարության որոշմամբ 1921թ.-ին Հայաստանի ազգային պատկերասրահն առանձնացավ արդեն գոյություն ունեցող Պետական թանգարանի 5 բաժիններից, որպես արվեստի բաժին և տնօրեն նշանակվեց Մ. Սարյանը: Պետական թանգարանը գտնվում էր Աբովյան (նախկինում Աստաֆյան) փողոցում, երկհարկանի տուֆակերտ շենքում, որը նախագծվել էր Վ. Օ. Սիմոնսոնի կողմից արական գիմնազիայի համար: Թանգարանը, սակայն, առաջին 4 տարիների ընթացքում ցուցադրատարածքներ չունեի, քանի որ այստեղ գործում էին հանրային գրադարանը, համերգասրահը, ինչպես նաև ապաստանել էին Արևմտյան Հայաստանից գաղթած որբ երեխաները: Այդ էր պատճառը, որ 1924թ.-ին Ա. Լուսաշարսկին թանգարանը նմանեցրել էր մեծ ու խայտաբղետ պահեստարանի: 1921թ.-ի օգոստոսի 14-ին արդեն տեղի ունեցավ Հայաստանի «Արվեստի թանգարանի» բացման արարողությունը: Այն տարեցտարի ընդլայնվեց, համալրվելով նորանոր արվեստի նմուշներով և ձևավորելով իր դեմքը: 1947թ.-ից այն վերանվանվեց

Հայաստանի պետական պատկերասրահի, իսկ 1991թ.-ին ստացավ Հայաստանի ազգային պատկերասրահ անվանումը, որը կրում է մինչ օրս: Պատկերասրահի հավաքածուն ներկայումս ընդգրկում է շուրջ 26.000 թանգարանային առարկա, որի մի մասը ներկայացված է ինչպես մշտական ցուցադրության 56 սրահներում, այնպես էլ ներկայացվում է ժամանակավոր ցուցահանդեսների տեսքով: Ինչպես գիտենք Ազգային պատկերասրահը և Հայաստանի պատմության թանգարանը զետեղված են միևնույն կտուրի տակ և ունեն նույն մուտքը: Շենքի կառուցումը մեկնարկել է 1940—1950թթ.-ին (ճարտ. Մ. Գրիգորյան, է. Աարափյան): Սկզբում կար միայն նախկին արական գիմնազիայի սև և կարմիր տուֆի սրբատաշ շարվածքով շենքը (ճարտ. Սիմոնսոն), որի ճակատներից մեկը՝ արևմտյանը (կողայինը), ուղղված էր դեպի այն ժամանակ կոչվող Լենինի հրապարակը: Երբ սկսվեց «Լենինի հրապարակի» կառուցապատումը, որոշվեց վերակառուցել նաև կուլտուրայի տան նշված ճակատը: Նրա հարուստ հարդարանքը՝ խոյակներով որմնասյուները, քիվերը քանդվեցին և ամբողջ պատը մտցվեց նոր, Նոյեմբերյանի սպիտակ ֆելզիտի պատյանի մեջ, որի առաջ բարձրացավ 12մ բարձրության ֆրոնտոնազարդ, խաչաձև թաղերով ծածկված կամարասրահը: Այստեղ տեղավորված թանգարանները, այդ թվում և պատկերասրահը, իրենց պատմական եզակի արժեքավոր գանձերի ֆոնդերով խեղդված էին նեղ պատերի մեջ, ուստի շենքի ընդարձակման խնդիրը հրամայական պահանջ էր դարձել: Ընդարձակման նախագծի մշակումը հանձնվեց նույն հեղինակներին, ովքեր միտք հղացան հենց իրենց ստեղծած կամարասրահի վրա (ֆրոնտոնից մի փոքր հետ) բարձրացնել աստիճանաձև աճող ծավալներ, որի համար օգտագործվեց ներքին բակի գրեթե ողջ տարածքը: Այստեղ, հատակագծում 27x36մ² մակերեսով և 50մ բարձրությամբ մտացածին մետաղական մի կարկաս բարձրացավ, որը հետո երեսապատվեց քարե պատերով: Նոր ծավալը կամարասրահից 28մ բարձր էր և հորիզոնական ուղղությամբ մասնատված երեք աստիճանաձև ծավալների: Այսպիսով, հրապարակի երկայնական առանցքի վրա հայտնվեց հրապարակի գլխավոր կոմպոզիցիոն առանցքի հավակնությունը հայցող մի նոր շենք: Հեղինակները, սակայն հաշվի չէին առել թանգարանների գործունեության և այդ թվում՝ լայն հաճախելիության գործառույթը, շահագործման պահանջները:

Հատակագծում լուծված չէին այցելուների ընդունման շարժման գրաֆիկները, բաժինների ցուցանմուշների դիտման խնդիրները, ինչպես և լուծված չէին լուսավորության, պատուհանների ուղղությունների պահանջները (վերջին հարկերի ապակեպատ մեծ պատուհանները նայում են դեպի արևմուտք): Ձևական տեղադրման բնույթ ստացան նաև խաչաձևվող շքասանդուղքները, որոնք մինչ օրս ստեղծում են այցելուների շարժման այնպիսի բարդ գրաֆիկ, երբ պատկերասրահի մի բաժնից մյուսն անցնելու համար հարկ է լինում սանդուղքներով նախ իջնել և ապա նորից բարձրանալ դիտումը շարունակելու համար: Այստեղ ներքին ու արտաքին տարածական հորինվածքների միասնությանը հակադրված է արտաքին ծավալի մտացածին զանգվածը, որն ի վերջո ոչնչով չի հիշեցնում պատկերասրահ, չի կազմավորում նրա գեղարվեստական կերպարը: Այստեղ ակնհայտորեն հանդես է գալիս կառուցվածքի, ձևի և բովանդակության միասնության խախտում, շեշտվում նրա ճարտարապետության և քաղաքաշինական միջավայրի կապի բացակայությունը³⁶:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ հիմնականում բոլոր պատկերասրահներում կազմակերպվում են ինչպես մշտական, այնպես էլ ժամանակավոր ցուցադրություններ: Հիմնականում ցուցանմուշների տեսքով ներկայացվում են թանգարանի հավաքածուի առավել հիշարժան նմուշները: Այստեղ դիզայներական լուծումները տրված են, այնպես, որ բովանդակային ամբողջականությամբ դիտողին ընդգրկեն պատմության մեջ, և կենտրոնացնեն ուշադրությունը հավաքածուների ամենաարժեքավոր նմուշների վրա³⁷: Նմանատիպ պատկերասրահներում կատարվում են նաև արվեստաբանական ուսումնասիրություններ, հետազոտություններ, լայն տարածում են գտել նաև երեխաների աշխարհայացքների ձևավորման հետ կապված ուսումնական միջոցառումները, ուստի թանգարանային ընդհանուր դիզայնը պետք է ծառայի նաև այսօրինակ աշխատանքների իրականացմանը: Խոսելով պատկերասրահի մասին անդրադառնանք դրանում պահվող և ցուցադրվող նմուշների հիմնական տիպերին.

³⁶ Տիգրանյան Է., Հասարակական շենքերի ճարտարապետական առանձնահատկությունների մասին, Երևան, Լույս հրատ., 1989, էջ 26:

³⁷ Jacob G. , Museum Design the Future, North Charleston, Demand Publishing, 2009, page 124.

1. գեղանկարներ
2. գրաֆիկական աշխատանքներ
3. որմնանկարների դրվագներ
4. հաստոցային քանդակագործության նմուշներ
5. կահույքի և միջավայրի գեղազարդման այլ օրինակներ

Այսպիսով պարզ է դառնում, որ ցուցանմուշներն այս թանգարանում այդքան էլ բազմաբնույթ չեն, ուստի ինտերիերի կազմակերպման մեջ կարելի է ընդհանուր այնպիսի լուծումներ գտնել, որոնք արվեստի նմուշների համատեղ ցուցադրությունը կհամալրեն մեկ միասնական հորինվածքում՝ միաժամանակ ապահովելով այցելուների հարմարավետությունն ու դադարի գոտիների առկայությունը:

Ֆունկցիոնալ գոյությունը: Հայաստանի ազգային պատկերասրահում թեմատիկ համակարգումը տրված է այնպես, որ յուրաքանչյուր սրահում զետեղված է միևնույն ոճին կամ ժամանակաշրջանին պատկանող արվեստի գործերի օրինակներ, սակայն հատակագծային լուծումներում որոշակի խոչընդոտ են հանդիսանում սրահից սրահ անցուղիների նեղ բացվածքները, որոնք մեծ միջոցառումների (Թանգարանային գիշեր) ժամանակ խոշոր խցանումներ են առաջանում ինչպես սրահների մուտքերում, այնպես էլ անցուղիներում: Այս նույն խնդիրն ի հայտ է գալիս նաև նեղ աստիճանահարթակներում, որոնց խաչվող հորինվածքը, ինչպես արդեն նշվեց, ևս խաթարում է մարդկային հոսքի դյուրին տեղաշարժը:

Տեսողական հաղորդակցություն: Հայաստանի ազգային պատկերասրահը և Պատմության թանգարանը, ինչպես արդեն նշվեց, գտնվում են միևնույն կառույցի ներսում, և ունեն նույն մուտքը, դա է պատճառը, որ մարդկային հոսքի ճիշտ ուղղորդման համար արդեն իսկ պարտադիր է ունենալ տեսողական հաղորդակցության այնպիսի գրաֆիկական լուծումներ, որոնք ի սկզբանե կհուշեն, թե որ թանգարանը, որտեղ է զետեղված: Ազգային պատկերասրահում, որպես տեսողական հաղորդակցության օրինակ հիմնականում կարելի է համարել ցուցասրահների դռների առջև փակցված պաստառները, որոնց վրա ներկայացված է սրահում առկա հեղինակների աշխատանքների հավաքածուները: Դրանց լրացնելու են գալիս առկա ծանոթագրություններն ու տակագրերը:

Այսպիսով տեսողական հաղորդակցությունն Ազգային պատկերասրահում արդիականացման կարիք ունի, որի արդյունքում այցելուների կողմնորոշման գործընթացը պետք է առավելագույնս դյուրին դարձվի՝ հաշվի առնելով նաև ճարտարապետական բարդ հորինվածքը:

Ինտերիերի կոմպոզիցիոն սկզբունքները: Հայաստանի ազգային պատկերասրահի ցուցադրական տարրերի մասին խոսելիս անդրադառնանք դրանց թեմատիկ բաշխվածությանը՝ ըստ հարկերի և սրահների: Ստորև ցուցակագրված են Հայաստանի ազգային պատկերասրահի ցուցադրություններն, ըստ հարկերի:

Հարկեր	Ցուցադրություններ
0	Քանդակագործ Հակոբ Գյուրջյանի ստեղծագործությունների ցուցասրահ
1	Ժամանակավոր ցուցահանդեսներ Արևելքի երկրների արվեստ
2	Գրաֆիկական աշխատանքների ցուցասրահ XVIII-XX-րդ դդ. Արևմտաեվրոպական ժամացույցներ
3	Ժամանակավոր ցուցահանդեսների սրահ Հայ հին և միջնադարյան արվեստ
4	XX-րդ դարի հայ արվեստ Էդգար Շահինի գրաֆիկական աշխատանքներ
5	Հայ դասական արվեստ – Հակոբ Հովնաթանյան, Հովհաննես Այվազովսկի, Վարդգես Սուրենյանց XIX-րդ դարի վերջի և XX-րդ դարի սկզբի հայ դասական արվեստ – Գևորգ Բաշինջաղյան, Ենովք Նազարյան, Զաքար Զաքարյան, Եղիշե Թադևոսյան, Ստեփան Աղաջանյան...
6	Ռուսական արվեստ
7	Հունական, Եգիպտական արվեստ Իտալական արվեստ Ֆլամադական արվեստ Իսպանիայի, Գերմանիայի, Շվեյցարիայի, Բելգիայի, Ավտրիայի արվեստ

7	Հոլանդական արվեստ Ֆրանսիական արվեստ
8	Ֆիլմերի դահլիճ Սրճարան

Վերը նշված ցուցակագրությունը վկայում է, թե որքան աշխատանքներ են այստեղ կենտրոնանում, ուստի դրանց ցուցադրությունը բավականին մեծ ջանքեր է պահանջում: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ցուցասրահները, թեև իրենց հատակագծային հորինվածքով համապատասխանում են թանգարանի ժամանակաբովանդակային հաջորդական դիտմանը, սակայն դրանց ընդհանուր հարդարանքի, լուսավորության և օդափոխության համակարգերն ունեն արդիականացման կարիք: Ցուցադրությունը հիմնականում բաղկացած է պատերից կախված հաստոցային գեղանկարչության օրինակների և ցուցափեղկերում կամ պատվանդանների վրա առկա քանդակագործության նմուշներից, որոնք հաջորդական դիտման ընթացքում համախմբվում են գաղափարական ընդհանրությամբ:

Ինտերիերի գունային և տեքստուրալ համադրումները: Հայաստանի ազգային պատկերասրահում գունային հարաբերությունները տատանվում են ըստ դրանցում ներկայացվող նմուշների: Այստեղ գերակշռում են պաստելային երանգները, որոնք հիմնականում արտահայտված են սպիտակ, դարչնագույն, երկնագույն, մանուշակագույն համադրություններով: Ցուցասրահներում պատերի գույները համադրվում են առաստաղի ճերմակ մակերեսին և ամբողջացվում մանրահատակի փայտի գունեղանգով:

Լուսավորությունը: Հայաստանի ազգային պատկերասրահը, ինչպես արդեն նշվեց, զետեղված է եղել արական գիմնազիայի երկհարկ շինությունում, և ճարտարապետական մյուս համակառույցը ավելացվել է շատ ավելի ուշ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համալրումը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ արդեն հայտնի էր, որ տարածքն օգտագործվելու է որպես պատկերասրահ, փոքր-ինչ անհասկանալի է դրա հատակագծային, հորինվածքային լուծումները՝ կապված խաչվող շքասանդուղքների և լուսամուտների նմանօրինակ շռայլությանը: Դա է

պատճառը, որ Ազգային պատկերասրահում պատուհանները մինչ օրս վարագույրների սովորական շերտով են սքողված, դրանով իսկ նավագագույնի հասցնելով բնական լույսի ներթափանցումը սրահներ: Հայտնի է, որ բնական լույսը գեղանկարչական աշխատանքների համար մեծ վտանգ է ներկայացնում, ինչպես նաև կարող է անհասկանալի և անկառավարելի արտացոլանքներ և ստվերներ առաջացնել՝ խաթարելով դրանց իրական ընկալումը³⁸: Ցավոք այս խնդիրը պատկերասրահի բոլոր սրահներում պահպանվում է, իսկ մնացած լուսավորությունն իրականացվում է առաստաղին փակցված լուսանդրադարձնող ցերեկային լուսատուներով:

Այսպիսով վերը նշվածից երևում է, որ լուսավորության համակարգը Ազգային պատկերասրահում ամբողջականապես ենթական է արդիականացման: Այստեղ առկա լուսամուտների ճեղքերը չափազանց մեծ են և տարածության կորուստ են հանդիսանում: Ինչպես ԳԱԹ-ում և Մարկոս Գրիգորյանի ցուցադրությունում, դրանք այստեղ ևս հնարավոր է սքողել արհեստական պատերով՝ վերածելով ցուցափեղկերի խորշերի կամ հարթ պատերի:

Հայաստանի ազգային պատկերասրահում մոնումենտալ լուծումներով աչքի է ընկնում որմնանկարների դահլիճը, որի հորինվածքն ամբողջովին լրացնում է թեմատիկ ցուցադրությունը: Այստեղ մշտական ցուցադրությանը զուգահեռ, հաճախ անց են կացվում թեմատիկ միջոցառումներ, դասական համերգներ, քննարկումներ և այլն:

Միջազգային զուգահեռները: Զուգահեռներ անցկացնելով ժամանակի լավագույն նույնապարհիլ թանգարանների միջև, որպես լավագույն օրինակներ կարելի է նշել Լուվրը, Էրմիտաժը և Սալամոն Գուգենհայմի թանգարանները (*տե՛ս նկար 3-8*):

Լուվրը, նախկինում հանդիսանում էր ֆրանսիական թագավորական պալատ (ֆր.՝ Palais des Tuileries): Այստեղ 60.600մ² ընդհանուր մակերեսով դահլիճներում ցուցադրված է շուրջ 350.000 բազմաբնույթ թանգարանային առարկա: Լուվրը վիճակագրական տվյալների համաձայն հանդիսանում է այցելությունների թվով ամենամարդաշատը՝ տարեկան 9.260.000 այցելու: Այստեղ յուրաքանչյուր ժամանակաշրջան և ցուցանմուշ իր ուրույն մոտեցումն է ստանանում՝ հստակ

³⁸ Hughes P., Exhibition Design, London, Laurence King Publishing, 2010, page 153.

բաժանվելով ընդհանուր հորինվածքում: Վերանորոգումների ընթացքում այն ձեռք է բերել թանգարանի առանձնահատկություններին առավել համապատասխանեցված ներկայիս հորինվածքը, որը յուրաքանչյուր սրահի ինտերիերի ձևավորման մեջ դրսևորվում է նոր շնչով³⁹: Բավականին հետաքրքիր լուծում է տրված Լուվրի մուտքին, որը կառուցվեց 1983 թ.-ին Ֆրանսիայի Նախագահ Ֆրանսուա Միտերանի պատվերով Լուվրի պալատի Նապոլեոնյան հրապարակի կենտրոնում: Նախագիծն իրականացրել է չինական արմատներով ամերիկացի ճարտարապետ Լեո Մինգ Պեյը: Ամբողջ համալիրը կառուցված է ապակյա կտորներից: Գլխավոր բուրգի բարձրությունը 23,64մ է, իսկ հատակի մակերեսը 35,42մ²: Ամբողջ բուրգը բաղկացած է իրար միացած թվով 603 շեղանկյուններից և 70 եռանկյուններից: Ընտրված ապակին եզակի է իր տեխնիկայով, քանի որ այն ընդհանրապես չի բեկում և անդրադարձնում: Այստեղից շարժասանդուղքն ուղղորդում է այցելուներին դեպի նախասրահ, որտեղ զետեղված են տոմսարկղերը և հուշանվերների վաճառակետերը: Այստեղ կան նաև տեղեկատվական վահանակներ, որոնք թույլ են տալիս հնարավորինս հեշտ կողմնորոշվել հսկայածավալ տարածության մեջ և ուղղորդվել դեպի այն սրահը դեպի ուր և սևեռված է այցելուի հետաքրքրությունը⁴⁰: Բավականին տարբերվում են միմյանցից ցուցասրահները: Բաց գունային համադրություններին հակադրվելու են գալիս կոնտրաստ առաջացնող ծանր լոկալ երանգները, երբեմն ճոխ հարդարանքին էլ հաջորդում են պարզ անպաճույճ պատերը, սակայն այս ամենն այնքան գրագետ և տեղին է, որ բնորոշում է տվյալ ցուցանմուշների նյութականությունը, բովանդակությունն ու ժամանակաշրջանը: Յուրաքանչյուր ցուցասրահում տեղադրված են նստարաններ, որոնք թույլ են տալիս հանգստանալ և միաժամանակ կենտրոնանալով ուսումնասիրել ինչ-որ ցուցանմուշ: Ինչպես նշվեց վերևում այստեղ են պահպանվում բազմաբնույթ մեծարժեք իրեր, որոնց պահպանումը առանցքային խնդիր է տվյալ թանգարանում:

Էրմիտաժը Ռուսաստանի ամենամեծ և աշխարհի նշանակալի թանգարաններից է: Ստեղծվել է որպես Ռուսաստանի Եկատերինա 2-րդ թագուհու անձնական արվեստի հավաքածու, իսկ 1852թ.-ից բացվել է հասարական այցելությունների համար:

³⁹ Louvre Pyramid, <http://architectuul.com/architecture/louvre-pyramid> . (հասանելի է 13.11.2016):

⁴⁰ McClellan A., *Inventing the Louvre: Art, Politics, and the Origins of the Modern Museum in 18th Century Paris*, New York, Cambridge University Press, 1994, page 91.

Ժամանակակից էրմիտաժը բաղկացած է 6 շենքերից, որոնք ձգվում են Նևա գետի երկայնքով: Էրմիտաժի կարևորագույն հանգույցը Ձմեռային պալատն է: Այն առաջներում եղել է թագավորական նստավայր, ուստի ձևավորման մեծ մասը հենց համապատասխանում է արքայական ժամանակներին: Էրմիտաժում գործում են անտիկ աշխարհի, արևմտաեվրոպական, արևելյան, նախնադարյան արվեստի, ռուսական արվեստի, նումիզմատիկ էքսպոզիցիաներ: Դրանք տեղաբաշխված են ինչպես Ձմեռային պալատում, այնպես էլ մնացած համալիրներում: Թագավորական նստավայրի ձևավորմանը մասնակցել են ժամանակի նշանավոր նկարիչներն ու ճարտարապետները: Մասնավորապես Ալեքսանդրյան, Մալաքիտի, Սպիտակ սրահների, միջանցքների, Ոսկյա հյուրասենյակի ձևավորումը պատկանում է Բրյուլովին: Էրմիտաժում իր առանձնահատուկ հորինվածքն ունի Նիկոլայ II-ի գրադարանը, որը ստեղծվել է 1894-1895թթ.-ին Կրասովսկի ճարտարապետի կողմից և պատկանել է ռուս վերջին կայսրի անձնական օգտագործմանը: Գրադարանի հարդարանքում մեծ տարածում ունեն անգլիական գոթական միտումները: Կեսսոնավոր առաստաղը, որը պատրաստված է կաղնու փայտից, զարդարված է չորս թևանի վարդակներով: Գրապահարանները տեղաբաշխված են պատերի երկայնքով, դեպի ուր տանում են աստիճանները: Ինտերիերի դեկորավորված ոսկեզօծ ծեծած կաշվե պաննոն, մոնումենտալ բուխարիով և բարձր պատուհաններով զարդագալար կամարները այցելուին տանում են միջնադար: Էրմիտաժի Մալաքիտե սրահը ստեղծվել է 1839թ.-ին Ա. Պ. Բրյուլովի նախագծմամբ: Ինտերիերի բոլոր սյուները և բուխարիները պատված են ուրալյան մալաքիտով: Սյուների և որմնասյուների բրոնզե հիմքերը, փորագիր փայտե դռները, հայելիների շրջանակները, բարդ հորինվածքի զարդանախշերը, որոնք պատում են առաստաղը ոսկեջրված են: Ինտերիերի մալաքիտի կանաչավուն երանգների հարաբերությունը ոսկու հետ հաղորդում է շքահանդեսային հնչեղություն: Ներկայումս այստեղ ցուցադրվում են XIX-րդ դարի առաջին կեսի ռուս վարպետների ձեռքին պատկանող մալաքիտե աշխատանքները, որոնք ևս տեղադրված են բրգածև ցուցափեղկերի մեջ՝ թույլ տալով դիտորդին ուսումնասիրել դրանք բոլոր կողմերից: Այստեղ ցուցափեղկերի ձևավորումը առավելագույնս մոտեցված է ինտերիերի ոճավորմանը, որի մասին են վկայում

նսկեզօծ զարդաքանդակների օգտագործումը դրանց պատվանդաններում⁴¹։

Ժամանակակից գեղարվեստական թանգարանների շարքում իրենց առանձնահատուկ տեղն ունեն *Սալամոն Գուգենհայմի* թանգարանները Նյու Յորքում և Բիլթաոյում։ Դրանք աչքի են ընկնում համարձակ ճարտարապետական հորինվածքով և ինտերիերի դիզայնով։ Նյու Յորքի Սալամոն Գուգենհայմի թանգարանը ունի 4000մ² մակերես, այցելությունների թիվն այստեղ տարեկան կազմում է 1.199.123։ Նախագծված Ֆրենկ Լլոյդ Ռայթի կողմից Սալամոն Գուգենհայմի թանգարանի վերընթաց լայնացող հորինվածքը հիշեցնում է ոգու տաճար։ Թանգարանի ժամանակակից ինտերիերը հնարավորություն է տալիս այցելուներին բարձրանալ վեր և իջնել միմյանց հաջորդող ցուցադրություններով, միաժամանակ ամբողջ թանգարանի սրահների հետ կապը պահպանելով, նույնիսկ հնարավորություն ստեղծել այցելուներին տարբեր հարկերում կապվել միմյանց հետ։ Խխունջաձև հորինվածքի պատճառով հատակը թեքության մեջ է, և ողջ տարածական հորինվածքը հորիզոնական, յուրաքանչյուր ուղղահայաց մակերես ասես տեսողական խաբկանքներ է ստեղծում և փոքր-ինչ «գինովցածության» տպավորություն ստեղծում։ Գուգենհայմի թանգարանի ինտերիերի գունային հարաբերությունները հիմնականում միօրինակ են և կրկնվում են, դա բնորոշ է խխունջաձև հորինվածքին, որը տարածությունը միասնական պահելու համար չի բաժանվում զանազան երանգների՝ առանձնացնելով թեմատիկ ցուցասրահներն ու ցուցադրությունները⁴²։ Բիլթաոի Գուգենհայմի թանգարանը կառուցված է ապակուց, տիտանից և ավազաքարից։ Թանգարանի շինությունը նախագծել է ամերիկա-կանադացի ճարտարապետ Ֆրենկ Գերին։ Այն պաշտոնապես բացվել է 1997թ.-ին։ Թանգարանի հորինվածքը դեկոնստրուկտիվիզմի լավագույն դրսևորումն է համարվում ողջ աշխարհում։ Ափի մերձակայքում տեղ գտած շինությունն ունի արստրակտ ֆուտուրիստական նավի տեսք։ Ինչպես Գերիի աշխատանքների մեծամասնությունը, այս կառույցը ևս կազմված է փափուկ

⁴¹ Пиотровский Б. Б., Глинка В. М., Эрмитаж: история строительства и архитектура зданий, Москва, Стройиздат, 1989, стр. 176.

⁴² Solomon Guggenheim Museum, <http://architectuul.com/architecture/solomon-r-guggenheim-museum> . (հասանելի է 13.11.2016)։

ուրվագծերից, որոնք նախատեսված են լույսի կլանման համար: Թանգարանի 11.000մ² մակերեսում տեղակայված են ավելի քան 19 ցուցասրահներ, որոնցից 10-ը դասական հորինվածք ունեն, իսկ մնացած 9-ը՝ բարդ ոլորվող հատակագիծ: Ամենամեծ սրահն ունի 30մ լայնություն և 130մ երկարություն, որտեղ գտնվում է Ռիչարդ Սերրայի մոնումենտալ ինստալիացիան: Տարբեր ծավալների և հեռանկարների հետ խաղը յուրօրինակ թեթևություն է հաղորդում ընդհանուր միջավայրին⁴³:

Եզրակացություն: Դիտարկելով համաշխարհային փորձը և ինտերիերի դիզայնի առանձնահատկությունները կարելի է հանգել եզրակացության, որ Հայաստանի ազգային պատկերասրահը եզակի է իր ցուցանմուշների նշանակությամբ և հարստությամբ, սակայն դրանց գրագետ մատուցման համար ունի արդիականացման կարիք: Ֆունկցիոնալ նպատակահարմարության առումով ազգային պատկերասրահի ինտերիերի դիզայնի լուծումներում հարկ է վերանայել մարդկային շարժման գրաֆիկների, ցուցադրվող նյութերի ներկայացման, լուսավորության, անվտանգության նկատառումները:

3. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (տե՛ս նկար 9-14)

Հայաստանը հայտնի է իր ձեռագիր մատյանների հարուստ ժառանգությամբ, որոնց մշակութային և պատմական արժեքը չափազանց բարձր է գնահատվում ոչ միայն տարածաշրջանում, այլև միջազգային նշանակություն ունի: Հայկական ձեռագիր մատյանների մեծ մասը պահվում է Մատենադարանում:

Մատենադարանի թանգարանային համալիրը ստեղծվել է 1921թ.-ին՝ 5-րդ դարի Էջմիածնի մատենադարանի հիման վրա, և եղել է առաջին գիտահետազոտական հաստատությունը Հայաստանում: 1945թ.-ին ճարտարապետ Մարկ Գրիգորյանի նախագծով սկսվել է շենքի շինարարությունը, որն ավարտվել է 1957թ.-ին, երբ Մատենադարանը հաստատվել է նորակառույց շենքում: 1962թ.-ին Մատենադարանը անվանակոչվել է Մեսրոպ Մաշտոցի անունով: Ներկայումս այստեղ պահվում են շուրջ

⁴³ Solomon Guggenheim Museum Bilbao, <http://architectuul.com/architecture/guggenheim-museum-bilbao>.

(հասանելի է 09.09.2016):

20.000 ձեռագիր մատյան: Սկզբնական շրջանում այստեղ գործել է միայն մեկ ցուցասրահ, հետագայում ավելացվել է ևս մեկը, իսկ 2010թ.-ին, երբ կառուցվեց նոր մասնաշենքը, հիմնական շենքը վերանորոգվեց: Այստեղ տեղ գտան շուրջ 15 ցուցասրահներ, դահլիճը և գիտական լաբորատորիաները, իսկ Արթուր Մեսչյանի նախագծած նոր մասնաշենքում հիմնականում հանգրվանեցին գիտական բաժինները⁴⁴:

Մատենադարնը հանդիսանալով գիտահետազոտական կենտրոն խնդիր ունի ոչ միայն ներկայացնելու այցելուներին առկա նմուշները, այլև ծառայելու դրանց ուսումնասիրմանը, հետազոտմանը և, որ ամենակարևորն է դրանց հատուկ պայմաններով պահպանությանը: Կարելի է ասել, որ Երևանում առկա թանգարաններից ֆունկցիոնալ տեսանկյունից ամենաբարդ խնդիրը դրված է հենց Մատենադարանի դիզայնում, որը պետք է ապահովի ինչպես բազմադարյա ձեռագիր մատյանների ցուցադրությունը, այնպես էլ ստեղծի դրանցից յուրաքանչյուրի համար հատուկ ջերմալուսային պայմաններ: Այստեղ, ինչպես արդեն նշվեց, ցուցանմուշները այդքան էլ բազմաբնույթ չեն, ունեն միևնույն առանձնահատկությունները, պարզապես դրանց ամենահին նմուշները առավել խիստ պահպանության պայմաններ են պահանջում:

Ֆունկցիոնալ գոյությունը: Մաշտոցի պողոտայի հյուսիսային ծայրում՝ Մայր Հայաստան հուշահամալիրի ներքևում վեր է խոյանում մատենադարանի հին խորանարդաձև շենքը: Նեոհայկական ոճով կառուցված շենքի մոնումենտալ աստիճանները տանում են դեպի Մեսրոպ Մաշտոցի և Կորյունի՝ Ղուկաս Չուբարյանի կողմից 1962թ.-ին կերտած արձանները: Շենքի ճակատը զարդարված է Թորոս Ռոսլինի, Գրիգոր Տաթևացու, Անանիա Շիրակացու, Մովսես Խորենացու, Մխիթար Գոշի և Ֆրիկի արձաններով: Մուտքի մոտ գրված է ըստ ավանդության հայերեն թարգմանված առաջին նախադասությունը: Շենքի կողքերը զարդարված են խաչքարերով:

⁴⁴ Մատենադարան. պատմական ակնարկ, <http://www.matenadaran.am/?id=61&lng=3>. (հասանելի է 18.10.2016):

Մատենադարանն ունի ինը ստորաբաժանում, որոնցով էլ պայմանավորված է ինտերիերի դիզայնի հիմնական հորինվածքը.

- ձեռագրատուն, որտեղ պահվում են մոտ 23.000 ձեռագրեր, պատառիկներ և հմայիլներ,
- ցուցասրահներ, որոնք գտնվում են հին կոթողային շենքում,
- ընթերցասրահ, որտեղ իրականացվում է աշխատակիցների և դրսից եկած ընթերցողների համար ձեռագրերի, արխիվային նյութերի, տպագիր գրականության մատուցումը,
- միջազգային կապերի բաժին, որի նպատակն է ապահովել Մատենադարանի գործունեության հիմնական ռազմավարական ուղղությունների միջազգայնացման հատվածը,
- թվայնացման և կայքէջի սպասարկման բաժին, որը զբաղվում է միջնադարյան ձեռագիր գրքերի, արխիվային փաստաթղթերի և վավերագրերի, ինչպես նաև Մատենադարանի գրադարանում պահվող հայագիտական գրականության ու մամուլի հավաքածուների թվայնացմամբ,
- հայագիտական տպագիր գրականության և մամուլի բաժին, որը զբաղվում է գրքերի և մամուլի համալրմամբ, մշակմամբ, գրանցմամբ և սպասարկմամբ,
- արխիվային փաստաթղթերի պահպանման և գիտական մշակման բաժին, որտեղ պահվում է ավելի քան 500.000 արխիվային փաստաթուղթ,
- վերականգնման բաժին, որը զբաղվում է ձեռագրերի և փաստաթղթերի վերականգնմամբ,
- համակարգչային բաժին, որի հիմնական գործառույթներն են Մատենադարանի աշխատությունների, հոդվածների, գրքերի մուտքագրումը, սրբագրումը, էջադրումը, ձևավորումը և հրատարակության հանձնելը:
Առանձին գործում են նաև գիտահետազոտական բաժիններ:

Նորակառույց գիտական համալիրում են անվտանգության, ջերմախոնավային կայուն ռեժիմի պահպանման, հակահրդեհային համակարգերով ապահովված բունկերային տիպի պահոցները: Գիտական համալիրի առաջին հարկում է գտնվում գրադարանը, երկրորդում ձեռագրապահոցն է՝ առանձին ընթերցասրահով,

վերականգնողական բաժինը, մանրանկարիչների աշխատասենյակները և համակարգչային բաժինը: Երրորդ հարկում ավելի քան 200 տեղանոց դահլիճն է՝ ապահովված տեսահամակարգով և միաժամանակյա թարգմանության համար նախատեսված խցիկներով: Այս հարկում են արխիվը, ինչպես նաև վարչական կառավարման բաժինը և նոր համալիրը հին՝ կոթողային շենքին կապող մասնահատվածը: Չորրորդ հարկում են գտնվում Մատենադարանի հիմնադիր տնօրեն՝ Լևոն Խաչիկյանի անունը կրող ընթերցասրահը, թվայնացման և կայքէջի սպասարկման բաժինը, ինչպես նաև ժամանակավոր ցուցադրությունների համար նախատեսված սրահը:

Տեսողական հաղորդակցություն: Մատենադարանում գրեթե բացակայում են տեսողական հաղորդակցության ակնհայտ դրսևորումները, բացառություն են կազմում ցուցափեղկերի ներսում գտնվող փոքրիկ տակագրերը, որոնք կրում են ավանդական բնույթ՝ սպիտակ թիթեղի վրա սև, կապույտ կամ կարմիր պարզ տառերով գրություններով:

Ինտերիերի կոմպոզիցիոն սկզբունքները: Ցուցասրահներում ցուցափեղկերի դասավորությունը նախատեսված է հաջորդական դիտման համար, թելադրելով այցելությունների շարժման հոսքը: Այստեղ առկա են նաև թվային էկրաններ, որոնք իրենց խոշոր չափերով և սև շրջանակներով չափից շատ են առանձնանում ինտերիերից և չեն ինտեգրվում ընդհանուր դասական միջավայրին:

Ինտերիերի գունային և տեքստուրալ համադրումները: Թանգարանի հին շենքը ընդգրկում էր 3300մ² տարածք, որը չէր բավարարում հարուստ նմուշների ներկայացման համար, իսկ երբ 2010թ.-ին կառուցվեց 12.000մ² մակերես ունեցող նոր կառույցը, թանգարանի ցուցադրությունն ու հարակից բաժինները նոր հորինվածք ստացան: Հին շենքը կառուցված է բազալտից, որն արտահայտվում է ոչ միայն արտաքին ճակատներում, այլև ինտերիերում՝ համադրվելով այլ բնական քարերի հետ: Նորակառույց հսկա համալիրը ևս Սիսիանի մոխրագույն բազալտով է կառուցված: Շինության ներսում միջանցքների անցուղիներին տրվել են կամարաձև լուծումներ, տեղադրվել են զարդանախշերով սյուներ: Ինտերիերի դիզայնում օգտագործվել է հիմնականում մարմար ու տրավերտին: Ցուցանմուշները

հիմնականում ներկայացվում են փայտե ապակեպատ ցուցափեղկերում, որոնք համադրվելով ընդհանուր քարային լուծումներին, բնական միջավայր են ստեղծում: Մատենադարանի գունային գամման, բավականին բաց է: Այստեղ գերակշռում են սպիտակից դեպի շագանակագույն անցումային երանգները, այդ իսկ պատճառով ընդհանուր միջավայրը փոքր-ինչ միապաղաղ է նայվում և չի շեշտում առկա նմուշների կարևորությունը:

Լուսավորությունը: Մատենադարանի ցուցասրահներում հիմնականում նվազագույնի է հասցված բնական լուսավորությունը: Առկա լուսամուտները ներսից երբեմն փակվում են մոխրագույն շերտավարագույրներով: Ցուցասրահում կա ընդհանուր լուսավորություն: Առաստաղին ամրացված ճենապակյա ջահերին և պատերի լուսամփոփներին լրացնելու են գալիս ցուցափեղկերի ներում առկա ուղղորդված լուսատուները: Սրահում առկա բաց երանգներն ու մարմարե հատակի արտացոլանքները բաց միջավայր են ստեղծում, որում լուսավորությունն ընդհանուր է դիտվում և ուղղորդված չէ շեշտելու այս կամ այն նմուշի կարևորությունը:

Կահավորումը: Ցուցասրահում ձեռագրերի ներկայացումն իրականացվում է միևնույն դասական ոճով նախագծված ցուցափեղկերի միջոցով, որոնք դասավորված լինելով ժամանակաբովանդակային հաջորդականությամբ, թելադրում են այցելությունների շարժման ընթացքը: Ցուցափեղկերն իրենց դասավորության բնույթից կախված ունեն ուղղաձիգ և հորիզոնական կառուցվածք: Դրանցից մի քանիսն էլ վեցանկյուն են հիշեցնում, և սրահի կենտրոնում տեղակայվելով, թույլ են տալիս այցելուներին բոլոր կողմերից դիտել ձեռագրերը: Մուգ փայտից պատրաստված ապակեպատ ցուցափեղկերն ունեն ներքին լուսավորություն, որով շեշտում են դրանցում առկա ձեռագրերը: Թեև ցուցափեղկերի նախագծումն իրականացված է հենց ձեռագրերի ներկայացման համար, բայց դրանցում չի լուծված ջերմախոնավային համակարգերի ներկառուցման հարցը: Այդ իսկ պատճառով դրանք կարող են վտանգի ենթարկել հին ձեռագրերը:

Միջազգային հայտնի զուգահեռները: Մատենադարանի նշանակությունն անգնահատելի է ոչ միայն Հայաստանում, այլև արտերկրում: Միջազգային զուգահեռներ անցկացնելով կարելի է առանձնացնել մեծ ճանաչում գտած

թանգարաններ և հին ձեռագրատներ, որոնցից ձեռագրերի պահպանման և մատուցման տեսանկյունից առանձնանում են Կազանաթենս թանգարանը Հռոմում, Բրիտանական գրադարանը, Վիկտորիա և Ալբերտ թանգարանը, Բլեքբերնի թանգարան-պատկերասրահը և այլն: Դրանք հիմնականում ունեն դասական ինտերիերի դիզայն, ինչպես և Մատենադարանը: Նման ավանդական լուծումները, որով բնորոշվում են ձեռագրատները, առավել ընդհանրական լուծումներ են հաղորդում ինտերիերին, դրանով իսկ չչեշտելով նմուշների նկատմամբ ուշադրությունը: Ինտերիերի դիզայնի համարձակ լուծումներով աչքի է ընկնում Չեսթեր Բյուրի թանգարանը Դուբլինում, որտեղ հորինվածքային ոճավորումը մոդեռնիստական է: Այստեղ օգտագործված են համարձակ և հնչեղ գունային համադրություններ, որոնք համալրվելով ուղղորդված լուսավորությամբ կոմպոզիցիոն դինամիկ միջավայր են ստեղծում (*տե՛ս նկար 15*): Կարելի է ասել, որ միջազգային փորձը վկայում է, որ մատենադարանի ինտերիերի ոճը արդիական է նմանօրինակ թանգարանների համատեքստում, սակայն ցուցանմուշների պահպանման, հորինվածքի միապաղաղության պատճառով այն ունի արդիականացման կարիք⁴⁵:

Եզրակացություն: Դիտարկելով համաշխարհային փորձը և ինտերիերի դիզայնի առանձնահատկությունները կարելի է հանգել եզրակացության, որ Մատենադարանը եզակի է իր ցուցանմուշների նշանակությամբ և հարստությամբ: Թեև այն վերջերս է վերանորոգվել, և հագեցվել է ժամանակակից տեխնոլոգիական սարքավորումներով, սակայն ցուցասրահներն, այնուամենայնիվ, ունեն արդիականացման կարիք, որի արդյունքում առավել նպատակահարմար կերպով կմշակվեն կոմպոզիցիոն հորինվածքը, գունալուսային և կահավորման համակարգերը:

4. Հայաստանի փայտարվեստի թանգարան (*տե՛ս նկար 16*)

Հայաստանի փայտարվեստի թանգարանը գողտրիկ հորինվածք ունի և ամփոփ ձևով ներկայացնում է հայ ժողովրդի ներդրումը այս ասպարեզում: Նմուշների պահպանման, ցուցադրման գործառույթներից բացի, թանգարանի գլխավոր

⁴⁵ McCabe G. B., Kennedy J. R., Planning the Modern Public Library Building, London, Libraries unlimited, 2003, page 89.

նպատակը ազգային փայտարվեստի ավանդույթների պահպանումն ու տարածումն է: Այստեղ նաև կրթություն են ստացել հայ փայտարվեստի նշանավոր գործիչներից շատերը, ուստի ինտերիերի դիզայնի առումով տվյալ թանգարանը հավասարապես պետք է ծառայի վերոհիշյալ գործառույթներից յուրաքանչյուրի իրականացմանը⁴⁶:

Փայտարվեստի թանգարանում, ինչպես հուշում է անվանումը, հիմնականում պահպանվում և ներկայացվում են միանման ցուցանմուշներ, ուստի ինտերիերի դիզայնի կազմակերպումը բավականին հեշտ կարող է լինել: Այն գտնվում է մայրաքաղաքի կենտրոնական հատվածում, սակայն գողտրիկ տեղակայում ունի ընդհանուր քաղաքային միջավայրում: Հայաստանի փայտարվեստի թանգարանը հիմնադրվել է 1977թ.-ին փայտաարդյունաբերության նախարար Ալբերտ Ստեփանյանի նախաձեռնությամբ, Գրիգոր Խանջյանի և Հովհաննես Շարամբեյանի աջակցությամբ: Թանգարանի ինտերիերի դիզայնը հատկանշական է նրանով, որ նախագծված է Գրիգոր Խանջյանի էսքիզներով, իսկ մետաղյա ձևավորումը պատկանում է նկարիչ-դարբին Վարդան Օհանյանին: Ինտերիերի դիզայնի վերլուծության համար նախ և առաջ անհրաժեշտ է ցուցակագրական ձևով ներկայացնել թանգարանի հիմնական բաժինները: Դրանք են.

1. հնագույն մշակութային բաժին,
2. քանդակի բաժին,
3. կիրառական արվեստի բաժին:

Թանգարանում ցուցադրվում են ինչպես հին, այնպես էլ ժամանակակից ստեղծագործողների արվեստի նմուշներ: Այստեղ ողջ ցուցադրությունը ծավալվում է երկհարկ միջավայրում, որը ներքին պատշգամբների միջոցով կապում է հարկերն իրար: Առաջին բաժնում փայտե առարկաներից բացի, ցուցադրվում են խեցեղենի, գունավոր մետաղների և կարպետագործության նմուշներ, որոնց մատուցումը յուրօրինակ լուծումներ է պահանջում թանգարանի ընդհանուր ոճավորման մեջ: Ցուցադրության հիմնական գաղափարը նմուշների բաժանումն է ըստ ժամանակային վաղեմության, ինչպես նաև նույնօրինակ աշխատանքների մեկ ընդհանրական

⁴⁶ Հայաստանի փայտարվեստի թանգարանի պաշտոնական կայք, <http://artwood.am/?lang=hy>. (հասանելի է 13.11.2016):

միջավայրում ներկայացումը, որը հնարավորություն է տալիս ուսումնասիրել և համեմատել դրանք:

Ֆունկցիոնալ գոտևորումը: Թանգարանի ներքին միջավայրը, ինչպես արդեն նշվեց, բաժանված է երկու միմյանց հետ կապ ունեցող հարկաբաժինների, որտեղ ըստ ժամանակաբովանդակային հաջորդականության զետեղված են ցուցանմուշները: Այստեղ կոմպոզիցիոն կենտրոնը այդքան էլ հստակեցված չէ, սակայն կարելի է ասել, որ հաջորդական դիտումը ծավալվում է ցուցափեղկերում առկա նմուշներով, հատակին դրված մեծածավալ աշխատանքներով և պատերից կախված օրինակներով, որոնք ընդհանրացվում են միևնույն նյութականությամբ:

Տեսողական հաղորդակցություն: Թանգարանի գոլտրիկ միջավայրը ամբողջությամբ թելադրում է այցելուի դիտման հաջորդականությունը, բայցևայնպես ցանկալի կլիներ այստեղ ևս տեսնել տեսողական հաղորդակցության որոշակի օրինակներ, որոնք փոքր-ինչ կտարանջատեին վերոհիշյալ երեք բաժանումները: Թանգարանում բոլորովին բացակայում են տեսողական հաղորդակցության գրաֆիկական լուծումները, որոնք բացառապես արտահայտվում են ցուցանմուշների տակագրերում, փոքր տարամասշտաբ սպիտակ թիթեղներին համապատասխան գրվածքներով: Այսպիսով կարելի է ասել, որ փայտարվեստի թանգարանում տեսողական հաղորդակցության որոշ տարրերի կիրառումը է՛լ ավելի ամբողջական կդարձներ թանգարանային միջավայրը:

Ինտերիերի կոմպոզիցիոն սկզբունքները: Թանգարանի հորինվածքն ունի ավանդական բնույթ: Այստեղ ցուցադրության գաղափարը բացահայտվում է հաջորդական դիտման ընթացքում: Ցուցանմուշների դասավորությունը թանգարանում կազմակերպված է այնպես, որ ստեղծի այցելությունների ռիթմիկ շարժ, կոտրելով ընդհանուր միջավայրի միապաղաղությունը: Ցուցափեղկերի միջև հեռավորությունը այդքան էլ կանոնավոր չէ, դրան յուրահատուկ ռիթմ են հաղորդում պատերից կախված հաջորդական դասավորվածությամբ նմուշները:

Ինտերիերի գունային և տեքստուրալ համադրումները: Ուշադրություն դարձնելով թանգարանի ընդհանուր հորինվածքին, ակնհայտ է դառնում, որ այստեղ հիմնականում բնական նյութերով է կազմակերպված ողջ ինտերիերի դիզայնը:

Այսպիսով փայտե ցուցափեղկերին, համադրվելու են գալիս փայտե բազրեծողերը, ինչպես նաև մետաղական տարրերը, պատերի ու հատակի քարե լուծումները: Այսպիսի գունային համադրումները սովորաբար թանգարանային միջավայրում այդքան էլ շահեկան չեն ընկալվում, քանի որ գունային հնչեղ կոնտրաստների օգտագործումը կոտրում է ինտերիերի միապաղաղությունը, կոմպոզիցիոն ռիթմ հաղորդում հորինվածքին, և որ ամենակարևորն է, թելադրում ցուցանմուշների հիերարխիան: Նման ֆակտուրալ համադրությունը թեև շատ հետաքրքիր է, բայց որոշ չափով միապաղաղ է և չի կենտրոնացնում դիտողի ուշադրությունը դեպի նմուշները, իսկ փայտե պատվանդանի վրա փայտե առարկաների ներկայացումը խաթարում է դրանց ամբողջական ընկալումը:

Լուսավորությունը: Թանգարանում առկա են լուսամուտներ, և լուսավորությունն իրականանում է ինչպես բնական, այնպես էլ արհեստական եղանակով: Այստեղ լուսամուտներից ներթափանցող լույսին լրացնելու են գալիս փայտե կարկասային ուղղորդված լուսավորության համակարգը և կետային ուղղորդված լուսատուները, որոնք փակցված են ինչպես պատերին, այնպես էլ փակ ցուցափեղկերին: Ի տարբերություն ցուցադրության միապաղաղ պասիվ գունային գամմային, դրանք բավականին մեծ սև ծավալներ ունեն, որոնք լրացուցիչ ուշադրություն են գրավում, դրանով իսկ շեղելով այցելուի ուշադրությունը նմուշներից:

Կահավորումը: Թանգարանի ցուցափեղկերը փայտե, ապակեպատ վերնամասով պատվանդանների տեսք ունեն: Դրանց ներսում նույնպես երբեմն դրված են առանձին պատվանդաններ, տարբեր նմուշների մատուցման տեսողական մակարդակին էրգոնոմիկ տեսանկյունից ավելի նպատակահարմար ներկայացնելու նպատակով: Սրահներում կան նաև բաց փայտե պատվանդաններ: Որոշ նմուշներ, իրենց մեծ չափերի պատճառով, նույնիսկ դրված են անմիջապես հատակին: Այնուամենայնիվ, կարելի է ասել, որ ցուցասրահների կահավորումն իրականացված է մեկ ոճային միասնությամբ, որը բնորոշում է ամբողջ թանգարանի հորինվածքը:

Միջազգային հայրնի զուգահեռները: Միջազգային նույնանման թանգարաններից աչքի է ընկնում Ֆիլադելֆիայի Փայտարվեստի կենտրոնը, որտեղ ներկայացվում են ինչպես մշտական, այնպես էլ ժամանակավոր փայտարվեստի

ցուցադրություններ: Այստեղ գործում է նաև թանգարանային հետազոտական գրադարան և խանութ: Թանգարանում ցուցադրական հորինվածքը բաժանված է երկու հարկերում: Այստեղ գունային գամման հիմնականում սպիտակ է, որի վրա առավել ցայտուն կերպով շեշտվում են տարաբնույթ փայտարվեստի նմուշները: Դրան լրացնելու են գալիս փայլուն գրանիտե հատակը, և սպիտակ կարկասային լուսավորությունը: Այսպիսով ընդհանուր առմամբ ինտերիերի դիզայնը լուծված է սրելու դիտողի ուշադրությունը: Ցուցասրահներում շատ է օգտագործված ապակի: Հատկանշական է նաև ցուցափեղկերի դիզայնը, որը համապատասխանում է նմուշների առանձնահատկություններին: Դրանով հավասարակշռության է բերված տարամասշտաբ նմուշների ներկայացումն ըստ էրգոնոմիկ նկատառումների (*տե՛ս նկար 17*)⁴⁷:

Եզրակացություն: Փայտարվեստի թանգարանի ինտերիերի դիզայնը, ինչպես արդեն նշվեց, կատարված է բնական նյութերի կիրառմամբ: Պատերի քարե կարմրադեղնավուն լուծումներին համադրվելու են գալիս պատվանդանների փայտե երանգները: Միջավայրի այսպիսի միապաղաղությունը որոշ չափով խաթարում է թանգարանի գրավչությունը: Բացի այդ պատերին և պատվանդաններին ցուցադրվող նմուշները նույն երանգն ունեն և դրանով իսկ չեն առանձնանում: Ուստի կարելի է ասել, որ որքան էլ հաճելի է բնական նյութերով հագեցած միջավայրը, բայց այստեղ կոնտրաստներ ստեղծելու մեծ անհարժեշտություն կա, որը կառանձնացնի ինչպես ցուցանմուշները, այնպես էլ կստեղծի որոշակի լրացուցիչ ռիթմ: Վերը նշվածից երևում է, որ այս թանգարանը յուրահատուկ լուծումներ է պահանջում:

5. Հայաստանի պատմության թանգարան (տե՛ս նկար 18-21)

Հանդիսանալով հարուստ պատմական անցյալ ունեցող երկիր՝ Հայաստանն ունի իր մշակութային վաղեմությունն ապացուցող բազում նյութեր, որոնք զետեղված են Հայաստանի պատմության թանգարանում: Այստեղ են գտնվում հայկական մշակույթի պատմական վկայությունները, հայկական լեռնաշխարհում արվեստի

⁴⁷ The Centre for Art in Wood, <https://centerforartinwood.org/>. (հասանելի է 14.11.2016):

առաջին նմուշները: Այստեղ պահպանվող և ցուցադրվող նյութը հսկայական արժեք է ներկայացնում ուսումնասիրությունների, պահպանման և ցուցադրման համար:

Հայաստանի պատմության թանգարանը հիմնադրվել է Հայաստանի Առաջին Հանրապետության պառլամենտի օրենքով (N 439, 09.09.1919թ.): Այն կոչվել է Ազգագրական-մարդաբանական թանգարան-գրադարան: Այցելուների համար այն բացվել է 1921թ.-ի օգոստոսի 20-ին: Սակայն այս ժամանակահատվածում շենքն ունեցել է բոլորովին այլ կառուցվածք: 1935թ.-ին մայր թանգարանի հավաքածուների հիման վրա ստեղծվեցին այլ ինքնուրույն թանգարաններ.

1. գեղարվեստական բաժնի հիման վրա (ղեկավար Ռ. Դրամբյան) կազմակերպվեց ՀՄԽՀ Կերպարվեստի թանգարանը (այժմյան՝ Հայաստանի ազգային պատկերասրահը), - հանձնվեց 1660 առարկա
2. գրական բաժնի հիման վրա ձևավորվեց ՀՄԽՀ Գրական թանգարանը (այժմյան՝ Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանը), - հանձնվեց 301 առարկա և 1298 ձեռագիր⁴⁸:

Պատմության թանգարանի և ազգային պատկերասրահի շենքի կառուցումը մեկնարկել է 1940—1950թթ.-ին: Ինչպես արդեն նշվել է՝ Պատմության թանգարանը և Ազգային պատկերասրահը միևնույն կառույցում են տեղակայված: Հայաստանի ազգային պատկերասրահի վերլուծության մեջ արեն իսկ քննարկվել է դրա հիմնական ճարտարապետական հորինվածքը (ճարտ. Մ. Գրիգորյան, է. Աարափյան, տե՛ս էջ 88), ուստի ստորև կքննարկվեն միայն Հայաստանի պատմության թանգարանի ինտերիերի դիզայնի հիմնական առանձնահատկությունները:

Ֆունկցիոնալ գոյրևորումը: Հանրապետության հրապարակի կոմպոզիցիոն կենտրոնական շինության կամարաշարի ավագ կամարից բացվում է մուտքը դեպի Հայաստանի պատմության թանգարան, ինչպես նաև Հայաստանի ազգային պատկերասրահ, իսկ ավելի կոնկրետ դեպի ընդհանուր նախասրահ: Թանգարանում տարածությունը բաժանված է սրահների, որտեղ և բացահայտվում է ցուցադրական մտքի հաջորդականությունը: Նախասրահից վեր են խոյանում դեպի երկրորդ հարկ

⁴⁸ Հայաստանի պատմության թանգարանի պաշտոնական կայք, <https://historymuseum.am/>. (հասանելի է 20.12.2016):

տանող շքասանդուղքները, ինչպես նաև աջ և ձախ կողմեր են բացվում ցուցադրության սրահները: Այստեղ ցուցադրական միտքը բացահայտվում է ուղղորդված հերթականությամբ, այսինքն՝ նախասրահից ձախ մտնելով, ցուցասրահներում միշտ գործում է ձախակողմյան ուղղվածությունը:

Երկրորդ հարկում ցուցադրության համար նախատեսված տարածքն ավելի փոքր է, սակայն միևնույն ժամանակ խիստ հավասարակշռված է իր հատակագծային լուծումներով: Այստեղ շքասանդուղքները բարձրանում են դեպի ֆոյե, որտեղից իրար դեմ-դիմաց մուտքեր են բացվում դեպի ցուցասրահներ: Թանգարանում ցուցադրվող նմուշները խիստ պայմաններ են պահանջում պահպանության և ներկայացման համար: Ցուցանմուշներից շատերը թվագրվում են մինչև մ.թ.ա. 10.000թթ., որով էլ ավելի է բարդանում, պահպանության, անվտանգության և մատուցման խնդիրների լուծումը: Թանգարանում բավականին հետաքրքիր լուծում է տրված գունային հարաբերություններին, որոնք ուղղորդում, թելադրում և միաժամանակ համապատասխան մթնոլորտ են ստեղծում: Թեև ցուցասրահներում գունային լուծումները տարբեր են, սակայն հիմնականում կատարված են միևնույն ոճով: Սրահից սրահ անցումը հիմնականում կատարվում է սառը գույների հարաբերությամբ, որով և չի աղճատվում տարածքային ամբողջականությունը: Այս ամենը համալրվում է նաև համապատասխան լուսավորությամբ, որով մթնոլորտն է՛լ ավելի շեշտված և կենտրոնացված է դառնում: Նշենք, որ կան թանգարաններ, որտեղ սրահից սրահ անցումը կատարվում է կտրուկ գունային հարաբերություններով, օրինակ՝ Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանը: Այստեղ սրահների հաջորդականությունը բացահայտվում է հագեցած կարմիր, մոխրագույն, կապույտ գույների համադրմամբ: Այնտեղ նման լուծումը լիովին բացատրված է, քանի որ ցուցադրվող նյութը առաջին սրահում պատկանում է գրական թեմային, ուստի ընտրված է թանաքի կապույտը, ապա կտրուկ անցում դեպի թատերարվեստ՝ հետևաբար և բեմի վարագույրի կարմիրը, և կինոարվեստ՝ մոխրագույնով, հիշեցնելով հին ֆիլմերի սև և սպիտակ գունեղանքները: Այսպիսով մենք կարող ենք ասել, որ գունային լուծումների հարաբերությունները շատ յուրօրինակ են և կախված են ցուցադրության տեսակից և միջավայրային առանձնահատկություններից:

Պատմության թանգարանում այս լուծումը շատ գրագետ է տրված. քանի որ այստեղ անհրաժեշտ է նշել սրահների միջև տարբերություններ, սակայն ոչ կտրուկ, այլ մեղմ անցումներով ուղղորդել դիտորդին, միաժամանակ չխախտելով տարածքային ամբողջականությունը, պահպանելով ներդաշնակ ու միանվագ հերթափոխություն⁴⁹:

Տեսողական հաղորդակցություն: Հայաստանի պատմության թանգարանի յուրաքանչյուր ցուցանմուշ ունի իր տակագիրն ու բացատրությունը: Հենց դրանք էլ հանդիսանում են ցուցադրության գրաֆիկական մասի անբաժանելի մասը, որոնք ամբողջապես ինտեգրվում են ինտերիերի դիզայնին: Թանգարանում դժվար է գտնել այցելուներին ուղղորդող նշաններ, որոնք առավել դյուրին կարող էին դարձնել մարդկանց կողմնորոշումը, սակայն դրանց բացակայության պայմաններում ևս, Հայաստանի պատմության թանգարանում գրաֆիկական մասը բավականին գրագետ և գեղագիտորեն հավասարակշռված լուծում է ստացել:

Ինտերիերի կոմպոզիցիոն սկզբունքները: Ցուցասրահում ցուցափեղկերի դասավորությունը նախատեսված է հաջորդական դիտման համար: Ցուցանմուշները մեծամասամբ զետեղված են համապատասխան ցուցափեղկերում, որտեղ ևս դրանք տեղադրված են տարամասշտաբ պատվանդանների վրա՝ պայմանավորելով տարաբնույթ առարկաների դիտողի աչքի հորիզոնի նկատմամբ առավել հարմար դասավորությունը: Ցուցասրահներում կան նմուշներ, որոնք առանց ապակեպատ պաշտպանաշերտի պարզապես տեղադրված են պատվանդանների վրա՝ դրանով իսկ հնարավորություն տալով դիտողին առավել լավ զգալ իրերի նյութականությունն ու տեսակը: Հայաստանի պատմության թանգարանում մեծ տեղ է տրված նաև գորգերի և կարպետների ցուցադրությանը, որոնք կախված լինելով պատերին, թույլ են տալիս լավ ուսումնասիրել և տեսնել դրանց յուրաքանչյուր դրվագը, գործվածքի առանձնահատկությունները: Այստեղ կան նաև մարդու հասակին համապատասխան մոդելներ, որոնց վրա համապատասխան ցուցափեղկերում ներկայացված են ազգային տարազի օրինակներ: Որոշ սրահներում առկա են նաև ապակեպատ որմնախորշեր, որոնցում ևս ցուցանմուշներ են ներկայացված: Հայաստանի պատմության թանգարանում հորինվածքը կարելի է համարել պրոգրեսիվ, քանի որ ցուցադրությունը

⁴⁹ Ney R., Torossian R., Karapetyan B., Yerevan, Tour Armenia Travel Guide, 2007, page 42.

սկսում է սակավ, բայց խոշոր նմուշներից, հաջորդելով ավելացող փոքրածավալ օրինակներով ու գունային գամմայի խաղով:

Ինտերիերի գունային և տեքստուրալ համադրումները: Ցուցասրահի ընդհանուր գունային գամման սկսվում է պատերի և ցուցափեղկերի պատվանդանների կապտագորշ երանգներով, որոնցում սպիտակ հիմքերի վրա ուղղորդված լուսավորությամբ առանձնանում են տարաբնույթ նմուշները: Հաջորդ սրահներում արդեն գունային գամման ավելի ակտիվ բնույթ է ստանում, դրանում պայմանավորված նմուշների գունազարդությամբ: Այստեղ պատերի հարդարանքում, ցուցանմուշների պատվանդաններին երբեմն հանդիպում են տաք աղյուսագույնն ու շագանակագույնը: Բոլոր ցուցասրահներն իրար են կապում ընդհանրական ճերմակ առաստաղը և մանրահատակը:

Լուսավորությունը: Հայաստանի պատմության թանգարանում բացակայում են լուսամուտները: Ցուցադրությունն ամբողջապես լուսավորված է արհեստականորեն: Ցուցափեղկերում առկա ուղղորդված լուսատուները լրացնում են առաստաղին փակցված կարկասային լուսավորությունը: Այսպիսի մոտեցումը ստեղծում է ամփոփ և ներդաշնակ միջավայր, շեշտելով նմուշների կարևորությունն ու տեղակայումը:

Կահավորումը: Թանգարանի կահավորումն իրականացված է միասնական ոճով: Ցուցափեղկերի մի մասը ապակեպատ է: Երբեմն դրանց ներսում կարելի է նկատել տարամասշտաբ պատվանդաններ, որոնք էրգոնոմիկ տեսանկյունից հարմարավետ են դարձնում նմուշների ներկայացումը: Ցուցասրահներում կարելի է տեսնել նաև բաց պատվանդաններ, որոնք առանց ապակեպատ պաշտպանաշերտի հնարավորություն են տալիս դիտողին զգալ իրերի նյութականությունը: Թանգարանում ցուցադրվող գորգերն ու կարպետները ևս ներկայացված են դրանց մասշտաբին համապատասխան հիմքերի վրա: Ցուցասրահների կահավորման մասն են կազմում նաև ապակեպատ որմնախորշերը, որոնցում ներկայացվում են համեմատաբար ավելի փոքր նմուշներ:

Միջազգային հայտնի գուգահեռները: Համաշխարհային պատմական թանգարանների շարքում իր առանձնահատուկ դերն ունի Ակրոպոլիս թանգարանը Հունաստանում: Այն այցելուների առջև իր դռները բացել է 2009թ.-ին: Թանգարանի

ճարտարապետը Բերնարդ Չումին էր, ում առաջարկած դիզայնը զարգանում է եռաստիճան կոնցեպցիայով՝ լուսավորություն, շարժում և թեորետիկ ծրագրավորված տարրեր: Այս խորհրդանիշերը միասին վերցրած ամփոփում են հունական ճարտարապետության մաթեմատիկական կոնցեպտուալ հստակությունը: Թանգարանի հավաքածուն տեղակայված է 3 հարթակներում, իսկ միջին չորրորդ հարկը նախատեսված է թանգարանի խանութի, սրճարանի և աշխատասենյակների համար: Թանգարանի առաջին հարկում ցուցադրված են Ակրոպոլիսի գտածոները: Երկարածիգ, ուղղանկյուն հատակագծով դահլիճի հատակն ունի թեքություն, որը ժայռ բարձրանալու տպավորություն է թողնում: Դրան հաջորդում է ընդարձակ ասիմետրիկ հատակագծով դահլիճը, որտեղ ցուցադրված են արխայիկ շրջանի գտածոներ: Միննույն հարկում տեղակայված են նաև ճարտարապետական կառույցների մեծամասշտաբ կտորներ, ինչպիսիք են Էրեքթեյոնը, Նիկեի տաճարը և այլն: Թանգարանի էքսպոզիցիան կազմակերպված է վարընթաց հաջորդականությամբ, ըստ որի այցելուները նախ բարձրանում են վերնահարկ, որից թեմատիկ ժամանակաբովանդակային հաջորդականությամբ շարժվում են ներքև: Թանգարանի վերին հարկը կառույցի նկատմամբ շեղ է տեղակայված՝ դրանով իսկ կրկնելով Ակրոպոլիսի ուղղությունը: Թանգարանի ապակյա պատերը բոլոր չորս ճակատներից թույլ են տալիս բնական լույսով արտացոլել մարմարն այնպես, ինչպես անտիկ տաճարում: Դիտման հարմարավետության համար մարմարե ճակատակալ քարերը ցուցադրված են աչքի հորիզոնին զուգահեռ: Թանգարանը, ինչպես արդեն նշվեց կառուցված է հնագիտական գոտու վրա, այդ իսկ պատճառով հատակին երբեմն օգտագործվում է ապակի, որը թույլ է տալիս դիտել ներքևում իրականացվող պեղումները: Թանգարանում կա նաև ամֆիթատրոն, վիրտուալ թատրոն և ժամանակավոր ցուցադրությունների համար նախատեսված դահլիճ (*տե՛ս նկար 22*):

Եզրակացություն: Հայաստանի պատմության թանգարանի ինտերիերի դիզայնի վերոհիշյալ վերլուծությունը թույլ է տալիս հանգել եզրակացության, որ այն յուրօրինակ է տարածաշրջանում իր ցուցանմուշների արժեքավորությամբ: Թանգարանը նաև շատ հարմար դիրք է զբաղեցնում ընդհանուր քաղաքային միջավայրում: Պատմության թանգարանի ինտերիերի դիզայնը բավականին գրագետ է կազմակերպված: Հաշվի են

առնված ինտերիերի դիզայնի կազմակերպման հիմնական դրույթները, որոնք պայմանավորում են ինչպես բովանդակային հաջորդականությունը, այնպես էլ ցուցափեղկերի դասավորությունը, կոմպոզիցիոն առանձնահատկությունները: Դիզայներական տեսանկյունից լավագույնս են կազմակերպված նաև լուսավորության սխեմաներն ու ցուցափեղկերի տեսակները: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ Հայաստանի պատմության թանգարանը համապատասխանում է նույնապրոֆիլ թանգարանների միջազգային չափանիշներին: Այստեղ որոշ սրահներում վերանորոգման կարիք զգացվում է այնուամենայնիվ: Երբեմն էլեկտրահաղորդակցության լարերը, վարդակներն ու անջատիչները անթաքույց երևում են և ուշադրություն կենտրոնացնում:

6. Հովհաննես Թումանյանի թանգարան (տե՛ս նկար 23,24)

Երևանում գործող թանգարանների շարքում իր առանձնահատուկ դերն ու նշանակությունն ունի Հովհ. Թումանյանի թանգարանը, որն իր ճարտարապետական հորինվածքով և քաղաքային տեղակայմամբ բավականին շահեկան դիրք ունի, բարձր աստիճանահարթակով վեր խոյանալով համանուն փողոցի գլխամասում: Թանգարանի հորինվածքում ամփոփված են գրողի տունը վերարտադրող ինտերիերները, ցուցադրության ավանդական սրահները, գրադարանը, ժամանակավոր ցուցադրությունների ու միջոցառումների անցկացման համար նախատեսված դահլիճը: Վերոհիշյալ թանգարանը կառուցվել է հենց այդ նպատակին ծառայելու համար: Դա է պատճառը, որ հատակագծային հորինվածքը լիովին համապատասխանում է թանգարանի բովանդակությանը:

Ցուցադրությունը հիմնականում կարելի է բաժանել հետևյալ կերպ.

1-ԻՆ ՀԱՐԿ	Ժամանակագրական կարգով ներկայացված են Թումանյանի կյանքին և գործունեությանը վերաբերող նյութերը՝ լուսանկարները, նամակները, փաստաթղթերը, ձեռագրերը, ինչպես նաև հեղինակի հեքիաթների և պատմվածքների թեմաներով ստեղծված պատկերները: Չորս սրահներով է անցնում գրողի կյանքը՝ ծնունդից մահ:
-----------	---

2-ՐԴ ՀԱՐԿ	Այստեղ վերարտադրված է Թումանյանի թիֆլիսյան վերջին բնակարանի ինտերիերը՝ վեց սենյակներով և ժամանակին եղած կահավորանքով: Պահպանվել է գրողի Թիֆլիսի տան մթնոլորտը: Հուշային ցուցադրությունն իրականացված է բանաստեղծի տան ճաշասենյակի, հյուրասենյակի և աշխատասենյակի ինտերիերի բաղադրիչ առարկաներով: Առանձին մեծ սրահում, ցուցադրվում է բանաստեղծի անձնական գրադարանը՝ 8000 օրինակ տարբեր լեզուներով և տարբեր ազգային, ժանրային բովանդակությամբ գրքերի ընտրանիով:
-----------	--

Թանգարանի ինտերիերում գերակշռում է գրողի անմիջական ներկայությունն արթնացնող մթնոլորտը, որի վառ դրսևորումն է ինտերակտիվ ցուցադրությամբ արտահայտված վերնատան վերարտադրությունը:

Թանգարանի ինտերիերում իր առանձնահատուկ նշանակությունն ունի նաև «Լոռվա ծորը» համայնապատկերը, որի դիտումն ուղեկցվում է «Անուշ» օպերայի հնչյունների ներքո: Ինչպես արդեն նշվեց թանգարանն ունի նաև լուսավոր և ընդարձակ դահլիճ նախատեսված ժամանակավոր ցուցահանդեսների, միջոցառումների և ներկայացումների համար:

Թանգարանի ողջ էությունը և հետաքրքրությունը մասնավորապես կենտրոնանում է գրողի տան ինտերիերը վերարտադրող սրահներում: Այստեղ պահպանված են նրա և ընտանիքի անդամների սենյակներն իրենց կահավորանքով և հարդարանքով, կա նաև գրադարան, որտեղ պահպանված են հազվագյուտ արժեք ներկայացնող գրքեր: Գրքերը, հարազատների լուսանկարներն, արձանիկները, կտավներն ու գրապիտույքը է՛լ ավելի անմիջական են դարձնում հեղինակի ներկայությունը տվյալ միջավայրում: Նման մոտեցմամբ են կազմակերպված նաև հյուրասենյակն ու ճաշասենյակը, որտեղ բացված է հսկա սեղան՝ 12 հոգու՝ տասը զավակների և տեր և տիկին Թումանյանների համար՝ հիշեցնելով նրանց առօրյան: Այստեղ կա նաև մանկասենյակ, որտեղ թեև իրերը չեն պահպանվել, սակայն պակասը

լրացված է Թումանյանի տասը երեխաների մասին պատմող նյութերի ցուցադրությամբ, փակցված են նրանց լուսանկարները, կենսագրությունները, սեղանիկներում դասավորված են նրանց պատկանող անձնական իրեր, փաստաթղթեր⁵⁰:

Տեսողական հաղորդակցություն: Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանում դժվար է գտնել արդի տեսողական հաղորդակցության նմուշներ: Բացակայում են ուղղորդիչ նշաններն ու գրաֆիկական մշակումները: Ինչպես բոլոր թանգարաններում, այստեղ ևս թանգարանային առարկաների մասին տեղեկությունները ներկայացված են ավանդական փոքրածավալ տակագրերով: Այսպիսով կարելի է ասել, որ դրանք տեսողական հաղորդակցության միակ դրսևորումներն են թանգարանում: Հաշվի առնելով, որ թանգարանն ունի տարբեր գոտիներ, հարկաբաժիններ և ինտերակտիվ ցուցադրություն, կարելի էր ընդհանուր հորինվածքի ոճին համապատասխան մշակել նաև կողմնորոշիչ նշաններ, որոնք ավելի ամբողջական կդարձնեին ինտերիերի հորինվածքը:

Ինտերիերի կոմպոզիցիոն սկզբունքները: Թանգարանի ցուցասրահներում ցուցափեղկերի դասավորությունը նախատեսված է հաջորդական դիտման համար: Դրանք միմյանց նկատմամբ ունեն կանոնավոր տեղակայում, և ուղղորդում են այցելուներին ըստ թեմատիկ հաջորդականության: Ընդհանուր միջավայրի կազմակերպումը միապաղաղ է: Հորինվածքում չի շեշտվում դոմինանտն ու երկրորդականը: Ցուցասրահներում առկա ինտերակտիվ սարքավորումները ևս չեն առանձնանում իրենց դասավորվածությամբ և չեն գրավում այցելուի ուշադրությունը: Բացառություն է կազմում երկրորդ հարկի հուշային գոտին, որի կազմակերպումը ամբողջապես արթնացնում է հեղինակի կենդանի վերհուշը:

Ինտերիերի գունային և տեքստուրալ համադրումները: Թանգարանում ընդհանուր առմամբ գերիշխում է պատերի և առաստաղի սպիտակ հարդարանքը, որը համադրվում է հատակի շագանակագույն փայլուն մակերեսին: Ինտերիերի այսպիսի լուծումը շատ ընդհանրական է դիտվում: Այն համադրվում է ցուցափեղկերի նույնօրինակ փայտե կահավորմանը և չի կոտրում ինտերիերի միապաղաղությունը:

⁵⁰Հովհաննես Թումանյանի թանգարանի պատմությունը, <http://www.toumanian.am/tangaran/tang.php>. (հասանելի է 24.05.2015):

Լուսավորությունը: Թանգարանում լուսավորությունն իրականացվում է բնական և արհեստական եղանակով: Ցուցասրահների որոշ հատվածներում կան մեծ լուսամուտներ, որոնցով լույսն անխոչընդոտ թափանցում է սրահ և համալրում ընդհանուր լուսավորությունը: Թանգարանի ողջ տարածքում առաստաղին փակցված են ջահեր, որոնք այդքան էլ մասնագիտացված չեն թանգարանային միջավայրի համար և չեն ապահովում հավասարակշռված ցրված լուսավորություն: Ցուցանմուշները շեշտվում են ցուցափեղկերի ներսում առկա լուսատուների միջոցով, որոնք կենտրոնացնում են ուշադրությունը կոնկրետ առարկաների վրա:

Կահավորումը: Թումանյանի թանգարանում ցուցափեղկերը միօրինակ են և նախագծված են միևնույն սկզբունքով: Դրանք ապակեպատ են, հիմքը հիմնականում փայտե է, իսկ ապակու ետևից նշմարվում է պաստելային փիրուզագույն ֆոնը: Դրանք ներսից բաժանված են հարկաբաժինների, որոնց վրա էլ ներկայացված են տարաբնույթ գրքեր, ձեռագրեր և այլն: Վերոհիշյալ ցուցափեղկերն ունեն նաև ներկառուցված լուսավորություն, որի օգնությամբ շեշտվում են դրանցում ներկայացվող նմուշները: Թանգարանում հանդիպում են նաև հորիզոնական ցուցափեղկեր, որոնք համեմատաբար ավելի փոքր են: Առանձին մաս է կազմում թանգարանի հուշային գոտու կահավորումը, որը պատկանում է անմիջապես մեծանուն հեղինակին:

Միջազգային հայտնի զուգահեռները: Հուշային թանգարաններից յուրաքանչյուրը առանձնակի մոտեցում է պահանջում: Դա է պատճառը, որ խոսելով դիզայնի դրական ու բացասական կողմերի մասին կարելի է հիմնականում ընդհանուր դրույթների վրա հիմնվել: Այնուամենայնիվ հետաքրքիր լուծումներով է աչքի ընկնում Մարկ Տվենի տուն-թանգարանը: Այստեղ բավականին նորարարական լուծումներ են դրսևորված: Հատկանշական է այն հանգամանքը, որ թանգարանի ներքին միջավայրում տեղ են գտել ինչպես գրողի բնակելի միջավայրի հուշային ցուցադրությունները, այլև նրա իրերի և աշխատությունների առանձին ներկայացումը: Առանձին սրահով կազմակերպված է նաև տպագրական հաստոցների և նյութերի ցուցադրություն: Այստեղ գործում է նաև ընդարձակ գրախանութ: Ընդհանուր թանգարանային միջավայրը կրում է միասնական հորինվածք: Այն հագեցած է ժամանակակից լուսային և ինտերակտիվ սարքավորումներով, օգտագործված են

համարձակ գունային համադրություններ, որի շնորհիվ թանգարան այցելությունը դառնում է գրավիչ և դինամիկ (*տե՛ս նկար 25*):

Եզրակացություն: Հովհաննես Թումանյանի թանգարանը առանձնակի կարևորություն է կրում հայկական հուշային թանգարանների շարքում: Այն ունի շատ լավ ճարտարապետական հորինվածք, որի հիման վրա կարելի է ստեղծել միասնական գրագետ ինտերիերի հորինվածք: Թեպետ թանգարանի հատակագծային լուծումները բավականին շահեկան են, սակայն հիմնանորոգումների բացակայության պատճառով այստեղ լուսավորության, կահավորման, գունային և էրգոնոմիկ լուծումները ունեն արդիականացման կարիք:

7. ՀՀ ՊՆ Մայր Հայաստան զինվորական թանգարան (*տե՛ս նկար 26-29*)

ՀՀ ՊՆ Մայր Հայաստան զինվորական թանգարանը Երևանում գործող ռազմական թանգարանների լավագույն օրինակներից է: Հանդիսանալով Ռաֆայել Իսրայելյանի ճարտարապետական մտքի թռիչքի արդյունքը՝ իր հատակագծային լուծումներով ողջ համալիրի շրջանակներում լավագույնս է ընդգրկել ներկայացվող ցուցադրությունները: Թանգարանն արտահայտում է ոչ միայն պատմական այդ շրջանի հզոր ռազմական իրական պատկերը, այլև ներկայացնում է այդ իրականության ողջ հերոսական շունչն ու ոգին: Հուշահամալիրը բացվել է 1950թ.-ի նոյեմբերի 29-ին Հաղթանակ զբոսայգում: Նախնական հորինվածքով պատվանդանի վրա տեղադրվել էր ԽՍՀՄ Ժողովրդական նկարիչ Սերգեյ Մերկուրովի հեղինակած Ի. Ստալինի 17մ բարձրության պղնձե կոփածո արձանը, սակայն 1962թ.-ին այն հանվել է, և 1967թ.-ին տեղադրվել է Հայաստանի Ժողովրդական նկարիչ Արա Հարությունյանի հեղինակած 22մ բարձրությամբ Մայր Հայաստան պղնձե կոփածո արձանը: Հուշահամալիրը նախագծվել է հայկական եկեղեցու կառուցվածքով, ընդհանուր բարձրությունը 52մ է: 1970թ.-ին բացվել է Հայաստանը Հայրենական մեծ պատերազմում 1941-1945թթ. թանգարանը, որը 1995թ.-ին վերանվանվել է Մայր Հայաստան զինվորական թանգարանի: Թանգարանը հիմնականում արտացոլում է 2 թեմա՝ Հայ Ժողովրդի մասնակցությունը 2-րդ համաշխարհային պատերազմին և Արցախյան ազատագրական պատերազմ:

Ֆունկցիոնալ գոյությունը: Թանգարանի ցուցադրությունը կազմակերպված է հետևյալ կերպ⁵¹.

1-ին Հարկ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ	Փառքի հուշասրահ
	Ֆիդայիներ
	Ցարական բանակի հայազգի գեներալներ
	Հայաստանի Հանրապետությունը (1918-1920թթ.) և նրա զինված ուժերը
	Հայերի մասնակցությունը Աֆղանական պատերազմին (1979-1989)
	76-րդ հայկական հրաձգային դիվիզիա
	408-րդ հայկական հրաձգային դիվիզիա
	ԼՂՀ մասնակցությունը Հայրենական Մեծ պատերազմին
	89-րդ Հայկական Թամանյան հրաձգային դիվիզիա
	Խորհրդային միության նավատորմ Ծովակալ Հովհաննես Իսակով
	Խորհրդային միության մարշալ Հովհաննես Բաղդամյան, ԽՍՀՄ զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Բաբաջանյան
	390-րդ Հայկական հրաձգային դիվիզիա
	Հայերի մասնակցությունը դիմադրական և պարտիզանական շարժումներին, հայ հետախույզներ
	Գեղարվեստական պատկերասրահ
	Հայ առաքելական եկեղեցու մասնակցությունը Հայրենական Մեծ պատերազմին
	409-րդ Հայկական հրաձգային դիվիզիա

⁵¹ ՀՀ ՊՆ Մայր Հայաստանի զինվորական թանգանի ցուցադրություններ,
<http://www.mayrhayastan.am/exhibitions.html>. (հասանելի է 18.06.2015):

2-րդ Հարկ ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ- ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ	Նախասրահ (Մարշալներ Հովհաննես Բաղրամյանի, Համազասպ Բաբաջանյանի, Արմենակ Խանփերյանցի (Խուդյակով), ծովակալ Հովհաննես Իսակովի կիսանդրիներ, Ռայխստագի գրավում և Մարտեր Կովկասի համար դիռռամաներ)
	Թանգարանի պատմություն, Արցախյան ազատագրական շարժման սկզբնավորում, երկրապահ կամավորական ջոկատների գործունեություն
	Շահումյանի և Գետաշենի ազատագրական մարտեր և ինքնապաշտպանություն, արվեստագետ ազատամարտիկների ստեղծագործություններ, Արծվաշենի ինքնապաշտպանություն, սփյուռքահայերի մասնակցությունը Արցախյան ազգային-ազատագրական պատերազմին
	Վազգեն Սարգսյան, Արցախյան ազգային-ազատագրական պատերազմում զոհվածներ, հայ առաքելական եկեղեցին Արցախյան ազգային-ազատագրական պատերազմում
	Մահապարտների ջոկատներ, հայ կանանց մասնակցությունը Արցախյան ազգային-ազատագրական պատերազմին
	Ջավախքը Արցախյան պատերազմում
	ՀՀ զինված ուժերի ռազմական ավիացիա
	Հերոսների սրահ
	ՀՀ զինված ուժերի հակաօդային պաշտպանության զորքեր, հրթիռային զորքեր և հրետանի
	Շուշիի ազատագրման ռազմական գործողություն
	ՀՀ զինված ուժեր
	Լաչինի և Քարվաճառի ռազմական գործողությունները, զինադադար
	Հայ խաղաղապահներ
	Հայ վրիժառուներ

3-րդ Հարկ	Հանդիսությունների սրահ
	ՀՀ զինված ուժերի հրամանատարական կազմի պատկերասրահ

Կարևորելով իր բարձրագույն դիրքը մայրաքաղաքի վրա՝ ողջ ճարտարապետական հորինվածքը ծառայում է «ռազմական թանգարան» հասկացությանը, դեպի վեր սլացող անվերջ ձգողականությամբ:

Թանգարանի ցուցադրությունը սկսվում է էքստերիերից, ուր ցուցադրված են մի շարք խոշոր զինատեսակներ, որոնցից վեր աստիճանահարթակի վրա բացվում է թանգարան տանող միակ երկփեղկ դուռը: Դռներից մուտք է բացվում դեպի ընդհանուր մեծ դահլիճ, որտեղ ցուցադրված են Երկրորդ համաշխարհային պատերազմին հայ ժողովրդի մասնակցությանը վերաբերող նմուշներ, ինչպես նաև հայկական 6 դիվիզիաների, աչքի ընկած մարտիկների գործունեությունը: Առանձին ցուցադրություններում ներկայացված են հայ մարշալների և գեներալների գործունեությունը: Պատկերասրահում ցուցադրված են Խորհրդային Միության հերոսների և գեներալների դիմանկարները: Այստեղ դռնից ներս մտնելիս դեմ առ դեմ այցելուի հայացքը հանդիպում է երկկողմ աստիճանավանդակով եզերվող Հայաստանի Հանրապետության զինանշանին, իսկ սրահի ողջ հորինվածքը ծավալվում է հարկերի միջև շրջանաձև անցքով, որը հաղորդակից է դարձնում առաջին և նկուղային հարկերը: Ցուցասրահի ամբողջ հորինվածքը աջակողմյան է, և նախատեսված է հաջորդական դիտման համար: Հասնելով աստիճաններին կարելի է հեշտությամբ շարունակել ուղին վերև բարձրանալով: Ցուցանմուշները բազմաթիվ են: Այստեղ կան պատվանդանների վրա բարձրացող դիմաքանդակներ, առանձին պատվանդաններով զինատեսակներ, ապակեպատ ցուցափեղկերում տեղադրված տարաբնույթ առարկաներ, հուշամեդալներ և այլն: Յուրաքանչյուր ցուցափեղկի վերևում բարձրանում է նույն լայնությունն ունեցող վահանակը, որի վրա փակցված են լուսանկարներ, ինչպես նաև մարտական գործողություններին վերաբերող քարտեզներ: Ընդհանուր հորինվածքում օգտագործված են պուրպուր կարմիր և սպիտակ գույները, որոնք թեև համադրվում են պատերի և հատակի մարմարի երանգներին, բայց

անհասկանալի են դառնում կարմիր տուֆի ընդհանուր գունային համալիրում: Ուշագրավ են այս սրահում տեղ գտած լուսամփոփներն ու բազրեծողերը, որոնք ևս թրի ուրվագիծն են հիշեցնում:

Սև գրանիտե հուշ-դահլիճում անմահացված են Խորհրդային Միության հերոսների և Փառքի շքանշանի լրիվ ասպետների, Հայրենական մեծ պատերազմում զոհված-անհայտ կորածների անունները: Այս դահլիճը կարելի է համարել ողջ ցուցադրության զարդը: Այն յուրահատուկ տրամադրություն է հաղորդում այցելուներին:

Երկրորդ հարկի ցուցադրությունն, ինչպես արդեն նշվեց, նվիրված է մի շարք տարբեր մարտական գործողությունների և հերոսներին, ուստի և համապատասխան սրահների է բաժանված: Յուրաքանչյուր սրահում համապատասխան ցուցափեղկերում ներկայացված են հերոսների իրերը, լուսանկարներ, փաստաթղթեր, հարակից զինատեսակներ: Ուշագրավ են յուրաքանչյուր մարտական գործունեության ընթացքը նկարագրող լուսային քարտեզները, որոնք կենտրոնական դիրք գրավելով ցուցասրահներում իրենց շուրջն են համախմբում ընդհանուր կոմպոզիցիան: Հետաքրքիր լուծում է տրված նաև առաստաղներին, քանի որ յուրաքանչյուրը ծածկված է պաշտպանիչ արհեստական խոտածածկով: Այստեղ համապատասխան պատվանդանների վրա կան նաև տարատեսակ արձաններ և կիսանդրիներ: Ընդհանուր գունային հարաբերությունները տատանվում են կարմիր, սպիտակի և ոսկեգույնի համադրությամբ: Այստեղ պատերը մեծամասամբ կարմիր տուֆից են, որը սրահների տարածությունը խեղճացնում է և ցուցափեղկերի կարմիրի հետ համադրվելով ճնշող տպավորություն թողնում: Առանձին տեղ է գրավում Մարշալ Բաղրամյանի անձնական իրերի ցուցադրությունը, որին նախորդում է հերոսների դիմանկարների պատկերասրահը:

Տեսողական հաղորդակցություն: Թանգարանային ինտերիերի դիզայնի բաղկացուցիչ մասն են կազմում տեսողական հաղորդակցության օրինակները, որոնք վերոհիշյալ թանգարանում փոքր-ինչ տարբերվում են միմյանցից, տարբեր ցուցափեղկերում հանդես գալով տարաչափ և տարատեսակ շրիֆտերով:

Ինտերիերի կոմպոզիցիոն սկզբունքները: Յուցասրահում ցուցափեղկերի դասավորությունը նախատեսված է հաջորդական դիտման համար, հիմնվելով

ժամանակաբովանդակային հաջորդականության վրա: Սրահներում ցուցափեղկերի միջև հեռավորությունը կանոնավոր համաչափ է, դրան յուրահատուկ դիմ է հաղորդում ցուցափեղկերը շրջանավորող բոսոր ելուստները: Թանգարանի առաջին, հիմնական սրահի կոմպոզիցիոն կենտրոնը հենց ճարտարապետական հորինվածքին համապատասխանող, երեք հարկերը միմյանց կապող շրջանաձև խորշն է: Դոմինանտ է նաև ՀՀ զինաշանի ցուցադրությունը, որը մոնումենտալ է, կենտրոնական դիրք ունի և մուտք գործելիս տեղակայված է անմիջապես դռան դեմ հանդիման: Սրահների դիմիկան փոխվում է երկրորդ հարկի ցուցասրահներում, որոնք բավականին փոքր են և իրար են կապվում անցուղիներով: Այստեղ գերակշռում են կարմիր երանգները, որոնք նման փոքր մակերեսների դեպքում ճնշող տպավորություն են թողնում:

Ինտերիերի գունային և տեքստուրալ համադրումները: Թանգարանում գերիշխում է կարմիր տուֆի հարդարանքը, որին մեծամասամբ համադրվելու է գալիս մարմարե հատակը: Տվյալ նյութերի համադրությունը բավականին լավ է ընկալվում առաջին մեծ սրահում: Հորինվածքին համեմատական թեթևություն են հաղորդում նաև սպիտակ պատերն ու մեծ ցուցափեղկերը: Սրահներում երբեմն օգտագործված են բոսոր ուղեգորգեր, որոնք իրենց ուրվագծերով և նախշերով ամեն դեպքում չեն ինտեգրվում հատակագծային հորինվածքին: Հիմնականում օգտագործված նյութերը բնական են: Դրանց համադրվելու են գալիս բրոնզաձուլյ լուսավորության համակարգերն ու բազրեձողերը, որոնք ևս նախագծված են ըստ թանգարանի բովանդակության:

Լուսավորությունը: Թանգարանում լուսավորությունը հիմնականում կատարվում է արհեստական եղանակով: Այստեղ առկա են պատերին փակցված թեմատիկ դեկորատիվ լուսատուներ և ջահ, որոնք թերևս ավելի ցրող ու դեկորատիվ բնույթ ունեն: Ցուցանմուշները հիմնականում լուսավորվում են ուղղորդված լուսատուներով, որոնք փակցված են ցուցափեղկերին՝ համապատասխանաբար լույսն ուղղորդելով դեպի առավել կարևոր նմուշը: Լուսավորությունը տարբերվում է Հուշ-դահլիճում, որտեղ այն շատ թույլ է, ուղղորդված և կախարդական տպավորություն է թողնում:

Կահավորումը: Ցուցասրահներում թանգարանային առարկաները ներկայացված են տարաբնույթ ուղղահայաց և հորիզոնական ցուցափեղկերում: Դրանց մի մասը

ապակեպատ է, սակայն կան այնպիսիները, որոնք ուղղակի որպես բաց պատվանդան են ծառայում: Ընդհանուր առմամբ դրանք ոճային առումով միասնական են, ունեն կարմիր գունավորում և հավասար կառուցվածք:

Միջազգային հայտնի զուգահեռները: Միջազգային նույնապրոֆիլ թանգարաններից դիզայներական լուծումներով հատկապես աչքի են ընկնում Բաստոնի պատերազմի թանգարանը Բելգիայում և Կայսերական ռազմական թանգարանը Լոնդոնում: Բաստոնի պատերազմի թանգարանում ստեղծված է սյուրռեալիստական միջավայր: Այստեղ տրված են համարձակ ծավալատարածական և գունալուսային լուծումներ, համապատասխան տեխնոլոգիաների կիրառմամբ: Առանձին տեղ է հատկացված նաև հենց պատերազմի ժամանակներ տեղափոխող ինտերիերի դրվագներին: Այս թանգարանը ռազմական թանգարանների լավագույն օրինակներից է, որտեղ գերազանց կերպով ներկայացված են թե՛ խոշոր չափերի ռազմական տեխնիկա, թե՛ պատերազմի մասնակիցներին պատկանող տարաբնույթ առարկաներ, և թե՛ ինտերիերի ամբողջական հավաքածուներ⁵²: Մյուս աչքի ընկնող թանգարաններից է Կայսերական ռազմական թանգարանը, որի հավաքածուն ներառում է ռազմական տեխնիկա, զենք, պատերազմական տարիների իրեր: Այն ունի հասարակական գրադարան, լուսանկարչական արխիվ, արվեստի հավաքածու, որը նվիրված է 20-րդ դարում սկսած պատերազմներին ու ռազմական գործողություններին, որոնք ընթացել են Միացյալ թագավորությունում և Բրիտանական կայսրությունում⁵³: Այս թանգարանը ևս իր հատակագծային լուծումներով հնարավորություն է ընձեռում ցուցադրության մեջ ներառել նաև խոշոր չափերի ռազմական տեխնիկա, ինքնաթիռներ և այլն: Կայսերական ռազմական թանգարանում ցուցադրված են պատերազմին վերաբերող տարաբնույթ առարկաներ, զենքեր և այլն, սակայն ի տարբերություն Բաստոնի թանգարանի, այստեղ լուծումներն ավելի ավանդական են⁵⁴: Գերազանցապես օգտագործված է նաև ցուցասրահի վերին գոտին, որի հնարավորությունը կա նաև Մայր Հայաստան թանգարանում (*տե՛ս նկար 30,31*):

⁵² Baston War Museum, Living Memory of the Ardennes, Bastogne, Bastone War Museum Press, 2010, page 12-17.

⁵³ Imperial War Museum official website, <http://www.iwm.org.uk/visits/iwm-london>. (հասանելի է 30.04.2015):

⁵⁴ Muchitsch W., Does War Belong in Museums? The Representation of Violence in Exhibitions, Bielefeld, 2013 transcript Verlag, page 21.

Եզրակացություն: Այսպիսով վերը նշվածից երևում է, որ Երևանի թանգարանների համատեքստում իր դիզայներական լուծումներով բավականին լավ է կազմակերպված ՀՀ ՊՆ Մայր Հայաստան թանգարանը, որն ի սկզբանե կառուցված լինելով որպես թանգարան՝ իր մեջ լավագույնս է ներկայացնում ցուցադրվող նյութը: Թանգարանը նաև ժամանակին առաջին կարգի դիպլոմի է արժանացել իր ռազմահայրենասիրական դաստիարակչական նշանակության համար, բայց ժամանակակից նույնապրոֆիլ թանգարանների միջազգային օրինակների հետ զուգահեռներ անցկացնելիս ակնհայտ է դառնում, որ այն ունի արդիականացման կարիք, որի արդյունքում պետք է համալրվի ինտերակտիվ սարքավորումներով և համապատասխան նոր գունալուսային, անվտանգության և նախագծային լուծումներով: Փաստորեն, վերը նշվածից երևում է, որ թեև ՀՀ ՊՆ Մայր Հայաստան թանգարանը Երևանի լավագույն թանգարաններից է, ունի շատ հարուստ ցուցադրություն և համապատասխան գերազանց ճարտարապետություն, որն այնուամենայնիվ, անհրաժեշտ է մաքսիմալ ֆունկցիոնալ օգտագործել դիզայներական տեսանկյունից ելնելով:

8. Եղիշե Չարենցի անվան գրականության եվ արվեստի թանգարան *(տե՛ս նկար 32-35)*

Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանը Երևանում գործող միակ կոմպլեքսային թանգարանն է: Հատկանշական է նաև այն փաստը, որ թանգարանն այսօր ունի 6 մասնաճյուղ Երևանում և մարզերում: Այստեղ ցուցադրվում են գրական, երաժշտական, թատերական, կինո և որոշ գեղարվեստական նմուշներ: Վերը նշվածից երևում է, որ նման բազմաբնույթ նմուշների պահպանությունը և ցուցադրումը բավականին բարդ գործառույթներ են դնում ինտերիերի կազմակերպման հարցում: Թանգարանի պատմությունը սկիզբ է առնում 1921թ.-ից, որպես Լուսավորության ժողովրդական կոմիսարիատին կից Երևանում ստեղծված Պետական կուլտուր-պատմական թանգարանի պատմագրական բաժին: Հետագայում համալրվելով հայ գրողների, գրական-մշակութային գործիչների ու հաստատությունների բազմաթիվ նյութերով՝ 1935թ.-ի մայիսի 16-ից առանձնացվում է, որպես ինքնուրույն գիտական հիմնարկ՝ Պետական գրական թանգարան անունով

(առաջին տնօրենը՝ Խորեն Սարգսյան): Դրան զուգահեռ Սարգիս Մելիքսեթյանի ջանքերով հիմնվում են նաև Երևանի թատերական թանգարանը և Երևանի կոնսերվատորիայում երաժշտական մի շարք ֆոնդերի ընդգրկմամբ Ռ. Մելիքյանի անվան կաբինետը: 1954թ.-ի հոկտեմբերին Գրական, Թատերական թանգարանների և Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական կաբինետի ֆոնդերի միավորմամբ կազմավորվում է Գրականության և արվեստի թանգարանը՝ մինչև 1963թ.-ը գործելով Գիտությունների ակադեմիայի, այնուհետև, մինչ օրս՝ Մշակույթի նախարարության իրավասության ներքո: 1967թ.-ից թանգարանը կրում է Եղիշե Չարենցի անունը: Ավելի ուշ (1977թ.) թանգարանում հանգրվանեցին նաև հայ կինոարվեստին վերաբերող ֆոնդերը⁵⁵: Վերը նշվածից երևում է, որ թանգարանը կոմպլեքսային է դառել տարիների ընթացքում, համալրելով իր ֆոնդերը բազմաբնույթ նմուշներով, որոնք թելադրել են թանգարանի ռազմավարության և ինտերիերի դիզայնի ողջ էությունը: Թանգարանը բացման օրվանից տարիներ ի վեր հիմնանորոգումներ չէր ունեցել: Նախնական ցուցադրություններին վերաբերող տեղեկություններ հիմնականում չեն պահպանվել՝ բացառությամբ մի քանի լուսանկարների, որոնք վկայում են ցուցասրահներում իրականացված ցուցադրական աշխատանքների մասին: Հիմնականում էքսպոզիցիոն աշխատանքները իրականացվել են թանգարանի աշխատակիցների կողմից: Թանգարանի նորոգումը սկսվել է 2010-2011թթ.-ին, ընդգրկելով ողջ տարածքը՝ աշխատասենյակները, դահլիճը և թանգարանի զարդը հանդիսացող մշտական ցուցասրահը: Ցուցասրահի ինտերիերի նախագծային աշխատանքներն իրականացվել են «ՋինՇին» ՍՊԸ-ի և թանգարանի աշխատակիցների համատեղ ջանքերով՝ տնօրինության ղեկավարությամբ և հսկողության ներքո (հեղինակների անունները աղբյուրներում նշված չկան, բացառությամբ թանգարանագետ, ԳԱԹ աշխատակից Մ. Հարոյանի, ով իր մեծ ներդրումն է ունեցել ցուցասրահի ինտերիերի դիզայնի կազմակերպման մեջ):

Ցունկցիոնալ գոյությունը: Ցուցադրությունը կազմակերպված է 5 սրահներում (ընդհանուր մակերեսը 300մ²), որոնցից առաջին երկուսում ներկայացված է հայ գրականությունը, երրորդում՝ թատերարվեստը, չորրորդում՝ կինոարվեստը,

⁵⁵ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ուղեցույց, Երևան, 2009թ., էջ 3-4:

հինգերորդում՝ երաժշտարվեստը: Յուցասրահի ժամանակաբովանդակային հաջորդականությունն ընդգրկում է շուրջ 300 տարվա պատմություն՝ Սայաթ-Նովայից (18-րդ դար) մինչ 20-րդ դարի վերջը: Նյութերի բազմազանությունը լայն է՝ գեղարվեստական, գիտական, ազգագրական, մանկավարժական, հուշագրական երկերի ձեռագրեր, նամակներ, փաստաթղթեր, վավերագրեր, նոտաներ, լուսանկարներ, հրավիրատոմսեր, ազդագրեր, նվագարաններ, անձնական և բեմական հագուստ, կահույք, սպասք, հուշանվերներ, պետական պարգևներ, շքանշաններ, մեդալներ, զենքեր, կինոսարքավորումներ, հնատիպ գրքեր, մամուլ և այլն: Այս ամենից զատ բոլոր 5 ցուցասրահները հագեցած են ներկայացված գործիչներին պատկերող կամ նրանց ստեղծագործությունը հանդիսացող կերպարվեստի արժեքավոր գործերով: Նյութի անսպառ քանակը, բազմազանությունը և տարածքի սղությունը հաշվի առնելով՝ գրականության և արվեստի գործիչները հիմնականում ներկայացված են խմբերով՝ ըստ ժամանակի, դավանած մշակութային այս կամ այն հոսանքի, ուղղության, դպրոցի:

Ինտերիերի գունային համադրումները: Սրահների գունային ձևավորումը ևս ինքնանպատակ չէ: Գրականության երկու սրահներում իշխում է թանաքագույնը, իսկ թատրոնի և երաժշտարվեստի սրահներում՝ կարմրաշագանակագույնը (թատրոններում և համերգասրահներում առավել ընդունված գույները): Յուցափեղկերը նախագծված են միևնույն համաչափություններով, որոնք հիմնականում ներգծված լինելով գիպսոստվարաթղթե պատերի մեջ, առանձնանում են ճերմակ ներսույթով և առանձին ներքին լուսավորությամբ: Սրահից սրահ անցումը կատարվում է միջանցիկ բացվածքներով, որոնք դասավորված են միևնույն ուղղու վրա և իրար են կապվում ցուցադրության ողջ կոմպոզիցիան միավորող կապույտ ուղեգորգով: Այսինքն՝ ցուցասրահի առաջին սրահից անթաքույց երևում է վերջին սրահը ևս: Հատակագծային լուծումներով վերոհիշյալ 5 սրահները դասավորված են միևնույն ուղղու վրա, ունեն միևնույն լայնությունն ու բարձրությունը:

Տեսողական հաղորդակցություն: Թանգարանում տեսողական հաղորդակցության նմուշներ գրեթե չեն դրսևորվում, դրանք հիմնականում արտահայտվում են տակագրերում և ծանոթագրություններում, որոնք փակցված են ցուցափեղկերին կամ գտնվում են դրանց ներսում: Դրանք սպիտակ թիթեղների վրա

տպագրված տակագրեր են, որոնք իրենց 3-5մմ հաստության շնորհիվ առաջ են կանգնում պատի հարթությունից, դրանով առավել սևեռելով դիտողի ուշադրությունը: Թանգարանի ընդհանուր հատակագծային հորինվածքը բավականին բարդ է, քանի որ մուտք գործելիս դժվար է կոզմնորոշվել, թե որ ուղղությամբ պետք է շարունակել ընթացքը, որպեսզի հասնել ցուցասրահներ: Դա է պատճառը, որ ուղղորդիչ գրաֆիկական լուծումների մշակումը այստեղ մեծ դեր կարող էր ունենալ⁵⁶:

Ինտերիերի կոմպոզիցիոն սկզբունքները: Ցուցասրահում ցուցափեղկերի դասավորությունը նախատեսված է հաջորդական դիտման համար, հիմնականում դրանք իրենցից սպիտակ խորշեր են ներկայացնում՝ փորված թավ կապույտ կամ կարմիր պատերի մեջ: Դրանք ասես լույս են ճառագում, իրենց վրա սևեռելով ուշադրությունը: Առաջին սրահում ցուցափեղկերի միջև հեռավորությունը կանոնավոր համաչափ է: Դրան յուրահատուկ դիմ է հաղորդում պատերի կապույտին հակադրվող ճերմակ հատվածները: Երկրորդ սրահում մոտեցումը նույնն է: Թատերական սրահի էքսպոզիցիան յուրահատուկ դիմի շնորհիվ թարմ շունչ է հաղորդում այցելուին: Այստեղ փոխվում են թե՛ սրահի գունային հարաբերությունները, և թե՛ ցուցափեղկերի դասավորվածությունը: Հատկանշական է թատերարվեստի վառ ներկայացուցիչների բեմական հագուստը ներկայացնող ցուցափեղկը, որն ունի աստիճանաձև պրոգրեսիվ հորինվածք: Կինոսրահի գունային լուծումները կտրուկ տարբերվում են մնացածից, հիշեցնելով հին ֆիլմերի սև և սպիտակ գունային հարաբերությունները: Այստեղ գերակշռում է մոխրագույնի և սպիտակի համադրությունը: Հետաքրքիր է նաև բեմ հիշեցնող կենտրոնական հարթակը, որի վրա վեր են խոյանում հին տեսախցիկների նմուշներ: Այն երկու կողմից սիմետրիկ եզերում են 2000մմ բարձրության ցուցափեղկերը, որոնց վերին խորշերում գտնվում են ժապավեն հիշեցնող վահանակներ, իսկ ներքևում այլ իրեր են նմուշներ: Անցում կատարելով հաջորդ երաժշտական սրահ, կրկին ընկղմվում ենք կարմիրի և սպիտակի դյուֆի մթնոլորտ, որտեղ ցուցափեղկերը հիմնականում կրկնում են երկրորդ սրահի կանոնավոր դասավորությունը: Սրահներին յուրահատուկ շունչ են հաղորդում առկա

⁵⁶ Patterson J., Viscomm J.S., A Guide to Visual, New York, Cambridge University Press, 2012, page 128.

ինտերակտիվ սարքավորումները, որոնք իրենց դիզայնով համալրում են ինտերիերը՝ դիտարկվելով ցուցանմուշների հետ որպես մեկ ամբողջություն:

Ինտերիերի տեքստուրալ համադրումները: Ցուցասրահի ողջ մակերեսը ծածկված է մանրահատակով, դրա վրա, ինչպես արդեն նշվեց, թավ, կապույտ ուղեգորգի միջոցով իրար են միանում սրահների մուտքերը: Ինտերիերի դիզայնում հիմնականում օգտագործված են սպիտակ, կապույտ, կարմիր հիմնաներկ, ցուցափեղկերն ապակեպատ են և գիպսոստվարաթղթե պատերին ագուցված են մետաղական կարկասով: Պատվանդանները պատրաստված են փայտից և ներկված կարմիր, սպիտակ կամ կապույտ փայլատ ներկով:

Լուսավորությունը: Ցուցասրահը բացառապես լուսավորված է արհեստականորեն, իսկ առկա լուսամուտները ծածկված են համապատասխան շարժական թիթեղներով, որոնք պահպանելով օդափոխության համար անհրաժեշտ անցքերը, ձուլվում են ինտերիերին, դիտարկվելով որպես մեկ ամբողջական պատ: Ցուցասրահի լուսավորությունն իրականացված է երկու եղանակով՝ ընդհանուր և ուղղորդված: Ընդհանուր լուսավորությունն իրականացվում է առաստաղին փակցված կարկասային համակարգով, որի վրա առկա են ուղղորդիչ լույսի աղբյուրներ: Դրանք նախագծված են այնպես, որ հնարավորություն են տալիս ազատ ծռել և շրջել դրանք ըստ անհրաժեշտության՝ լրացուցիչ փայլերից և արտացոլանքներից խուսափելու համար: Ցուցափեղկերի ներսում ևս առկա է առանձին լուսավորության համակարգ: Այն հիմնականում կետային է, բայց որոշ հատվածներում նաև կան ամրացված շարժական տարբերակներ:

ԳԱԹ «Միջին Արևելքի արվեստ» ցուցադրություն (տե՛ս նկար 34)

Վերոհիշյալ թանգարանում է գործում նաև «Միջին արևելքի արվեստ» ցուցադրությունը, որը բացվել է Մարկոս Գրիգորյանի հավաքածուի հիման վրա: Այն ներառում է ամերիկահայ նկարիչ, հողարվեստի ուղղության հիմնադիր Մարկոս Գրիգորյանի հավաքածուն, որը ընդգրկում է 2500 բնօրինակ ցուցանմուշներ: Հավաքածուն Մ. Գրիգորյանը նվիրաբերել է Հայաստանին 1993թ.-ին: Ցուցադրությունն ընդգրկում է մ.թ.ա. IV-րդ հազարամյակից մինչև մեր ժամանակների իրանական, հայկական, եվրոպական, ամերիկյան հոգևոր և

նյութական մշակույթի արժեքներ, այդ թվում՝ էլամի, վաղ բրոնզի դարի խեցեղեն, Վանի թագավորության բրոնզ, գորգարվեստ, իսլամական միջնադարյան արվեստ, մանրանկարչություն, գեղագրություն, դաջարական կերպարվեստ, զարդարվեստ, տարազ, Մարկոս Գրիգորյանի հեղինակային ստեղծագործությունները (հողանկարներ, գեղանկարներ, գորգեր) և այլն⁵⁷: Այս ցուցասրահը, ինչպես և նախորդը, գտնվում է թանգարանի երկրորդ հարկում, միննույն հարթակի երկու կողմերում: Ցուցադրությունը 2015թ.-ի հիմնանորոգումից հետո բոլորովին այլ կերպար է ստացել: Ինտերիերի նախագծային աշխատանքներով այստեղ ևս զբաղվում էր «ՋինՇին» ՍՊԸ-ն: Ինտերիերի դիզայնի հեղինակներն են Հ. Մարտիրոսյանը և Տ. Փանյանը: Էքսպոզիցիոն դասավորության մեջ մեծ ներդրում են ունեցել նաև թանգարանի աշխատակիցները՝ տնօրինության ղեկավարությամբ:

Ցուցադրությունը բաժանված է 4 սրահների.

1. Նախասրահ՝ ներածական ցուցադրություն, իսլամական արվեստ 73,9մ²:
2. Գլխավոր սրահ՝ Մարկոս Գրիգորյանի ստեղծագործությունների ցուցադրություն 112,2մ²:
3. Փոքր սրահ՝ Քաջարական արվեստի հավաքածուի ցուցադրություն 14,9մ²:
4. Մեծ սրահ՝ Զանազան հավաքածուների ցուցադրություն 55մ²:

Տվյալ ցուցասրահի գունային հարաբերությունները ծավալվում են թանգարանի ձեռագիրն արտահայտող առավել բնությանը մոտ երանգների համադրությամբ: Այստեղ ևս ողջ մակերեսը ծածկված է մանրահատակով, այն համադրվում է սպիտակի և տեղ-տեղ ի հայտ եկող ծղոտի երանգներին: Գունային լուծումները փոխվում են երրորդ և չորրորդ սրահներում: Երրորդ սրահը, որն ունի բավականին փոքր մակերես, ներկայացնում է Քաջարական արվեստը: Այստեղ պաստելային երկնագույն պատերը համադրվում են որմնախորշերի սպիտակի հետ: Հորինվածքը լրացվում է կոմպոզիցիոն վերին կենտրոն հանդիսացող քառանիստ լուսավորությամբ: Վերջին մեծ սրահը թարմություն է մտցնում ընդհանուր միջավայրում, քանզի առկա մեղմ, բաց երանգներին այստեղ փոխարինելու է գալիս տաք կավագույնը: Այստեղ կոմպոզիցիոն

⁵⁷ ԳԱԹ պաշտոնական կայք, Միջին արևելքի արվեստ. Մարկոս Գրիգորյանի հավաքածու, http://www.gatmuseum.am/index.php?option=com_content&view=article&id=83&Itemid=99&lang=hy. (հասանելի է 20.04.2016):

կենտրոնը վեցանկյուն ապակեպատ ցուցափեղկն է, որի շուրջ ծավալվում է ցուցադրության ողջ հորինվածքը: Ցուցասեղաններ են տեղադրված նաև սրահի պատերի տակ, դրանք ևս լրացնում են առկա վեցանկյուն կոմպոզիցիան, յուրահատուկ ընդգրկող գոլտրիկություն հաղորդելով սրահին, միաժամանակ ուղղորդելով այցելուների շարժումն ու ընթացքը: Այս ցուցադրությունում ևս տեսողական հաղորդակցությունը առկա է միայն տակազրերի և ծանոթագրությունների ձևով, որոնք հիմնականում կրում են նախորդ սրահի առանձնահատկությունները:

Միջին արևելքի ցուցասրահի պատերը գիպսոստվարաթղթե են: Դրանք իրենց ներսում ունեն որմնախորշեր, որոնք օգտագործվում են որպես ցուցափեղկեր և ծածկված են ապակիով: Սրահի գեղանկարչական աշխատանքները, գորգերը և այլ իրեր կախված են հատուկ ցուցադրական խողովակներից: Յուրաքանչյուր սրահում պատերի հարդարանքը իրականացված է երկու երանգի ներկերի համադրմամբ: Ցուցասրահում առկա են առանձին ապակեպատ ցուցափեղկեր, սեղաններ և պատվանդաններ, որոնք ևս ներկված են պատերի գույնին համապատասխան:

Այս ցուցասրահում բացառված է բնական լուսավորությունը: Դրան փոխարինելու են գալիս ընդհանուր և ուղղորդված լուսավորության համակարգերը: Սրահի ընդհանուր լուսավորությունն իրականացված է կարկասային կամ ռելսային հիմքի վրա ագուցված շարժական լուսատուներով, որոնց ուղղությունը ըստ անհրաժեշտության կարելի է փոփոխել: Ցուցափեղկերի ներսում և առանձին լուսավորության համար նախատեսված ելուստների վրա ևս կան լուսատուներ, որոնք կետային բնույթ ունեն և լրացնում են առկա շարժական հիմնական լուսավորությունը:

Վերը նշվածն ամփոփելով կարելի է հանգել եզրակացության, որ Միջին արևելքի թանգարանը բավականին հետաքրքիր է իր ինտերիերի լուծումներով: Այստեղ այցելուների առջև բացվում է բնությանն ավելի մոտ միջավայր, որը յուրօրինակ կերպով իր պատերի ներսում ներկայացնում է ամենատարբեր բնույթի աշխատանքներ, միաժամանակ չխոչընդոտելով դրանցից և ոչ մեկի անհատական ընկալմանը:

Միջազգային հայտնի գուգահեռները: Միջազգային նույնապրոֆիլ թանգարաններ բավականին դժվար է գտնել, բայց այնուամենայնիվ կատարված

հետազոտության արդյունքում զուգահեռաբար նմանություններ են նկատվում Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանի հետ, որտեղ ևս ցուցանմուշները բազմազան են և տարբերվում են իրենց բնույթով, դրանով իսկ մոտ դառնալով կոմպլեքսային թանգարան հասկացությանը: Այստեղ ցուցանմուշներն ընդգրկում են ինչպես գեղանկարչական աշխատանքներ, արձաններ, այնպես էլ երաժշտական գործիքների, զինամթերքի նմուշներ, հագուստ և այլն: Այս թանգարանում պահվում է շուրջ 2.000.000 ցուցանմուշ: Այն իր դռներն է բացել այցելուների առջև 1872թ.-ին: Ճարտարապետական ոճավորումը նեոկլասիցիստական է (Beaux-arts style): Ցուցասրահների ընդհանուր մակերեսը 130.000մ² է: Բացի մշտական ցուցադրության սրահներից թանգարանում առկա են նաև ժամանակավոր ցուցադրություններ՝ փոփոխվող ցուցահանդեսներով: Տարեկան Մետրոպոլիտան է այցելում 5.000.000 մարդ: Կետրոնական սրահը և նեոկլասիցիստական ճակատը ձևավորվել են 1902թ.-ին Ռիչարդ Մորրիս Հանթի կողմից, իսկ հյուսիսային և հարավային թևերը ձևավորվել են 1911թ.-ին⁵⁸: Տվյալ թանգարանում յուրաքանչյուր սրահ ունի յուրահատուկ ինտերիերային լուծումներ, որոնք բխում են անմիջապես ցուցանմուշների բնույթից: Դրանք կտրուկ տարբերվելով գունային լուծումներով, օգտագործված նյութերի տեսակներով և հատակագծային լուծումներով, ամփոփված են մեկ ընդհանուր ոճում, որն արտահայտվում է թե՛ ինտերիերում և թե՛ էքստերիերում: Այստեղ երբեմն ինտերիերում տրված է այնպիսի հարդարանք, որի շնորհիվ ստեղծվում է էքստերիերի պատրանք: Այսպիսով վերոհիշյալ թանգարանը համաշխարհային կոմպլեքսային թանգարանների շարքում հանդիսանում է լավագույնը իր ինտերիերի կազմակերպման առումով (*լրե՛ս նկար 36*):

Եզրակացություն: Վերը նշվածից երևում է, որ նշված ցուցասրահները թանգարանի զարդն են հանդիսանում և ինտերիերի դիզայնով լավագույնս են համապատասխանում կոմպլեքսային թանգարան հասկացողությանը: Թանգարանի հորինվածքում գլխավոր թերությունը հանդիսանում է դրա ճարտարապետական մասը, որի պատճառով մեծապես տուժում է ինտերիերի ողջ հորինվածքը:

⁵⁸ Metropolitan Museum of Art, <http://nyc-architecture.com/UES/UES074.htm>. (հասանելի է 20.04.2016):

Ամփոփելով կարելի է ասել, որ Խորհրդային ժամանակաշրջանում Երևանում ստեղծված թանգարանները բավականին շատ են: Կատարված ուսումնասիրությունը վկայում է, որ այդ ժամանակաշրջանում շրջանում կառուցվել են 25 թանգարաններ, որոնցից 5-ը հիմնանորոգումների է ենթարկվել վերջին տասնամյակների ընթացքում: Այս թանգարանների որոշ օրինակների ճարտարապետական հորինվածքը հենց ստեղծվել է որպես թանգարան՝ հաշվի առնելով թե՛ ճարտարապետական, թե՛ ներքին միջավայրային առանձնահատկությունները: Թանգարանների մեծամասնությունը, սակայն տեղ է գտել արդեն գոյություն ունեցող շինություններում, որոնք հարմարեցված չեն եղել թանգարան հասկացությանը և ուղղակիորեն ինտեգրվել են արդեն թելադրվող հատակագծերին: Խորհրդային տարիներին կառուցված թանգարանների մի մասն էլ վերջին տասնամյակների ընթացքում հիմնանորոգումների է ենթարկվել, երբեմն նաև համալրվել նոր համակառույցներով: Այդպիսի թանգարաններից են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը, Խ. Աբովյանի տուն-թանգարանը, Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանը, Մ. Սարյանի տուն-թանգարանը, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանը: Թանգարանների ինտերիերի դիզայնի վերլուծությունից կարելի է հանգել եզրակացության, որ վերոհիշյալ հիմնանորոգված թանգարաններից հատկապես աչքի են ընկնում Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանը: Խորհրդային տարիներին կառուցված թանգարաններից բավականին լավ հատակագծային լուծումներ ունեն Հովհ. Թումանյանի տուն-թանգարանը, ՀՀՊՆ «Մայր Հայաստան» գինվորական թանգարանը, որոնք տարիներ ի վեր հիմնանորոգումների չեն ենթարկվել: Միջազգային կարևորագույն նույնապրոֆիլ թանգարանների ինտերիերի դիզայնի վերլուծության զուգահեռները թույլ են տալիս հանգել եզրակացության, որ դրանք ունեն շատ լավ հատակագծային հորինվածք, բայց ինտերիերի դիզայնի առումով ունեն արդիականացման կարիք, որի արդյունքում կարող են համալրվել նոր ինտերակտիվ սարքավորումներով, ինտերիերի գունային և տեքստուրալ հարդարանքի նորանոր լուծումներով, լուսավորության արդի համակարգերով, էրգոնոմիկ նպատակահարմար կահավորմամբ և այլն:

**ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. ԵՐԵՎԱՆԻ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ
ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԻՆՏԵՐԻԵՐԻ ԴԻՁԱՅՆԸ**

**1. Երևանի հետխորհրդային ժամանակաշրջանի թանգարանների
ցուցակագրումը ըստ պրոֆիլների և դրանց ինտերիերի դիզայնը**

Ինչպես նշվեց առաջին և երկրորդ գլուխներում Երևանում այժմ գործում են 42 թանգարաններ: Դրանցից 25-ը հիմնադրվել են խորհրդային ժամանակաշրջանում, իսկ մնացած 17-ը անկախության տարիներին կառուցված թանգարաններն են, որոնց լավագույն օրինակների վերլուծությանն էլ կանդիդատանք այս գլխում: Ի հավելումն նշենք, որ անկախության տարիներին հիմնադրված թանգարաններից մի քանիսը տեղակայվել են խորհրդային ժամանակաշրջանում կառուցված շինություններում, հարմարեցնելով իրենց հատակագծային հորինվածքները արդեն գոյություն ունեցող ճարտարապետական լուծումներին:

Երևանի հետխորհրդային շրջանի թանգարանների ինտերիերի դիզայնի մասին հիմնովին պատկերացում կազմելու համար, ստորև ցուցակագրական ձևով ներկայացվել են դրանք՝ ըստ հիմնադրման տարեթվերի.

Հետխորհրդային շրջանի Երևանի թանգարանները		
1.	Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ	1991թ.
2.	«Զորավար Անդրանիկ» թանգարան	1995թ.
3.	Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ	1995թ.
4.	Հայաստանի բնության պետական թանգարան	2000թ.
5.	Տիեզերքի թանգարան	2001թ.
6.	Կարեն Դեմիրճյանի թանգարան	2001թ.
7.	Սիլվա Կապուտիկյանի տուն-թանգարան	2003թ.
8.	Ալեքսանդր Թամանյանի թանգարան-ինստիտուտ	2005թ.
9.	Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պատմութեան թանգարան	2007թ.
10.	Գաֆեսճեան արվեստի կենտրոն	2009թ.
11.	Հայաստանի երկաթուղու թանգարան	2009թ.

12.	Կալենց թանգարան	2010թ.
13.	Շառլ Ազնավուրի տուն-թանգարան	2011թ.
14.	Կապի թանգարան	2012թ.
15.	«Էդուարդ Իսաբեկյան» ցուցասրահ	2013թ.
16.	Ֆրիտյոֆ Նանսեն թանգարան	2014թ.
17.	Կոմիտասի թանգարան-ինստիտուտ	2015թ.

Վերոհիշյալ ցուցակագրությունը վկայում է, որ հետխորհրդային ժամանակաշրջանում Երևանում հիմնադրված թանգարանները շատ չեն, ինչպես նաև դրանց փոքր մասն է հագեցած դիզայներական արդի լուծումներով, ուստի ստորև հետազոտության մեջ ընդգրկված են այն օրինակները, որոնք այդ տեսանկյունից առավել մեծ նշանակություն ունեն և արժանի են ուշադրության:

2. Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ (տե՛ս նկար 37-39)

Հանդիսանալով հարուստ ճարտարապետական ժառանգություն ունեցող երկիր, Հայաստանն ունի իր ստեղծագործական վարպետությունն ու մտքի թռիչքը վկայող բազում նմուշներ, որոնց օրինակները զետեղված են այս թանգարանում: Այստեղ ամփոփվում է հայկական ճարտարապետական հնամենի ավանդույթների և նորանոր լուծումների ցուցադրությունը: Հարկ է նշել, որ 2016թ.-ին Հայաստանի ճարտարապետության թանգարան-ինստիտուտը և Ալ. Թամանյանի թանգարանը, միավորվեցին: Պատճառն այն էր, որ դրանք գործում էին իրար կից միևնույն կառույցի ներքո, ինչպես նաև դրանց պրոֆիլը նույնն էր: Այսպիսով տարածքի ընդարձակման և ինտերիերի դիզայնի կազմակերպման համար բարենպաստ նախադրյալներ ստեղծվեցին: Հարկ է նշել, որ 1990թ.-ին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ստեղծվեց Հայաստանի ճարտարապետական թանգարան-ինստիտուտը: Այն վերանվանվելով Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի, շարունակում է գործել որպես գիտամշակութային հաստատություն, ուր հավաքված են ճարտարապետության,

քաղաքաշինության և շինարվեստի պատմությանը, տեսությանը և գործնականին վերաբերող տարաբնույթ նյութեր: Թանգարանի գործունեության առանձին մաս են կազմում հայ ճարտարապետների գործունեությունը ներկայացնող բազմաբնույթ նյութերի մասսայականացումը: Այստեղ կազմակերպվում են նաև անհատական և խմբակային ցուցահանդեսներ, մրցույթներ, շնորհանդեսներ, սեմինարներ, դասախոսություններ, գիտաժողովներ⁵⁹:

Թանգարանը բացման օրվանից ի վեր հիմնանորոգումներ չի ունեցել, իսկ արված կոսմետիկ նորոգումները հիմնականում կատարվել են առանց դիզայներական միջամտության: Տարածքի առաջին վերանորոգումը եղել է 1990-91թթ.-ին՝ թանգարանի բացման կապակցությամբ: Հաջորդ նորոգումը եղել է 1996թ.-ին և կրել է կոսմետիկ բնույթ: 2015թ.-ին մասնակի վերանորոգվել է թանգարանի նախասրահը, որտեղից մուտք է բացվել դեպի նախարարություն: Այնուամենայնիվ, ինտերիերի դիզայնի և էքսպոզիցիոն համակարգման հարցերով զբաղվել է թանգարանի հիմնադիր տնօրեն ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Գրիգորյանը, թանգարանային աշխատակիցների համատեղ ջանքերով:

Ֆունկցիոնալ գոյությունը: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ ինչպես շատ թանգարաններում, ճարտարապետական թանգարաններում նույնպես կազմակերպվում են ինչպես մշտական, այնպես էլ ժամանակավոր ցուցադրություններ: Հիմնականում ցուցանմուշների տեսքով ներկայացվում են պլանային գծագրեր, ճակատային հորինվածքներ և մանրակերտեր: Այստեղ դիզայներական լուծումները պետք է տրված լինեն առավելապես սրելու և կենտրոնացնելու դիտողի ուշադրությունը գծագրերի ճշգրտության և ծավալատարածական լուծումները շեշտելու ուղղությամբ: Այսպիսի թանգարաններում հիմնականում կատարվում են նաև գիտական հետազոտություններ, ուստի թանգարանային ընդհանուր դիզայնը պետք է ծառայի նաև նմանատիպ աշխատանքներ կատարելու համար: Ինչպես արդեն նշվեց Հայաստանի ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտը հորինվածքով ընդգրկում էր Երևանի կառավարության երրորդ շենքի առաջին հարկի մի մասը, որին հակադարձ կողմից հարելու էր գալիս Ալեքսանդր Թամանյանի թանգարան-

⁵⁹Հայաստանի ճարտարապետության ազգային թանգարանի ստեղծման պատմությունը, http://www.archmuseum.am/?page_id=217. (հասանելի է 27.10.2015):

ինստիտուտը: Երկու թանգարանների մուտքերը բացվում են շենքի աջ և ձախ կողմերից: Ընդհանուր առմամբ մուտքերի հորինվածքը միանման է, չառանձնանալով ընդհանուր ճարտարապետական հորինվածքից, որպես առանձնակի կարևորություն ունեցող թանգարաններ: Հայաստանում ներկայումս շատ քիչ են այն թանգարանները, որոնք թե՛ իրենց ճարտարապետությամբ, և թե՛ ինտերիերով ստեղծված են եղել հենց որպես թանգարան: Դա լրացուցիչ խնդիր է առաջացնում ցուցադրության կազմակերպման գործում, քանի որ ողջ հորինվածքը հարմարեցվում է արդեն գոյություն ունեցող հատակագծային լուծումներին: Այսպիսի թանգարաններում ցուցանմուշներն այդքան էլ բազմաբնույթ չեն, ուստի ինտերիերի կազմակերպման մեջ կարելի է ընդհանուր այնպիսի լուծումներ գտնել, որոնք կամբողջացնեն հորինվածքը, միաժամանակ շեշտելով նմուշների առանձնահատկությունները:

Թանգարանի ներկայիս մուտքը բացվում է Արամի փողոցից, Հանրապետության հրապարակի մետրոյի կայարանի ստորգետնյա ելքերից մեկին դեմ հանդիման: Ընդհանուր հարթակից 3 կենտրոնական և 3 կողային աստիճանները բարձրանում են դեպի մուտք, որի դռները փայտյա են, իսկ պատին կա թանգարանի հուշատախտակը: Այստեղ կարևորությունը տրվում է հատկապես վահանակներին, որոնք, խորհրդանշելով որևէ ընթացիկ միջոցառման կամ թեմատիկ ցուցահանդեսի մասին, մեծ ուշադրություն են գրավում: Նման վահանակների բացակայության դեպքում շատ դժվար է գլխի ընկնել, որ այդ տարածքում կա նման մեծ կարևորություն ունեցող թանգարան: Մուտքից ներս կարմիր գորգն ուղղորդում է դեպի նախասրահ, որտեղ զետեղված են աշխատակիցների գրասեղաններն ու որոշ ցուցանմուշներ: Պատերը վերևից գոտևորում են հայնշանավոր ճարտարապետների դիմանկարները: Այստեղ մակերեսը բավականին փոքր է, գունային լուծումները հիմնականում սպիտակի մեջ են, հակադրվելով հատակի դարչնագույն երանգին: Նախասրահից դռներ են բացվում դեպի նախարարություն և ցուցասրահ, որտեղ զետեղված են ժամանակավոր թեմատիկ ցուցադրությունները: Դրանք հիմնականում իրենցից ներկայացնում են լայնաֆորմատ վահանակներ, որտեղ տպագրված են տարբեր շինությունների հատակագծեր իրենց ճակատներով և լուսանկարներով: Առանձին տեղ են զբաղեցնում մանրակերտերը: Կան նաև մեծանուն ճարտարապետների ձեռքին պատկանող

գծագրեր, որոնք իրենց ցուցադրման առումով անշուշտ պետք է առանձնանան և կարևորվեն: Ընդհանուր դահլիճում շարժական պատերի օգտագործումը լայն հնարավորություն է հորինվածքին համապատասխան ողջ տարածքը կազմակերպելու համար: Յուրաքանչյուր շարժական պատ իր անհատական լուսավորությունն ունի, որ սահմանափակվում է մեկ ուղղորդված լույսով, հարկ եղած դեպքում կարող են ավելացվել ևս մի քանիսը, բայց լուսատուների չափազանց մեծ ծավալները և ծանր սև գույնը գեղագիտորեն չեն համապատասխանում նմուշների գրագետ ցուցադրմանը և չափազանց մեծ ուշադրություն են իրենց վրա կենտրոնացում, խոչընդոտելով գծագրերի ամբողջական ընկալումը: Տվյալ լույսերը լրացնելու են գալիս ընդհանուր ցերեկային լուսավորությանը, սակայն ուղղորդվելով հիմնականում տպագրված մակերեսների վրա, լրացուցիչ փայլ են հաղորդում և արտացոլանքներ են առաջացնում: Բնական լուսավորությունն այստեղ գրեթե բացակայում է: Յուցասրահն առանձնապես աչքի չի ընկնում իր գունային լուծումներով. սպիտակ պատերին համադրվում է բաց մոխրագույն մարմարյա հատակը և սպիտակ կարկասային առաստաղը՝ բաց ցերեկային լուսավորությամբ: Թերևս նման հորինվածքը բացատրվում է ցուցանմուշների տպագրական լայն հնարավորությամբ, որի միջոցով ցուցադրությունը կարող է ստանալ կամայական երանգ, կախված նմուշների տեսակից: Այսպիսով նմանատիպ ցուցադրության կազմակերպումը հնարավորություն է տալիս ստեղծել ընդհանուր ոճավորում, կախված ընթացիկ ցուցահանդեսի բնույթից: Այստեղ մանրակերտերը տեղադրված են հիմնականում բարձր սպիտակ պատվանդանների կամ ցածր կարկասային սեղանների վրա՝ իրենց գծագրերի և լուսանկարների առջևում: Դրանք նույնպես ունեն իրենց լուսավորությունը և աչքի են ընկնում մաքրությամբ և կառուցվածքային վարպետությամբ, ուստիև պետք է որոշ չափով մեկուսացված լինեն այցելուի հետ անմիջական շփման հնարավորությունից: Դա մասնավորապես պետք է իրականանա առանձնացված լուսավորությամբ ցուցափեղկերի օգտագործմամբ, հաշվի առնելով դիտողի աչքի հորիզոնի էրգոնոմիկ չափումները և ծավալատարածական հարաբերությունների ամբողջական ընկալման դրսևորումները:

Այստեղ տարածայնություն է ի հայտ գալիս նաև պատերի, պատվանդանների սպիտակ գունավորման համադրմամբ, քանի որ դրանց վրա տեղադրվող մանրակերտերը ևս մեծամասամբ սպիտակ են և իրենց շրջապատում պահանջում են կոնտրաստային գունային հարաբերություններ: Ցուցադրությունից մուտք է բացվում դեպի քննարկումների դահլիճ, որը հագեցած է համապատասխան կահավորմամբ և տեխնոլոգիաներով, հնարավորություն տալով հավաքվել կլոր սեղանի շուրջ, ունենալ հանդիսատես և դիտել պրոեկցիոն էկրանին համապատասխան նյութեր: Ինտերիերի դիզայնի տեսանկյունից, այնուամենայնիվ, շատ քիչ աշխատանք է այս դահլիճում արված, քանի որ մեծամասամբ կահավորումն ու տեխնիկան ուղղակիորեն շարված են իրենց համար նախատեսված տեղերում, բայց ընդհանուր դիզայներական լուծումներով չեն ամփոփվում մեկ ընդհանուր ոճային գաղափարում և դիտվում են որպես ինտերիերի առանձին տարրեր:

Տեսողական հաղորդակցություն: Ճարտարապետության թանգարանի պրոֆիլային առանձնահատկությունն արդեն իսկ թելադրում է գրաֆիկական տարրերի առկայությունը: Նախագծերի ներկայացումը կատարվում է պլանշետային եղանակով, որի լավագույն դրսևորումը այստեղ արտահայտվում է շարժական պատերի երկայնքով ձգվող պոլիվինիլքլորիդի տպագրությամբ վահանակների վրա, որոնք իրենց գրաֆիկական լուծումներով թելադրում են ցուցադրության ողջ գունային գամման և ոճավորումը:

Ինտերիերի կոմպոզիցիոն սկզբունքները: Ցուցասրահում ցուցափեղկերի դասավորությունը նախատեսված է հաջորդական դիտման համար, հիմնականում դրանք իրենցից ներկայացնում են թեմատիկ պաստառներ, որոնց դիմաց համապատասխանաբար տեղադրվում են առկա մանրակերտերը՝ բաց կամ ապակեպատ պատվանդաններով: Լրացուցիչ մաս են կազմում մշակութային խոշոր արժեք ներկայացնող գծագրերի բնօրինակները, որոնք հիմնականում մշտական ցուցադրությամբ չեն ներկայացվում: Շարժական պատերի օգտագործումը ինտերիերում թույլ է տալիս ցուցադրության բնույթից կախված, ստեղծել յուրահատուկ կոմպոզիցիոն հորինվածք:

Ինտերիերի գունային և տեքստուրալ համադրումները: Յուցասրահի ընդհանուր գունային գամման սպիտակի և մոխրագույնի համադրումն է, բայց դրան լրացնելու են գալիս տպագիր վահանակները՝ իրենց ավելի համարձակ գունային լուծումներով: Հատակի սպիտակ մարմարին համադրվում է պատերի սպիտակ հիմնաներկը, որին լրացնում է հատակից վեր բարձրացող մարմարյա սյունաշարն ու կախովի առաստաղի մոխրագույնը: Յուցափեղկերի պատվանդաններն ու շարժական պատերը ևս ճերմակ են՝ շրջանակված մետաղական կարկասով:

Կահավորումը: Ճարտարապետական թանգարանում ցուցանմուշները հիմնականում ներկայացված են սպիտակ պատվանդանների վրա, որոնք իրենց ծավալներով և բարձրությամբ տարբերվում են: Դա պայմանավորված է մանրակերտերի մասշտաբային հարաբերություններից: Կան ցուցափեղկեր, որոնք ապակեպատ են և ունեն առանձին ներքին լուսավորություն: Կահավորման այսպիսի եղանակը միասնական ոճավորում ունի, բայց գունային առումով դրանց վրա ներկայացվող ճերմակ մանրակերտերի ծավալատարածական հորինվածքները երբեմն միախառնվում են պատվանդանների հետ, թույլ չտալով ստանալ ամբողջական տպավորություն:

Լուսավորությունը: Թանգարանի ցուցասրահում առկա են լուսամուտներ, որոնց մի մասը սքողված են շերտավարագույրով, իսկ վրայից անցնում է շարժական պատի շերտը՝ ծածկելով դրանց կեսից ավելին: Բնական լուսավորությունը այսպիսով նվազագույնի է հասցված, իսկ արհեստական լուսավորությունը կազմակերպված է ընդհանուր և կետային տարբերակներով: Ընդհանուր լուսավորությունը իրենից ենթադրում է առաստաղից կախված ցերեկային լուսատուներ, իսկ ուղղորդվածը՝ յուրաքանչյուր պատի շերտին ամրացվող լուսամփոփներ են, որոնք ունենալով բավականին մեծ չափեր՝ ուշադրությունը կենտրոնացնում են իրենց վրա և, այնուամենայնիվ, նախատեսված չեն նմանատիպ լուսավորության իրականացման համար:

Միջազգային հայրնի զուգահեռները: Զուգահեռներ անցկացնելով ժամանակի լավագույն նույնապրոֆիլ թանգարանների միջև, որպես լավագույն օրինակներ կարելի է նշել Գերմանական ճարտարապետական թանգարանը, Շչուսկի թանգարանը

Մոսկվայում, Կանադայի ճարտարապետական կենտրոնը⁶⁰: Գերմանական ճարտարապետական թանգարանը, որը ստեղծվել է 1984թ.-ին, զբաղեցնում է մի ամբողջ շինություն: Տվյալ շինությունը հատակագծային լուծումներով ամբողջապես ձևափոխվել է թանգարանի համար և այժմ հնարավորություն է տալիս կազմակերպելու ինչպես մշտական, այպես էլ ժամանակավոր ցուցադրություններ: Թանգարանն ունի նաև մեծ գրադարան: Այստեղ ինտերիերի գունային հարաբերությունները հիմնականում սպիտակի և սևի երանգների մեջ են, որոնց համադրվում են մանրակերտերի ծավալները՝ ևս դառնալով ինտերիերի մասնիկ, ամբողջացնում են ողջ հորինվածքը: Այստեղ լուսավորությունը վերին գոտում կրում է ընդհանրական բնույթ, քանի որ տեղադրվելով համապատասխան վիտրաժային կամարակապ կամ բրգաձև առաստաղի մեջ, ստեղծում է բնական լուսավորության պատրանք՝ համադրվելով նույն առաստաղին շարունակող ապակեպատ մակերեսին: Դրանք ևս հարկ եղած դեպքում փակվում են ապահովելով համապատասխան ուղղորդված լուսավորություն⁶¹: Թանգարանային ինտերիերի դիզայնի նման հորինվածքը մոնումենտալ տպավորություն է ստեղծում և նպաստում է ճարտարապետական ծավալատարածական հորինվածքների ամբողջական ընկալմանը (*տե՛ս նկար 40*):

Եզրակացություն: Այսպիսով կարելի է հանգել եզրակացության, որ Հայաստանի ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտը Ալ. Թամանյանի թանգարանի հետ միավորվելով շարունակում է կատարել նախնական գործունեությունը, այն եզակի է իր ցուցանմուշների նշանակությամբ և հարստությամբ, սակայն դրանց գրագետ մատուցման համար ունի արդիականացման կարիք: Ֆունկցիոնալ նպատակահարմարության առումով ճարտարապետական թանգարանի ինտերիերի դիզայնը պահանջում է հատուկ հատակագծային լուծումներով նախագծված առանձին շինություն՝ նախատեսված հենց թանգարանի համար, որտեղ էլ կծավալվի ողջ հորինվածքը: Անհրաժեշտ է նշել նաև, որ ժամանակակից թանգարաններն ուղղակիորեն դժվար է պատկերացնել առանց ինտերակտիվ թվային

⁶⁰ CCA official website, <http://www.cca.qc.ca/en>. (հասանելի է 30.10.2015):

⁶¹ Deutsches Architecture museum official website, <http://www.dam-online.de/portal/en/Events/AFTERWORKTALK/0/0/81238/mod1177-details1/1847.aspx>. (հասանելի է 28.10.2015):

սարքավորումների, որոնք հնարավորություն են ընձեռում դիտողին մոտենալ կառույցին ցանկացած դիտակետից, ներս մտնել, շրջել և այլն: Այս թանգարանը ևս բացառություն չէ: Թեև նմանատիպ մեկ օրինակ ներկայումս կա թանգարանում, բայց այն, այնուամենայնիվ, չի լուծում ցուցադրության ընդհանուր գեղագիտական ճանաչողության հարցը:

3. Գաֆեսնեան արվեստի կենտրոն (*տե՛ս նկար 41*)

Գաֆեսնեան արվեստի կենտրոնի դիրքը քաղաքային միջավայրում բավականին շահեկան է: Այստեղ հիմնականում ներկայացվում է կենտրոնի հիմնադիր Ջերարդ Գաֆեսնեանի հարուստ մշակութային հավաքածուն: Ավելի քան 5000 արվեստի նմուշ պարունակող այս հավաքածուն հատկապես հարուստ է ժամանակակից գեղարվեստական ստեղծագործություններով: Դրանք հիմնականում տարբերվում են իրենց բնույթով և զբաղեցնում են թանգարանի համապատասխան գոտիները: Գաֆեսնեան արվեստի կենտրոնը, բացվել է 2009թ.-ի նոյեմբերի 17-ին Կասկադ համալիրում: Դրա ճարտարապետական գաղափարի նախահեղինակը Ալ. Թամանյանն է, թեպետ տարիներ հետո այն կյանքի կոչվեց Երևանի գլխավոր ճարտարապետ Ջիմ Թորոսյանի կողմից: Կասկադ ոճի թորոսյանական ընկալումն իր մեջ ներառում էր Թամանյանի նախագիծը, բայց նաև լի էր նոր գաղափարներով՝ մոնումենտալ արտաքին աստիճանները, ներսի երկար շարժասանդուղքներով թունելը, բակերի և բացօթյա պարտեզների բարդ ցանցը՝ զարդարված հայոց հարուստ պատմության և մշակութային ժառանգության մոտիվները կրող բազմաթիվ զարդաքանդակներով:

Ֆունկցիոնալ գոյությունը: Գաֆեսնեան Արվեստի կենտրոնի մուտքը բացվում է Կասկադ համալիրի ձախ կողմից, որտեղ ընդարձակ ընդունարանն է: Առաջին հարկում նույնպես կա ցուցադրություն: Մուտքը դեպի մնացած սրահներ իրականացվում է վերընթաց շարժական աստիճանահարթակի միջոցով: Թանգարանում գերիշխում են ճարտարապետական հիմք հանդիսացած քարաշեն միտումները, որոնք երբեմն համադրվում են փայլատ մակերեսների հետ: Այստեղ տարբեր հարկերում ներկայացվում են Ժ. Գաֆեսնեանի հավաքածուից տարաբնույթ արվեստի գործեր, որոնք ըստ կառուցվածքի դասավորվել են հետևյալ կերպ.

- «Խանջյան» սրահ, 250մ² մակերեսով ընդարձակ սրահում է գտնվում մեծանուն հայ նկարիչ Գրիգոր Խանջյանի մոնումենտալ որմնանկարը, որը պատկերում է հայոց պատմության կարևորագույն էջերը:
- «Պարտեզի հարթակներ», շատրվաններով, ցայտաղբյուրներով և ծաղկաթմբերով ձևավորված հարթակներ՝ Երևանի և Արարատ լեռան համայնապատկերով:
- «Հատուկ միջոցառումների սրահ», գտնվում է Գաֆեսճեան արվեստի կենտրոնի ամենավերին հարթակում, որտեղից հիասքանչ տեսարան է բացվում դեպի Երևան՝ Արարատ լեռան գեղատեսիլ համայնապատկեր: Հատուկ միջացառումների սրահը համապատասխանում է դասախոսությունների, կինոփառատոնների, կորպորատիվ միջոցառումների, համերգների կազմակերպման համար: Սրահում գործում է նաև կոկտեյլ-բար:
- «Երեք սուզորդների հարթակ», Գաֆեսճեան արվեստի կենտրոնի ամենավերին հարթակն է, որտեղից բացվում է Երևանի գեղատեսիլ համայնապատկերը: Հարթակում տեղակայված է արտացոլող ջրավազանը, որի կենտրոնում վեր է խոյանում Դեյվիս Մարտինի «Երեք սուզորդների» տպավորիչ քանդակը: Հարթակի ինքնատիպ լուսավորությունը հատուկ գեղեցկություն է հաղորդում տարածքին մայրամուտից հետո:
- «Աստղերի հարթակ», «Հատուկ միջոցառումների սրահի» նախասրահն է, որտեղ տեղակայված է «Սվարովսկի Բյուրեղյա պալատ» ցուցադրությունը, իր ժամանակակից արվեստի հրաշալի ստեղծագործություններով և գունեղ լուսավորությամբ⁶²:

Կենտրոնում մշտական ցուցադրություններից բացի կազմակերպվում են նաև ժամանակավոր ցուցադրություններ, դասախոսություններ, ֆիլմերի ցուցադրություններ, համերգաշարեր և կրթական ծրագրեր: Տարեկան ավելի քան մեկ միլիոն մարդ է այցելում կենտրոն:

Ընդհանուր հորինվածքը, կասկադային լուծումներից ելնելով, բավականին պրոգրեսիվ է և դինամիկ:

⁶² Գաֆեսճյան արվեստի կենտրոնի պաշտոնական կայք, <http://cmf.am/> . (հասանելի է 10.11.2016):

Ինտերիերի գունային և տեքստուրալ համադրումները: Այստեղ գունային համադրություններն ու նյութերի օգտագործումը յուրաքանչյուր սրահում տարբերվում է ըստ նմուշների տեսակների: Ընդհանուր միջավայրում գերիշխում են և՛ համարձակ կոնտրաստները, և՛ պաստելային նուրբ անցումները: Հորինվածքի այսպիսի ընտրությունը պայմանավորված է ցուցանմուշների ներկայացման պահանջներից ելնելով, բայց միևնույն ժամանակ պահպանում է միասնականությունն ու ոճը:

Լուսավորությունը: Այդպես է կազմակերպված նաև թանգարանի լուսավորությունը: Սրահներում երբեմն առկա պատուհաններից անխոչընդոտ ներթափանցում է բնական լույսը՝ սրելով դրանցում ցուցադրվող ապակյա նմուշների առանձնահատկությունները: Երբեմն էլ բնական, ցրված լույսն ի սպառ բացակայում է՝ տուրք տալով բացառապես արհեստական շեշտադրված լուսավորությանը, ինչպես օրինակ Սվարովսկու քարերի սրահում:

Կահավորումը: Ցուցանմուշների բազմազանության պատճառով թանգարանի կահավորումն իրականացված է տարբեր եղանակով: Ցուցափեղկերն ու պատվանդանները տարբերվում են իրենց ծավալային հորինվածքներով, բայց նախապես կրում են միասնական ոճավորում, որով ամբողջացնում են ինտերիերի դիզայնի հորինվածքը:

Տեսողական հաղորդակցություն: Գաֆեսճեան արվեստի կենտրոնում մեծ դեր ունեն ուղղորդիչ տարրերն ու նշանները, առանց որոնց դժվար կլիներ կողմնորոշել այցելությունների ընթացքը: Յուրաքանչյուր հարթակ և սրահ ունի իր տեսողական հաղորդակցությունը, որը գրաֆիկորեն ինտեգրվելով ընդհանուր միջավայրին լավագույնս կատարում է հիմնական տեղեկատվական գործառույթը: Գրաֆիկական տեղեկատվական մշակումներ են նաև ցուցասրահների պատերի տեքստային գրվածքները, որոնք յուրահատուկ շունչ են հաղորդում ինտերիերին:

Եզրակացություն: Այսպիսով պարզ է դառնում, որ Գաֆեսճեան արվեստի կենտրոնը խիստ հազեցած համալիր է: Այստեղ ցուցադրական սխեման և միտումները նույնպես փոքր-ինչ տարբերվում են քննարկվող երևանյան թանգարաններից: Կարելի է ասել, որ ներքին միջավայրի դիզայներական և ճարտարապետական լուծումներով այն եզակի է կասկադային կառուցվածքի շնորհիվ և համադրվելով դիզայներական

գեղագիտական լուծումներին՝ լավագույնս է մատուցում դրանում առկա տարաբնույթ նմուշները:

4. Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ (տե՛ս նկար 42)

Հայոց ցեղասպանության թանգարանի կարևորությունը անգնահատելի է ոչ միայն հայ ժողովրդի համար, այլև ունի համաշխարհային հսկայական նշանակություն, սկսելով հանրության ուշադրությունը այն համամարդկային խնդրի վրա, որը մինչ օրս շարունակում է մնալ չլուծված:

Թանգարանն իր դռներն է բացել հանրության առջև 1995թ.-ին՝ Հայոց ցեղասպանության 80-րդ տարելիցին ընդառաջ: Ճարտարապետական մտքի ճկունության շնորհիվ հեղինակներ Ս. Քալաշյանը, Լ. Մկրտչյանը և Ա. Թարխանյանը այնպես են կազմակերպել ընդհանուր համալիրը, որ թանգարանային համակառույցը տեղ է գտել ընդհանուր համալիրի հարավ-արևմտյան անկյունում, չաղճատելով ընդհանուր ազդեցիկ տպավորությունը: Թանգարանային հորինվածքի անբաժան մասն են կազմում Ֆ. Առաքելյանի քանդակազարդումները: Այս երկհարկանի շենքը յուրօրինակ կառուցվածք ունի, տանիքի մակերևույթը հարթ է, հավասարեցված է Մեծ եղեռնի հուշարձանի հարթակին և պատված է բետոնե սալիկներով: Այստեղից տեսարան է բացվում դեպի վեհաշուք Արարատ լեռը: Ընդհանուր հորինվածքը կազմակերպված է չնսեմացնելու հուշահամալիրի տպավորությունը⁶³:

Ցունկցիոնալ գոյրկորումը: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը զետեղված է երկհարկ օղակաձև շինության ներքո, որի առաջին հարկը ստորգետնյա կառուցվածք ունի: Այստեղ տեղակայված են վարչական, ինժեներա-տեխնիկական սպասարկման սրահները, ինչպես նաև թանգարանային պահոցները, գրադարանը, ընթերցասրահը: Թանգարանում մեծ նշանակություն ունի նաև Կոմիտասի անվան դահլիճը, որը նախատեսված է շուրջ 170 հանդիսատեսի համար: Ցուցադրությունն ամբողջապես զետեղված է թանգարանի երկրորդ հարկում և զբաղեցնում է 1000մ² տարածք: Ցուցադրության ողջ հորինվածքը ծավալվում է երեք փակ և մեկ բացօթյա սրահներում, որտեղ ամփոփվում են փաստաթղթեր, վավերագրական արժեք ունեցող

⁶³ Հայոց ցեղասպանության թանգարանի մասին, http://www.genocide-museum.am/arm/museum_info.php. (հասանելի է 04.10.2015):

լուսանկարներ, բազմատեսակ նյութեր: Ներքին բակի կենտրոնում տապանի տեսքով Ֆ. Առաքելյանի կողմից քանդակված քարե մեծադիր (8 մ x 3 մ) խաչքարն է⁶⁴:

Ինտերիերի կոմպոզիցիոն սկզբունքները: Հայոց ցեղասպանության թանգարանի ինտերիերի դիզայնը ծավալվում է ստորգետնյա աստիճանահարթակից ներս մտնելով դեպի կենտրոնական նախասրահ, որից աջ ընդունարանի աշխատանքային գոտին է, դեմ առ դեմ բացօթյա սրահը և դեպի ձախ բացվում է հիմնական ցուցադրությունը: Ընդհանուր հատակագծային հորինվածքը հիշեցնում է ժամանակաբովանդակային մի ուղի, որով անցել և տառապել է հայ ժողովուրդը: Հատակի և պատերի թեքությունը փոքր-ինչ սյուրռեալիստական մթնոլորտ է ստեղծում, ճնշելով յուրաքանչյուր այցելուի, ստիպելով վերապրել կատարվածը: Ցուցասրահում ցուցափեղկերի և վահանակների դասավորությունը նախատեսված է հաջորդական դիտման համար: Սրահներում ցուցափեղկերի միջև հեռավորությունը կանոնավոր համաչափ չէ, դրան յուրահատուկ դիմ էն հաղորդում ասիմետրիկ ոչ ստաբիլ հերթափոխումները:

Տեսողական հաղորդակցություն: Հայոց ցեղասպանության թանգարան ինստիտուտը այն եզակի թանգարաններից է, որտեղ գրաֆիկական մասը չափազանց մեծ տեղ է գրավում՝ դառնալով ընդհանուր ինտերիերի բաղկացուցիչ մասը: Այստեղ ամբողջական պատերը երբեմն ծածկված են վեր սլացող գրաֆիկական տեղեկատվական պաստառներով, որոնք իրենց մուգ գուներանգի, տեքստերի և լուսանկարների ռիթմիկ դասավորվածության շնորհիվ կրկին նպաստում են ինֆորմացիայի ներկայացման մատչելիությանը, տեղեկատվության տրամադրման օպտիմալացմանը:

Ինտերիերի գունային և տեքստուրալ համադրումները: Թանգարանում գերիշխում են մուգ խոր գունային դաշտերը: Հորինվածքը բավականին ծանր է և ճնշող, երբեմն «շնչելու» տեղ են տալիս կանոնավոր ցուցափեղկերն ու սպիտակ պրոեկցիոն էկրանները: Բազալտե մոխրագույն մակերեսները, սև, սպիտակ, բոսոր երանգների փայլուն և փայլատ մակերեսների համադրությամբ յուրահատուկ խորը

⁶⁴Հայոց ցեղասպանության հուշահամալիր, <http://www.encyclopedia.am/pages.php?bld=2&hld=1371>. (հասանելի է 07.10.2015):

մթնոլորտ են ստեղծում, որին համադրվելու են գալիս նաև ցուցափեղկերի ապակու շերտերն ու էկրանների մակերեսները:

Կահավորումը: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կահավորման բաղկացուցիչ մասն են կազմում պատերի ներսում գտնվող ցուցափեղկերը, որոնք չեն առանձնանում ընդհանուր հորինվածքում և ինտեգրվում են միջավայրի միասնականությանը: Այստեղ համապատասխան գոտիներում տեղադրված են նստարաններ, որոնք թույլ են տալիս դադար առնելով, դիտել էկրաններին պրոեկտվող վավերագրություններն ու ֆիլմերը:

Լուսավորությունը: Թանգարանում լուսավորությունը կատարվում է միայն արհեստական եղանակով: Բացառությամբ նախասրահի, որից ապակեպատ անցուղիով ելք է բացվում բացօթյա սրահ: Մնացած սրահներում ողջ լուսավորությունն իրականացվում է արհեստական համակարգով՝ պահպանելով հիմնականում ընդհանուր մթին, խորը տպավորությունը և ուշադրությունը տեղ-տեղ կենտրոնացնելով ցուցանմուշների ուղղությամբ: Ուղղորդիչ լուսավորությանը համադրվում է նաև պրոեկտորներից ճառագող լույսը, որը ևս կենտրոնացնում և շեշտում է էկրանի հարթությունը տվյալ մուգ միջավայրում:

Միջազգային հայտնի զուգահեռները: Յեղասպանությունը լինելով ողջ մարդկության ցավը, մինչ օրս շարունակում է մնալ համամարդկային գերխնդիր: Թեպետ Մեծ եղեռնը 20-րդ դարի առաջին ցեղասպանությունն էր, բայց անհրաժեշտ է հիշել, որ նմանօրինակ ողբերգություններ եղել և շարունակում են իրագործվել (Հոլոքոստ, Ռուանդա): Յեղասպանության թեման միշտ էլ մնալու է մարդկության ուշադրության թատերաբեմում, ուստի շատ քաղաքներում մինչ օրս շարունակում են կանգնեցվել հուշարձաններ, ստեղծվում են հուշահամալիրներ և թանգարաններ: Միջազգային զուգահեռներ անցկացնելով նմանօրինակ թանգարանների միջև կարելի է հիշատակել Հոլոքոստի հիշատակի թանգարանը Վաշինգտոնում, Ռուանդայի ցեղասպանության թանգարանը և այլն: Վաշինգտոնի Հոլոքոստի թանգարանը նախագծվել է ճարտարապետ Ջեյմս Ինգո Ֆրիդի կողմից, որպես «հիշողության արթնացում»: Ներս մտնելիս թանգարանի յուրաքանչյուր դրվագ դառնում է Հոլոքոստի արտահայտություն՝ ստեղծելով ցավի, տագնապի, վախի, միևնույն ժամանակ զոհերի

ոգու, վեհության տպավորություն: Ինտերիերի դիզայնի մեծ մասը և հատկապես մշտական ցուցասրահները նախագծվել է Ռալֆ Ափփելբաում ընկերության կողմից: Թանգարանը կազմված է երկու ցուցադրությունից: Չափազանց մեծ տպավորություն է թողնում հիշատակի սրահը: Այն ունի վեցանկյուն հատակագիծ, որի դոմինանտն է կազմում հավերժական կրակը: Դրա արտացոլանքները յուրահատուկ տպավորություն են թողնում՝ ստիպելով այցելուներին լռել և ընկղմվել հոգևոր մթնոլորտում: Մշտական ցուցասրահում զետեղված են շուրջ 900 նմուշ, 70 վիդեոմոնիտոր, 4 կինոսրահ, որտեղ ցուցադրվում են պատմական դրվագներ և վկաների հուշեր: Առաջին հարկից վեր սլացող վերելակներից մուտք է բացվում չորրորդ հարկում գտնվող Հոլոքոստի ժամանակագրական պատմական ցուցասրահ, իջնելով հաջորդաբար երրորդ հարկ, որտեղ այցելուները ծանոթանում են գետտոյի հետ, ինչպես նաև գազային խցերում խեղդամահ եղած առավել քան վեց միլիոն հրեաների պատմությանը: Չափազանց հետաքրքիր է կազմակերպված «դեմքերի աշտարակը», որը վերասլաց դիմանկարների աշտարակ է հիշեցնում և շատ ազդեցիկ տպավորություն թողնում: Մշտական ցուցասրահներում տիրող մութ միջավայրը, կենտրոնացված տեղային լուսավորությունը և լուսանկարների ու տեքստերի գրաֆիկական հնարամիտ համադրությունը չափազանց ճնշող և տպավորիչ ազդեցություն են թողնում (*լրե' ս նկար 43*)⁶⁵:

Եզրակացություն: Այսպիսով վերը նշվածից երևում է, որ Երևանի և միջազգային թանգարանների համատեքստում իր դիզայներական լուծումներով բավականին լավ է կազմակերպված Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը, որն ի սկզբանե կառուցված լինելով որպես թանգարան իր մեջ լավագույնս է ներկայացնում ցուցադրվող նյութը: Թանգարանը, նախքան 2015թ.-ի վերանորոգումը, ևս ուներ բավականին հետաքրքիր ինտերիերի դիզայն, սակայն վերջին նորոգումից հետո այն արդիականացավ, ստեղծելով ցեղասպանությանը բնորոշ «ցավոտ» միջավայր, հագեցավ տեխնոլոգիական ինտերակտիվ սարքավորումներով: Կարելի է ասել, որ միջազգային նույնօրինակ թանգարանների շարքում Հայոց ցեղասպանության թանգարանը այժմ զբաղեցնում է իր պատվավոր դերը ինտերիերի դիզայնի առումով և

⁶⁵ United States Holocaust Memorial Museum (USHMM) official website, <https://www.ushmm.org/information/exhibitions/museum-exhibitions/permanent>. (հասանելի է 08.10.2015):

գրավչություն է ներկայացնում բազում օտարազգի ճամփորդների, գիտնականների և հետաքրքրասերների համար:

5. Հայաստանի բնության պետական թանգարան (տե՛ս նկար 44)

Հայաստանում եզակի է իր տեսակով Հայաստանի բնության պետական թանգարանը, քանի որ նմանօրինակ այլ թանգարան այստեղ գոյություն չունի: Երկհարկ շինության առաջին հարկում ներկայացված են ֆլորայի և ֆաունայի հազվագյուտ տեսակներ: Թանգարանում այցելուներին են մատուցվում հայաստանյան կաթնասունների, թռչունների, սողունների, երկկենցաղների, ձկների, միջատների, սարդակերպերի խրտվիլակներ, կմախքներ, մաշկեր, փափկամարմինների խեցիներ, ծառերի կտրվածքներ, հերբարիումի, բրածո բույսերի ու կենդանիների, օգտակար հանածոների նմուշներ, յուղաներկ կտավներ, գծանկարներ և այլն: Թանգարանում գործում են ցուցահանդեսներ, պարբերաբար կազմակերպվում են միջոցառումներ, որոնց հիմնական նպատակը բնապահպանական աշխարհայացքի ձևավորումն է և ակտիվ մասնակցությունը էկոլոգիական խնդիրների լուծման գործում: Հայաստանի բնության պետական թանգարանը թեև հիմնադրվել է 1952թ.-ին «Կապույտ» մզկիթի բակում, բայց 1999թ.-ին տեղափոխվել է բոլորովին նոր մասնաշենք, որը նախկինում թիվ 73 դպրոցին է պատկանել: 2004թ.-ին բացվեց նոր հիմնական ցուցադրությունը: Այդ ժամանակահատվածում իրանահայ բարերարներ Բելլա և Լևոն Ահարոնյանների մեկենասությամբ թանգարանը հիմնովին վերակառուցվեց ու նոր ցուցադրությամբ ներկայացավ այցելուներին: Թանգարանի ֆոնդերում առկա են ավելի քան 6 հազար ցուցանմուշներ, որոնց մեկ երրորդը (շուրջ 2000-ը) ներկայացվում է այցելուներին մշտական և ժամանակավոր ցուցադրություններում⁶⁶:

Ֆունկցիոնալ գոյությունը: Թանգարանը կազմված է մշտական, կենդանի և ժամանակավոր ցուցադրություններից: Մշտական ցուցադրությունը զետեղված է 4

⁶⁶ Հայաստանի բնության պետական թանգարանի պաշտոնական կայք, <http://smn.am/>. (հասանելի է 12.01.2016):

իրար համակցվող սրահներում: Ցուցակագրական ձևով ներկայացնենք դրանցից յուրաքանչյուրը.

Սրահ 1. Այստեղ ներկայացված են Հայաստանի ընդերքին բնորոշ նյութերի նմուշներ, որոշ բուսատեսակներ, ինչպես նաև բուսական և կենդանական աշխարհի առավելապես վտանգի ենթարկված, անհետացող և հազվագյուտ տեսակների հաշվառման ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գիրքը և բնության հատուկ պահպանվող տարածքները՝ ներկայացված քարտեզների և վահանակների տեսքով:

Սրահ 2. Այստեղ ներկայացված են կիսաանապատայինից դեպի ալպիական գոտի ընկած հատվածին բնորոշ բուսական և կենդանական տեսակները:

Սրահ 3. Այստեղ ներկայացված են տափաստանային գոտուն բնորոշ բնական բարձրկալոր բուսատեսակներ, գայլ, գիշատիչ թռչուններ:

Սրահ 4. Այս սրահը նվիրված է թեհրանաբնակ բարերարներ տեր և տիկին Ահարոնյանների ընտանիքին, ովքեր նվիրաբերել են թանգարանին մեծ արժեք ներկայացնող բազմաթիվ ցուցանմուշներ:

Թանգարանում, ինչպես արդեն նշվեց գոյություն ունի նաև կենդանի ցուցադրություն, որն արտահայտվում է ակվարիումային կենդանի ձկնատեսակների մշտական ցուցադրությամբ: Թանգարանի ճեմասրահում պարբերաբար կազմակերպվում են անհատական և խմբակային ցուցահանդեսներ, միջոցառումներ, շնորհանդեսներ, բնապահպանական թեմաներով կինոդիտումներ, վիկտորինաներ, մրցույթներ:

Ինտերիերի գունային և տեքստուրալ համադրումները: Հայաստանի բնության պետական թանգարանը, ինչպես արդեն նշվեց, տեղակայված է երկհարկ շինության մեջ: Դրա մուտքը բացվում է Տիգրան Մեծ պողոտայից: Ներս մտնելիս փոքրիկ նախասրահին հաջորդում է ցուցասրահը, որն ունի կենտրոնական հորինվածք: Դրանից աջ և ձախ կողմերով նեղ միջանցքներն ուղղորդում են դեպի այլ ցուցասրահներ: Այստեղ մարմարյա հատակից վեր են խոյանում նույնօրինակ սյուները, որոնք կրում են իրենց վրա առաստաղի ճեմակ մակերեսի ծանրությունը: Գունային լուծումները տարբերվում են ըստ բովանդակության: Երբեմն հանդիպում են ամբողջական բնության տեսարաններով պատեր, որոնց ֆոնին տեղադրված են

համապատասխան կենդանատեսակների խրտվիլակները: Յուրաքանչյուրը ևս տարբերվում են թե՛ իրենց նյութով, թե՛ կառուցվածքով, և թե՛ գունային լուծումներով: Դրանք բոլորն էլ հարմարեցված են էրգոնոմիկ պահանջներին և նախագծված են դրանցում ներկայացվող ցուցանմուշների պայմաններին համապատասխան: Սրահում բավականին աչքի են զառնում ճերմակ ներկված երկփեղկ փայտե դռները, որոնք երբեմն նաև հանդիսանում են որպես կապող օղակ սրահների միջև: Դրանք չափազանց մեծ ուշադրություն են գրավում ընդհանուր միջավայրում և աղճատում ցուցադրությունը:

Տեսողական հաղորդակցություն: Թանգարանի գրաֆիկական մասն են կազմում ստվարաթղթե պլանշետների վրա փակցված տեղեկատվական նյութերը և ցուցանմուշների տակագրերն ու ծանոթագրությունները, որոնք պարզ են ընթեռնելի, բայց միասնական ոճավորում և գրաֆիկականա հորինվածք չունեն:

Լուսավորությունը: Թանգարանի ցուցասրահում լուսավորությունն իրականացվում է հիմնականում առաստաղին փակցված ընդհանուր ցերեկային լուսավորությամբ: Գրեթե բացակայում է ուղղորդված և բնական լուսավորությունը, որով ցուցադրությունը միապաղաղ է դիտվում և չի ընկալվում հորինվածքի դոմինանտն ու երկրորդականը:

Միջազգային հայտնի զուգահեռները: Թեև Բնության պետական թանգարանը եզակի է հայ իրականության մեջ իր պրոֆիլով, բայց միջազգային զուգահեռներ անցկացնելիս պարզ է դառնում, որ այն ունի արդիականացման կարիք, որի արդյունքում պետք է հարստանա կենդանական, բուսական տեսակներով և հագեցվի ջերմալուսային տեխնոլոգիաներով: Այսպիսով միջազգային նմանօրինակ թանգարաններից այցելությունների թվով աչքի է ընկնում Բնության պատմության ազգային թանգարանը Վաշինգտոնում, որի ցուցանմուշների քանակը հասնում է 7.300.000-ի, իսկ ընդհանուր մակերեսը 123.000մ² է: Այն կառուցվելով 1910-ական թվականներին ի սկզբանե նախատեսված է եղել, որպես ցուցադրություն: Շինությունը կրում է նեոկլասիկ ոճ⁶⁷: Այստեղ ցուցանմուշները տարամասշտաբ են և տարաբնույթ,

⁶⁷ Блохина И. , Архитектура: Всемирная история архитектуры и стилей, Москва, изд. ЛитРес, 2014, стр. 317.

կան նաև կենդանական ամբողջական բաժիններ: Յուրաքանչյուր ցուցանմուշ ներկայացված է իրեն բնորոշ միջավայրում: Այստեղ տարամասշտաբ նմուշների խրտվիլակները մարդկային հոսքի մեջ անմիջական տպավորություն են ստեղծում: Ընդարձակ մեծ մակերեսները և առաստաղի բարձրությունը հնարավորություն են ստեղծում ճկուն օգտագործել ներքին միջավայրը: Դրան լրացնելու են գալիս ժամանակակից տեխնոլոգիաները, ինտերակտիվ սարքավորումներն ու ուղղորդիչ տեսողական հաղորդակցության այնպիսի լուծումները, որոնք ամբողջացնում են ընդհանուր ինտերիերի դիզայնը (*տե՛ս նկար 45*):

Եզրակացություն: Դիտարկելով համաշխարհային փորձը և ինտերիերի դիզայնի առանձնահատկությունները՝ կարելի է հանգել եզրակացության, որ Հայաստանի բնության պետական թանգարանը թեև եզակի է իր նշանակությամբ և հարստությամբ Հայաստանի սահմաններում, սակայն ունի արդիականացման կարիք: Ֆունկցիոնալ նպատակահարմարության առումով բնության թանգարանի ինտերիերի դիզայնը պահանջում է հատուկ հատակագծային լուծումներով նախագծված շինություն, որտեղ էլ կծավալվի ողջ թեմատիկ հորինվածքը՝ առաջնորդվելով դրանում պահվող և ներկայացվող նմուշների առանձնահատկություններով:

6. Կոմիտասի թանգարան-ինստիտուտ (*տե՛ս նկար 46-50*)

Կոմիտասի թանգարան-ինստիտուտը եզակի է իր բնույթով Հայաստանի թանգարանների շարքում: Նախ և առաջ նշենք, որ Կոմիտասի անունը անգնահատելի է յուրաքանչյուր հայի համար: Կոմիտասի մասին խոսելիս ակամա յուրաքանչյուրի մոտ առաջանում է սրբության, զրկանքի ու ցեղասպանության ահասարսուռ վերհուշի արթնացումը, որը անմիջականորեն արտահայտված է հենց նրա անունը կրող թանգարան-ինստիտուտում: Այստեղ ներկայացված են Կոմիտասի կյանքն ու գործունեությունը, հանրահռչակելով նրա բազմակողմանի երաժշտական ժառանգությունը: Թանգարանի նպատակն է կոմիտասագիտության զարգացումը, Կոմիտասի ստեղծագործական ժառանգության հետազոտումը և տարածումը⁶⁸:

⁶⁸ Կոմիտասի թանգարան-ինստիտուտի պաշտոնական կայք, <http://komitasmuseum.am/>. (հասանելի է 14.01.2017):

Կոմիտասի թանգարան-ինստիտուտն իր դռներն է բացել այցելուների առաջ 2015թ.-ի հունվարի 29-ին: Այն կառուցվել է 2014-2015թթ.-ին համանուն զբոսայգում գտնվող ճարտարապետ Կորյուն Հակոբյանի կողմից նախագծված նախկին մշակույթի պալատի հիման վրա: Թանգարանի ներկայիս նախագծի հեղինակն ու ճարտարապետը Արթուր Մեսչյանն է, ինտերիերի դիզայնը պատկանում է Ալբերտո Տորսելլոին, իսկ ցուցադրության համդրումը կազմակերպված է Վարդան Կարապետյանի կողմից:

Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գաղափարական մտահղացումը կոչված է ներկայացնելու և մատուցելու Կոմիտասի կյանքին ու գործունեությանը նվիրված ամենատարբեր նմուշները, միաժամանակ ընկղմելով սրբազան միջավայրի մեջ, արտահայտելու վարդապետի հոգևոր մաքրությունն ու հավատքի ներուժը, որը ոգեկոչում է վեհության և վերասլացության գաղափարը: Վարդապետի կյանքն ու գործունեությունը, երաժշտական ժառանգությունն ամփոփված են թանգարանի ութ սրահների մշտական ցուցադրության մեջ: Ընդ որում 8 սրահների ինտերիերը մշակված է որպես մեկ ամբողջություն: Ստորև, սկզբում ցուցակագրական ձևով ներկայացված է թանգարանի ենթասրահների ցուցադրության բովանդակային հաջորդականությունը: Հաջորդաբար կմեկնաբանվի միասնական ինտերիերի ստեղծագործական սկզբունքները.

- Առաջին սրահի ցուցադրության թեման է Կոմիտասի կենսագրական ժամանակագրությունը:
- Երկրորդ սրահում ներկայացված են Կոմիտասը և իր ժամանակակիցները:
- Երրորդ սրահում ոգեկոչվում է Կոմիտասի միտքը՝ ներկայացնելով նրա աշխատությունները, անձնական օգտագործման իրերը, վկայականները:
- Չորրորդ սրահի ցուցադրության թեման Կոմիտասի բանահավաքչական գործունեությունն է, սրահում ներկայացված են Գևորգյան ճեմարանում ուսանելու տարիների նրա նոտագրության դրվագները:
- Հինգերորդ սրահում Կոմիտասը ներկայացված է որպես կոմպոզիտոր. այստեղ նրա ստեղծագործությունների հեղինակային մեղեդիներն են:

- Վեցերորդ սրահի ցուցադրության թեման Կոմիտասը և հոգևոր երաժշտությունն է. այստեղ ներկայացված է հայ եկեղեցական երաժշտությունը, որը Վարդապետի ողջ գործունեության էական մասն է կազմում:
- Յոթերորդ սրահում ներկայացված են Կոմիտասի ելույթները, որպես հայ երգի քարոզչի գործունեություն՝ համերգներն ու դասախոսությունները, որոնցով հանդես է եկել Փարիզում, Լոզանում, Ալեքսանդրիայում, Թիֆլիսում, Կոստանդնուպոլսում և այլուր:
- Ութերորդ սրահի ցուցադրության թեման է «Կոմիտասից հետո». այստեղ շարժանկարի ժապավենի նման անցնում է Կոմիտասի կյանքը:

Վերոհիշյալ ցուցակազրությունը վկայում է թանգարանի միջավայրի ծրագրային կազմակերպման մասին, որի արդյունքում ընդհանուր մակերեսի գոտևորումն իրականացված է ոգեկոչելու դրա հիմնական ստեղծագործական մտահղացումը: Այստեղ ընդարձակ ցուցասրահներում լավագույնս են ամփոփված վարդապետի կյանքին առնչվող նյութական ժառանգության նմուշները, որոնք արտացոլում են հոգեբանական տառապանքն ու հավատքի լույսը:

Ֆունկցիոնալ գոյությունը: Թանգարանն ունի երկու մուտք, դրանցից առաջինը բացվում է ճակատից, որպես գլխավոր և տանում է դեպի դահլիճ, իսկ երկրորդը բարձրանում է երկար ձգվող վերելքով, որից փոքր երկփեղկ փայտե փորագրությամբ դուռ է բացվում դեպի թանգարանի ցուցասրահներ: Վերոհիշյալ երակարածիգ, նեղ վերասլաց ուղին, ասես հիշեցնում է Դեր Զորի ճանապարհը, որով ժողովրդին միայն հավատքն ու հույսն էր առաջնորդում: Ընդհանուր հարթակից 5 աստիճանները բարձրանում են դեպի կամարապատ կենտրոնական մուտքը, որի երկփեղկ փայտյա դուռը տանում է դեպի նախասրահ: Տվյալ նախասրահից մուտք է բացվում դեպի դահլիճ, անվտանգության սրահ, սանհանգույց: Երկրորդ մուտքից ներս, նախամուտքում զետեղված է հանդերձարանի և հուշանվերների վաճառքի գոտին, որին հաջորդում են ցուցասրահները: Դրանց ընդհանուր հատակագծային լուծումները ծավալվում են ուղղորդելու մարդկային հոսքը ժամանակաբովանդակային հաջորդականությամբ: Ցուցասրահների պատերը մեծամասնությամբ գոտևորվում են ընդհանուր գալարվող սպիտակ գիպսոստվարաթղթե շերտերով, դրանով իսկ

թելադրելով մարդկային հոսքի ուղին: Թանգարանի նախագծում հետաքրքրական են նեղ ուղղորդող միջանցքները, որոնք ևս, ինչպես դեպի մուտք տանող երկարաձիգ թեքահարթակը, հիշեցնում են Տեր Զորի անվերջանալի ուղին: Հատկանշական է նաև վերոհիշյալ ուղիներին ընդառաջ պատերի մեծածավալ գրվածքները, որոնք տողեր են Կոմիտասի բանաստեղծություններից: Դրանք հիանալի կերպով ամբողջացնում են ինտերիերի հորինվածքը: Յուգասրահների միջև անցումները բավականին սահուն և փափուկ են կազմակերպված, որի բացատրությունը մեկ բովանդակային ուղղորդվածությունն է: Սակայն, գունային լուծումների, ցուցափեղկերի դասավորության, լուսավորության շնորհիվ այն ձանձրալի և միապաղաղ չի դիտվում: Ընդհանուր վեհության զգացողությունը ստեղծվում է բաց, ընդարձակ սրահների միջոցով և բարձր առաստաղների առկայությամբ:

Ինտերիերի դիզայնի տեսանկյունից, Կոմիտասի թանգարանում յուրաքանչյուր տարր նախագծված է ընդհանուր միջավայրին համապատասխան, ուստի կարելի է ասել, որ գաղափարաբովանդակային ամբողջությունը լավագույնս է ներկայացված այստեղ:

Տեսողական հաղորդակցություն: Կոմիտասի թանգարանում տեսողական հաղորդակցությունը արտահայտվում է ինչպես պատերին, որպես ուղղորդիչ տարրեր, այնպես էլ ցուցափեղկերի վրա և դրանց ներսում, որպես տակազրեր և ծանոթագրություններ: Դրանք ոճային առումով ընդհանրական են և շատ պարզ, մատչելի և հասանելի լինելու ընկալման համար: Հիմնականում առանձին սպիտակ, դեպի դիտողի տեսողական հորիզոնն ուղղված թեք մակերեսի վրա, սև պարզ տառերով գրվածքները ամենամատչելի կերպով փոխանցում են ցուցանմուշների վերաբերյալ ինֆորմացիան:

Ինտերիերի կոմպոզիցիոն սկզբունքները: Թանգարանի ընդհանուր միջավայրն ունի կենտրոնական հորինվածք, որը ծավալվում է բաց բակի շուրջ: Այն գտնվում է թանգարանի կենտրոնում և բոլոր կողմերից ունի դիտման հնարավորություն: Այսպիսի հորինվածքը պայմանավորված է դրանում գտնվող խորհրդանշական չինարի ծառի առկայությամբ, որն ասես դրսում գտնվելով հանդերձ ինտերիերի անբաժանելի մասն է կազմում: Յուգասրահում ցուցափեղկերի և պատերին ագուցված նկարների

դասավորությունը նախատեսված է հաջորդական դիտման համար, ստեղծելով յուրօրինակ հաջորդական դիմ: Ռիթմիկ ուղղորդումը կազմակերպվում է նաև պատերի գալարվող պտույտներով, ինչպես նաև միջանկյալ արհեստական պատերի ընդհատումներով: Թանգարանային միջավայրում կոմպոզիցիոն կուլմինացիա է հանդիսանում վերասլաց զանգակատունը, որն ասես եզրափակում է ցուցադրությունը:

Ինտերիերի գունային և տեքստուրալ համադրումները: Ցուցասրահի ընդհանուր գունային գամման սպիտակի, մոխրագույնի, դարչնագույնի, երբեմն նաև խոր կապույտի համադրումն է, բայց դրան լրացնելու են գալիս կառույցի տրավերտինե, մարմարե և ապակու մեծ մակերեսները: Հետաքրքիր համադրում են ստեղծում փայլատ և փայլուն մակերեսները, որոնք լուսավորության համապատասխան շեշտադրմամբ է՛լ ավելի են սրում մթնոլորտը: Հատակը մուգ մոխրագույն գորգ է, որը պատերի հետ հատման մասում գոտևորվում է փայլուն մարմարե եզրերով: Կարևորվում են նաև ընդհանուր մուգ մոխրագույն հատակին տեղադրված սպիտակ ցուցափեղկերը, որոնք սրում են ուշադրությունը դեպի դրանց վրա տեղադրված ցուցանմուշները: Դրանք թեև գունային առումով ընհանրական են, բայց ցուցանմուշներից կախված ունեն տարաբնույթ մակերես և ծածկ: Նույն մտահղացումն է հետապնդում նաև դարչնագույն պատերի վրա ոլորվող սպիտակ գիպսոստվարաթղթե մակերեսների առկայությունը, որոնց վրա կախված են նկարներ, տպագրված նյութեր, ինտերակտիվ էկրաններ: Տարաբնույթ նյութերի համադրումը ստեղծում է տեքստուրալ յուրօրինակ կոմպոզիցիա, որով շեշտվում է թանգարանի գոտևորումը:

Լուսավորությունը: Թանգարանի որոշ հատվածներում առկա են լուսամուտների մեծ մակերեսներ, որոնք երբեմն նույնիսկ ամբողջական պատերի են վերածվում: Ցուցադրության հիմնական սրահներում լուսավորությունն արհեստական է: Այն իրականացվում է կարկասային ուղղորդված և ընդհանրական լուսավորմամբ: Դա հնարավորություն է տալիս ընդհանուր մեղմ մթնոլորտում շեշտել ցուցանմուշների կարևորությունը: Այստեղ նաև հետաքրքրական է արհեստական առաստաղի խորշերով արտահայտված խաչաթև լուսավորությունը, որը իր բովանդակային հաջորդականությունն է ստանում պատերին ագուցված կրկին խաչաթև դեկորատիվ

լուսատուներով: Դահլիճում անմիջապես բեմի ետնամասում ևս առկա է ապակյա պատ, որը տեսարան է բացում դեպի ներքին բակ, որտեղից էլ երևում է չինարի ծառը:

Միջազգային զուգահեռները: Կոմիտասի թանգարան-ինստիտուտի մասին խոսելիս վստահաբար կարելի է ասել, որ միջազգային զուգահեռներ անցկացնելիս բավականին դժվար է գտնել նմանօրինակ թանգարան: Գաղափարական առումով Կոմիտաս վարդապետը եզակի կերպար է համաշխարհային երաժշտության ասպարեզում, բացի այդ ցեղասպանության անդրադարձը նրա կյանքին, միաժամանակ հոգևորի լուսապսակը գլխին առաջնորդվող սրբազան վեհությունը կրող այս թանգարանը չի կարող գտնել իր միջազգային օրինակը: Սակայն կարելի է դիտարկել մի քանի մեծ ճանաչում ունեցող այնպիսի թանգարաններ, որոնք նվիրված են հայտնի երաժիշտներից մի քանիսին: Այսպիսի թանգարաններից են Ֆերենց Լիստի հուշ-թանգարանը Հունգարիայում, Ֆ. Շոպենի թանգարանը Վարշավայում, Մոցարտի ծննդավայրը Ավստրիայում և այլն: Հատկանշական է, որ վերոհիշյալ թանգարանների մեծ մասը հուշային են և ինտերիերի դիզայնը ամբողջությամբ պահպանում է նրանց ժամանակի շունչը: Ժամանակակից դիզայնեական լուծումներով և ինտերակտիվ սարքավորումներով է հագեցած Ֆ. Շոպենի թանգարանը Վարշավայում: Այստեղ այցելուներին են մատուցվում ոչ միայն երաժիշտի կյանքին և գործունեությանը վերաբերող նմուշներ, այլև տան ինտերիերի դրվագներ և ինտերակտիվ շփման հնարավորություն, որով այցելուն ինքն է կողմնորոշվում և ընտրում, թե կոնկրետ որ գործն է ուզում լսել կամ ուսումնասիրել: Ինտերիերի գունապնակում գերիշխում են ծանր տոները, որոնց հակադրվում են հուշային ինտերիերների ամբողջական լուսավոր կտորներ⁶⁹: Այսպիսով կարելի է ասել, որ Կոմիտասի թանգարանի ինտերիերի դիզայնը համաշխարհային նմանօրինակ թանգարանների շարքում չի զիջում իր նախագծային լուծումներով և կազմակերպված է իր բովանդակությանը համապատասխան (*տե՛ս նկար 51*):

Եզրակացություն: Դիտարկելով համաշխարհային փորձը և ինտերիերի դիզայնի առանձնահատկությունները կարելի է հանգել եզրակացության, որ Կոմիտասի թանգարան-ինստիտուտը եզակի է իր նշանակությամբ և գաղափարախոսությամբ:

⁶⁹ Fryderyk Chopin Museum official website, <http://chopin.museum/en/about/us>. (հասանելի է 14.01.2017):

Կառուցվելով 2015թ.-ին այն արդիական է և համապատասխանում է ժամանակակից թանգարանների բոլոր պահանջներին: Ֆունկցիոնալ նպատակահարմարության առումով թանգարանի ինտերիերի դիզայնը կազմակերպված է հատուկ հատակագծային լուծումներով նախագծված առանձին շինության ներքո, հենց որպես թանգարան, որը չափազանց կարևոր երևույթ է ինտերիերի դիզայնի կազմակերպման մեջ:

7. Կալենց թանգարան (տե՛ս նկար 52)

Կալենց թանգարանը պատկանում է գեղարվեստական թանգարանների պրոֆիլին: Այստեղ ներկայացված են Հարություն և Արմինե Կալենցների գեղարվեստական աշխատանքները, երբեմն կազմակերպվում են նաև ժամանակավոր ցուցահանդեսներ, առանձին տեղ է հատկացված նաև Կալենցների իրերի ներկայացմանը: Թեև Կալենց թանգարանի ստեղծման վերաբերյալ Խորհրդային Հայաստանի կառավարությունը որոշում էր ընդունել 1968թ.-ին, սակայն դա այդպես էլ չիրականացավ: Արմինե և Հարություն Կալենցների տուն-արվեստանոցի հիման վրա 2002թ.-ին սկսվեց թանգարանի կառուցումը, որն ավարտվեց 2010թ.-ին: Թանգարանն իր դռները բացեց այցելուների առաջ նույն թվականի ապրիլի 27-ին՝ Հարություն Կալենցի 100 և Արմինե Կալենցի 90-ամյակի կապակցությամբ:

Ֆունկցիոնալ գոյությունը: Ցուցադրությունը կազմակերպված է Թանգարանի 2 հարկերում, որոնցից առաջինը տրամադրված է Հարություն Կալենցի, իսկ երկրորդը՝ Արմինե Կալենցի աշխատանքների ցուցադրությանը: Թանգարանում պահվում են Հարություն և Արմինե Կալենցների 1000-ից ավելի աշխատանքներ, գրաֆիկական գործեր, ինչպես նաև արխիվային նյութեր, որոնցից ցուցասրահներում ներկայացված են շուրջ 300-ը:

Տեսողական հաղորդակցություն: Կալենց թանգարանում բավականին հետաքրքիր դրսևորում են գտնում տեսողական հաղորդակցության գրաֆիկական տարրերը, որոնք թեև չեն առանձնանում առանձին սլաքների շեշտադրումով, բայց ցուցադրության գաղափարախոսությունից կախված՝ երբեմն ամբողջ պատերի երկայնքով կարելի է տեսնել տեքստեր, որոնք ընդհանուր միջավայրում բավականին հետաքրքիր են դիտվում: Բացի այդ, նկարների տակագրերը պատերի գույներից

կախված ստանում են ընդհանրական հորինվածք՝ երբեմն հակադրվելով կոնտրաստային լուծումներով:

Ինտերիերի կոմպոզիցիոն սկզբունքները: Թանգարանի մուտքը բացվում է նկարչի անունը կրող փողոցից: Այստեղից փոքր միջանցքով աստիճանահարթակը ուղղորդում է այցելուներին դեպի առաջին ցուցասրահ, որտեղ գերիշխում է հատակագծային ասիմետրիկ հորինվածքը: Առաջին ընդարձակ ցուցասրահից փոքր աստիճանահարթակով կարելի է իջնել սրահի բովանդակային հաջորդականությունը կրող հաջորդ սրահ, ինչպես նաև մյուս վերընթաց աստիճանահարթակով դեպի վեր՝ Արմինե Կալենցի ցուցասրահ: Ընդհանուր առմամբ ցուցադրության մեջ առանձնակի չեն աղճատվում դոմինանտն ու կենտրոնը: Բոլոր աշխատանքներին էլ հավասար կարևորություն է տրվում, որի արդյունքում գործերի գունային հարաբերություններից ելնելով պատերի երանգները երբեմն տարբերվում են՝ ի շահ աշխատանքի ներկայացման:

Ինչպես արդեն նշվեց թանգարանն ունի ասիմետրիկ հատակագիծ, որն արտահայտվում է յուրաքանչյուր ցուցասրահում: Դա է պատճառը, որ ի հակադրություն նման հատակագծի, գեղարվեստական աշխատանքները ներկայացված են բավականին կանոնավոր շարվածքով, դասական եղանակով հաջորդելով միմյանց, պահպանելով ընդհանուր եզրերն ու տեսողական մակարդակի էրգոնոմիկ նկատառումները: Երկրորդ հարկում գեղարվեստական աշխատանքներին լրացնելու է գալիս սեղանի տեսքով նախագծված ցուցափեղկը, որի ապակու ներքո խառը դասավորվածությամբ ներկայացված են գրաֆիկական թերթեր և էսքիզներ, որոնք ասես աշխատանքային մակերես են հիշեցնում:

Ինտերիերի գունային և տեքստուրալ համադրումները: Թանգարանի ողջ մակերեսը ընդհանրացնում է փայտե մանրահատակը, որը տարածվում է ինչպես սրահներում, այնպես էլ աստիճանների երկայնքով: Պատերի հարդարանքում գերակշռում է սպիտակ ներկվածքը, որն առանձին դաշտերում փոխարինվում է աղյուսագույնով, սևով, կապույտով և այլն: Նկարների շրջանակները հիմնականում ընդհանրական են և ակտիվությամբ միմյանցից չեն առանձնանում:

Լուսավորությունը: Թեպետ ցուցասրահների որոշ հատվածներում առկա են լուսամուտներ, բայց դրանք բավականին փոքր են և ընդհանուր լուսավորության վրա այդքան էլ մեծ ազդեցություն չունեն, բացառությամբ վերջին հարկի, որտեղից ելք է բացվում դեպի ապակեպատ պատշգամբ: Լուսավորությունը սրահներում իրականացվում է կարկասային ուղղորդված լուսատուների միջոցով: Հատկանշական է երկրորդ հարկի լուսավորության մի մասը, որն իրականացված է սանհանգույցի համար նախատեսված խողովակների մեջ լուսատուների տեղադրմամբ:

Միջազգային հայտնի զուգահեռները: Հաշվի առնելով արվեստագետների ստեղծագործ կյանքի առանձնահատուկ դրսևորումները՝ բավականին դժվար է օբյեկտիվորեն ներկայացնել միջազգային այնպիսի օրինակներ, որոնք հենց զուգահեռ են Կալենց թանգարանին: Բավականին լավ է կազմակերպված Վան Գոգի թանգարանը Ամստերդամում, որը արդիականացվել է վերջին նորոգումների ընթացքում: Այն բացվել է 1973թ.-ին, վերջին վերանորոգումը տեղի է ունեցել 2013թ.-ին: Նկուղային հարկում զետեղված են թանգարանային սրճարանը, խանութը և ցուցասրահի նախերգանք հանդիսացող հատվածը: Առաջին հարկում ներկայացված են Վան Գոգի աշխատանքները, որոնք խմբավորված են ըստ ժամանակային հաջորդականության: Երկրորդ հարկում ներկայացված են վերականգնված աշխատանքները, ինչպես նաև փոքր հատված տրամադրված է ժամանակավոր ցուցադրությունների համար: Վերջին հարկում զետեղված են Վան Գոգի ժամանակակիցների այն աշխատանքները, որոնք աղերսներ ունեն նկարչի գեղարվեստական գործունեության հետ (*տե՛ս նկար 53, 54*):

Եզրակացություն: Վերը նշվածից երևում է, որ Կալենց թանգարանը կառուցված լինելով Սարո Գալենցի ջանքերով՝ ստեղծված է ամբողջապես ծառայելու արվեստագիտական մթնոլորտի ստեղծման համար: Այստեղ կազմակերպվում են նաև հանդիպումներ, քննարկումներ, որոնք ավելի են ակտիվացնում թանգարանային կյանքը: Այսպիսով ամփոփելով կարելի է ասել, որ Կալենց թանգարանը բավականին գողտրիկ միջավայր է իրենից ներկայացնում և դրանում առանձին գրադարանի, դահլիճի, սրճարանի բացակայությունը գուցե հենց այդ մտերմիկ նկարչական միջավայրի կազմակերպմանը խոչընդոտ հանդիսանար:

Ամփոփելով կարելի է ասել, որ երրորդ գլխում ներկայացված ցուցակագրությունը վկայում է, որ հետխորհրդային շրջանում շատ ավելի քիչ թանգարաններ են ստեղծվել, քան խորհրդային տարիներին: Դրանցից քչերի հորինվածքն է արմատապես համապատասխանում թանգարան հասկացությանը թե՛ ճարտարապետական, թե՛ ներքին միջավայրային նկատառումներով: Այս թանգարանների մեծ մասը, ինչպես խորհրդային շրջանում, տեղ է գտել արդեն գոյություն ունեցող շինություններում, որոնց կառուցվածքը և հատակագծերը չեն համապատասխանում թանգարանային ինտերիերի դիզայնի վերոհիշյալ քննարկված պահանջներին: Վերլուծությունից պարզ է դառնում, որ հետխորհրդային շրջանի թանգարաններից հատկապես աչքի են ընկնում Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը, Գաֆեսճեան արվեստի կենտրոնը, Կոմիտասի թանգարան-ինստիտուտը: Միջազգային կարևորագույն նույնապրոֆիլ թանգարանների ինտերիերի դիզայնի վերլուծության զուգահեռները թույլ են տալիս հանգել եզրակացության, որ դրանք ունեն շատ լավ հատակագծային հորինվածք, ինտերիերի դիզայնի էրգոնոմիկ կահավորում, գրագետ տեսողական հաղորդակցություն, ինտերակտիվ սարքավորումներ և նպատակահարմար լուսավորություն: Վերջին տարիներին Երևանում կառուցված թանգարանների մեծամասնությունը կազմակերպված է դիզայներների և ճարտարապետների համատեղ ջանքերով: Դա է պատճառը, որ տարեց տարի ինտերիերի դիզայնը թանգարաններում նորովի զարգացում է ապրում, որն անմիջականորեն ազդում է այցելությունների հաճախականության վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն ատենախոսությունը վկայում է, որ թանգարանները մեծ նշանակություն ունեն յուրաքանչյուր երկրի մշակութային կյանքում: Ուսումնասիրությունից երևում է, որ թանգարանների ինտերիերի դիզայնը բավականին բարդ և համակարգված գործընթաց է, որը մեծ կարևորություն ունի ցուցանմուշների գրագետ ներկայացման, պահպանման, ինչպես նաև մշակութային կյանքի ակտիվացման ու կրթական ոլորտներում: Դա է պատճառը, որ ներկայումս ամբողջ աշխարհում մեծ կարևորություն է տրվում թանգարանային ինտերիերի դիզայնին:

Թանգարանների առաջին օրինակներն ի հայտ են եկել մարդկության զարգացման այն փուլում, երբ առարկաների բնատիպերը սկսվել են պահպանվել ոչ թե որպես կիրառական-տնտեսական արժեքներ, այլ որպես վավերական, գեղագիտական վկայություններ: Հայաստանի տարածքում թանգարանային ավանդույթներն ունեն բավականին խոր արմատներ, հասնելով մ. թ. ա. IX–VI-րդ դարեր, ապա Ուրարտուի դարաշրջան: Հետագայում այդպիսի ավանդատներ դարձան հին հայկական հեթանոսական տաճարները և արքայական պալատները: Սակայն Հայկական թանգարանների կազմակերպման գործը լայն տարածում ստացավ XIX-րդ դարում:

Առաջին գլխում ներկայացված Երևանի թանգարանների պրոֆիլային դասակարգումից երևում է, որ այստեղ գոյություն ունեն տասներկու գեղարվեստական, տաս պատմական, երկու բնագիտական, երեք տեխնիկական, տասներեք հուշային, մեկ ճարտարապետական և մեկ կոմպլեքսային թանգարան: Դրանցից 25-ը հիմնադրվել են խորհրդային ժամանակաշրջանում, իսկ մնացյալ 17-ը՝ հետխորհրդային ժամանակաշրջանում:

Պրոֆիլային դասակարգումից պարզ է դառնում, որ թանգարանների ինտերիերի նախագծումը անմիջականորեն բխում է դրա առանձնահատկություններից: Յուրաքանչյուր թանգարան, պրոֆիլային դասակարգումից ելնելով պահանջում է ինտերիերի դիզայնի կազմակերպման յուրահատուկ մոտեցում, որն արտահայտվում է ինչպես ընդհանուր հատակագծային հորինվածքում, այնպես էլ հարդարանքի համար կիրառվող նյութերում, ջերմալուսային սարքավորումներում, էրգոնոմիկ առանձնահատկություններում, կահավորման մեջ և այլուր: Ուսումնասիրությունը

վկայում է, որ թանգարանների ինտերիերի դիզայնը հիմնականում ընթանում է իրար հաջորդող փուլերով, որոնք ընդգրկում են թանգարանի գոտևորումից մինչև կահավորում ընկած գործառույթները:


Հետազոտության արդյունքում պարզ է դառնում նաև, որ յուրաքանչյուր թանգարան, կախված դրա գաղափարախոսությունից և ռազմավարությունից, պահանջում է հատակագծային ֆունկցիոնալ գոտևորում, ցուցադրության հորինվածքի մշակում, ինտերիերի գունային լուծումների այնպիսի համադրում, որի շնորհիվ ցուցանմուշների էությունը կարող է լիովին բացահայտվել: Կարևորվում է նաև լուսավորության բնական, ընդհանուր և ուղղորդված համակարգերի մշակումը, կահավորումը և ժամանակակից ինտերակտիվ սարքավորումների առկայությունը, առանց որոնց դժվար է պատկերացնել արդի թանգարանները, հաշվի առնելով նաև այն կարևոր հանգամանքը, որ թանգարաններում խրախուսվում է մարդկանց անմիջական ներգրավվածությունը, շփումը և ուշագրավ ներկայությունը:

Բացի այդ, վերոհիշյալ ուսումնասիրությունը վկայում է, որ Երևանի թանգարաններում ինտերիերի դիզայնի լուծումները դրսևորվում են հիմնականում մոդեռնիստական (ԳԱԹ, Կոմիտասի թանգարան-ինստիտուտ), ռացիոնալիստական (Հայաստանի պատմության թանգարան, Մայր Հայաստան զինվորական թանգարան), ազգային (Փայտարվեստի թանգարան, Ժողարվեստի թանգարան), սյուրռեալիստական (Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ) և էկլեկտիկ (Մատենադարան) ոճերի համատեքստում: Հետազոտությունից երևում է, որ էկլեկտիկ թանգարանները բավականին շատ են Երևանում: Դրանք չեն կրում իրենց հստակ կերպարն ու միասնական հորինվածքի բնորոշումը, որը պետք է ներկայացնի թանգարանի ողջ գաղափարախոսությունը:

Վերլուծության մեջ քննարկվող ինտերիերի դիզայնի ժամանակակից միտումները և առանձնահատկությունները կարող են նպաստել Երևանի թանգարանների հետագա արդիականացմանը և զարգացմանը: Հետազոտության արդյունքներից երևում է, որ թեև վերջին տարիներին Երևանում կառուցվող և վերանորոգվող թանգարաններում բավականին մեծ ուշադրություն է դարձվում ինտերիերի դիզայնին, բայց այնուամենայնիվ, միջազգային օրինակների

համատեքստում դրանցից շատերն ունեն արդիականացման կարիք, որի համար կարևոր զուգահեռներ կարող են ծառայել Լուվրը, Էրմիտաժը, Մետրոպոլիտենը և մի շարք այլ թանգարաններ: Երևանում գործող թանգարանների շարքում կան նաև այնպիսիները, որոնք կառուցված լինելով խորհրդային ժամանակաշրջանում, հիմնանորոգումների են ենթարկվել վերջին տարիներին, որի արդյունքում դիզայներական լուծումների առումով միջազգային թանգարանների համատեքստում սկսել են զբաղեցնել իրենց կարևոր դիրքը: Հետխորհրդային շրջանի թանգարանները այդքան էլ շատ չեն Երևանում, բայց այնուամենայնիվ դրանց շարքում կան այնպիսիները, որոնց ինտերիերի դիզայներական լուծումները շարունակում են խնդիրներ ստեղծել ցուցանմուշների ներկայացման և պահպանման տեսանկյունից:

Ամփոփելով կարելի է ասել, որ Երևանում այժմ գործում են մի շարք թանգարաններ, որոնք իրենց դիզայներական լուծումներով բավականին արդիական են, հյուրընկալ և հարմարավետ, սակայն դրանց կողքին կարելի է տեսնել նաև այնպիսիները, որոնք պահպանում են չափազանց արժեքավոր նմուշներ, բայց ներկայացման առումով չեն համապատասխանում ժամանակաշրջանի տեխնոլոգիական հնարավորություններին, ինչպես նաև մեծ վտանգ են ներկայացնում ցուցանմուշների անվտանգ պահպանման տեսանկյունից: Պետք է նշել նաև, որ Երևանի թանգարաններից շատերը, ինչպիսիք են ԳԱԹ-ը, Մատենադարանը, Կոմիտասի թանգարան-ինստիտուտը, Ցեղասպանության թանգարան-ինստիտուտը հազեցվել են բավականին հետաքրքիր ինտերակտիվ սարքավորումներով, որոնք ինտերիերի դիզայնի անմիջական մասն են կազմում: Բացի այդ, Երևանի թանգարանների շարքում հատկապես մեծ խնդիր է ներկայացնում այն հանգամանքը, որ դրանց մեծ մասը տեղ է գտել այնպիսի շինություններում, որոնք ոչ մի կապ չունեն թանգարանի հասկացության հետ, ուստի դրանց հատակագծային լուծումները ևս հարմարեցվել են արդեն գոյություն ունեցող միջավայրին: Հաշվի առնելով, որ վերջին տարիներին զբոսաշրջությունը լայն տարածում է գտնում Հայաստանի Հանրապետությունում, թանգարանային միջավայրի արդիականացումը ևս կարող է նպաստել դրա զարգացմանը:



1. Գիբս Բ., Սանի Մ., Թոմսոն Զ., «Շարունակական կրթությունը թանգարաններում», Երևան, Եվրոպական ձեռնարկ, 2005, 106 էջ:
2. Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ուղեցույց, Երևան, 2009, 95 էջ:
3. «Ժառանգություն» հասարակական կազմակերպություն, «ԻԿՕՄ-ի մասնագիտական վարքագծի կանոնագիրք», Երևան, 2003, 35 էջ:
4. Հարությունյան Մ., Բեմական նորագույն տեխնոլոգիաների հնարավոր կիրառումը Հայաստանի դիտադահլիճային շինությունների վերակառուցումներում, ՀՀԳԱԱ Արվեստի Ինստիտուտ, Երևան, Անտարես, 2016, 167 էջ
5. Հմայակյան Ս., Քաղաքային գանձատուն- թանգարանը Վանի թագավորությունում, Անտառ ծննդոց հողվածների ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատ., 2015, 656 էջ:
6. Ղաֆադարյան Կ., Միջնադարյան Հայաստանի թանգարանները, գանձատուները և ավանդատուները, Փարիզ, «Անդաստան», 1962, №13, 144 էջ:
7. Պիկիչյան Հ., Հարոյան Մ., Գրիգորյան Ա., Թանգարանային մենեջմենթ և մարկեթինգ, Երևան, «ԷդիթՊրինտ», 2004, 196 էջ:
8. Տիգրանյան Է., Հասարակական շենքերի ճարտարապետական առանձնահատկությունների մասին, Երևան, Լույս հրատ., 1989, 37 էջ:
9. Аксенова М., Музеи мира, Москва, изд. Мир энциклопедий, 2011, 184 стр. .
10. Блохина И., Архитектура: Всемирная история архитектуры и стилей, Москва, изд. ЛитРес, 2014, 402 стр. .
11. Володина Е., Материаловедение для дизайнеров интерьеров, Том 2, Москва, изд. Издательские решения, 2015, 80 стр. .
12. Иконников А., Степанов Г., Основы архитектурной композиции, Москва, изд. Искусство, 1971, 225 стр. .

13. Кухта М., Дизайн и технологии, Томск, изд. STT, 2016, 170 стр. .
14. Ламцов И., Туркус А., Элементы архитектурной композиции, Москва, изд. Стройиздат, 1938, 168 стр. .
15. Линдси Д., Все о цвете, Москва, изд. Книжный клуб, 2011, 432 стр. .
16. Майстровская М., Музей как объект культуры. Искусство экспозиционного ансамбля, Москва, изд. Прогресс-Традиция, 2015, 672 стр. .
17. Пиотровский Б., Глинка В., Эрмитаж: история строительства и архитектура зданий, Москва, изд. Стройиздат, 1989, 560 стр. .
18. Ревякин В., Художественные музеи, Справ. Пособие, Москва, изд. Стройиздат, 1991, 242 стр. .
19. Уэйншенк С., 100 новых главных принципов дизайна, Санкт-Петербург, изд. Питер, 2016, 288 стр. .
20. Ambrose T., ICOM, Museum Basics, New York, Routledge, 476 pages.
21. Bastogne War Museum - Presentation, Bastogne, 2014, 40 pages.
22. Bogle E., Museum Exhibition planning and Design, Lanham, AltaMira Press, 2013, 418 pages.
23. Chang T., Effects of Design Features on Visitors' Behavior in a Museum, Lawrence, University of Kansas, 2008, 127 pages.
24. Crimm W., Morris M., Wharton C., Planning Successful Museum Building Projects, Lanham, Rowman Altamira, 2009, 288 pages.
25. Darragh J., Snyder J., Museum Design: Planning and Building for Art, New York, Oxford University Press, 1993, 319 pages.
26. Farrelly L., Weddell J Design Objects and the Museum, London, Bloomsbury Academic, 216 pages.
27. Gautrand M., Museum Architecture and Interior Design, Hong Kong, Design Media Publishing Limited, 2014, 256 pages.
28. Hughes P., Exhibition Design, London, Laurence King Publishing, 2010, 177 pages.
29. Jacob G., Museum Design the Future, North Charleston, Demand Publishing, 2009, 333 pages.

30. Jacobson R. Information Design, Massachusetts, First Mit Press, 2000, 167 pages.
31. Lord G., The Manual of Museum Planning, 2nd edition, Lanham, AltaMira Press, 689 pages.
32. Macleod S., Reshaping Museum Space: Architecture, Design, Exhibitions, New York, Routledge, 2005, 223 pages.
33. McCabe G., Kennedy J., Planning the Modern Public Library Building, London, Libraries unlimited, 2003, 261 pages.
34. McClellan A., Inventing the Louvre: Art, Politics, and the Origins of the Modern Museum in 18th Century Paris, New York, Cambridge University Press, 1994, 281 pages.
35. Monti F., Keene S., Museums and Silent Objects: Designing Effective Exhibitions, Burlington, Ashgate Publishing limited, 2013, 333 pages.
36. Muchitsch W., Does War Belong in Museums? The Representation of Violence in Exhibitions, Bielefeld, 2013 transcript Verlag, 223 pages.
37. Ney R., Torossian R., Karapetyan B., Yerevan, Tour Armenia Travel Guide, 2007, 150 pages.
38. Patterson J., Viscomm J., A Guide to Visual, New York, Cambridge University Press, 2012, 336 pages.
39. Preziosi D., The Art of Art History: A Critical Anthology, Oxford Histoy of Art, New York, Oxford University Press, 2009, 590 pages.
40. Roppola T., Designing for the Museum Visitor Experience, New York, Routledge, 2012, 321 pages.
41. Self R., The Architecture of Art Museums: A Decade of Design: 2000 – 2010, New York, Routledge, 2014, 297 pages.
42. Serrell B., Exhibit Labels: An Interpretive Approach, Lanham, AltaMira Press, 1996, 265 pages.
43. ԳԱԹ պաշտոնական կայք, Միջին արևելքի արվեստ. Մարկոս Գրիգորյանի հավաքածու,

- http://www.gatmuseum.am/index.php?option=com_content&view=article&id=83&Itemid=99&lang=hy. (հասանելի է 20.04.2016):
44. Գաֆեսճեան արվեստի կենտրոնի պաշտոնական կայք, <http://cmf.am/>.
(հասանելի է 10.11.2016):
45. Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայք /Թանգարաններ,
<https://www.yerevan.am/am/allmuseums/museums-of-yerevan/>. (հասանելի է
04.29.2014):
46. Կոմիտասի թանգարան-ինստիտուտի պաշտոնական կայք,
<http://komitasmuseum.am/>. (հասանելի է 14.01.2017):
47. Հայաստանի բնության պետական թանգարանի պաշտոնական կայք,
<http://smn.am/>. (հասանելի է 12.01.2016):
48. Հայաստանի ճարտարապետության ազգային
թանգարանի ստեղծման պատմությունը,
http://www.archmuseum.am/?page_id=217. (հասանելի է 27.10.2015):
49. Հայաստանի պատմության թանգարանի պաշտոնական կայք,
<https://historymuseum.am/>. (հասանելի է 20.12.2016):
50. Հովհաննես Թումանյանի թանգարանի պատմությունը,
<http://www.toumanian.am/tangaran/tang.php>. (հասանելի է 24.05.2015):
51. Հայոց ցեղասպանության թանգարանի մասին, http://www.genocide-museum.am/arm/museum_info.php. (հասանելի է 04.10.2015):
52. Հայոց ցեղասպանության հուշահամալիր,
<http://www.encyclopedia.am/pages.php?bld=2&hld=1371>. (հասանելի է 07.10.2015):
53. Հայաստանի փայտարվեստի թանգարանի պաշտոնական կայք,
<http://artwood.am/?lang=hy>. (հասանելի է 13.11.2016):
54. ՀՀ ՊՆ Մայր Հայաստանի զինվորական թանգանի ցուցադրություններ -
<http://www.mayrhayastan.am/exhibitions.html>. (հասանելի է 18.06.2015):
55. Մատենադարան. պատմական ակնարկ,
<http://www.matenadaran.am/?id=61&lng=3>. (հասանելի է 18.10.2016):
56. Поправко Е., История музеев, <https://abc.vvsu.ru/books/muzeebed/page0004.asp>.
(հասանելի է 13.04.2015):

57. CCA official webside, <http://www.cca.qc.ca/en>. (հասանելի է 30.10.2015):
58. Deutches Architecture museum official webside, <http://www.dam-online.de/portal/en/Events/AFTERWORKTALK/0/0/81238/mod1177-details1/1847.aspx>. (հասանելի է 28.10.2015):
59. Fryderyk Chopin Museum official website, <http://chopin.museum/en/about/us>. (հասանելի է 14.01.2017):
60. Imperial War Museum official webside, <http://www.iwm.org.uk/visits/iwm-london>. (հասանելի է 30.04.2015):
61. Louvre Pyramid, <http://architectuul.com/architecture/louvre-pyramid> . (հասանելի է 13.11.2016):
62. Metropolitan Museum of Art, <http://nyc-architecture.com/UES/UES074.htm>. (հասանելի է 20.04.2016):
63. Solomon Guggenheim Museum, <http://architectuul.com/architecture/solomon-r-guggenheim-museum> . (հասանելի է 13.11.2016):
64. Solomon Guggenheim Museum Bilbao, <http://architectuul.com/architecture/guggenheim-museum-bilbao>. (հասանելի է 09.09.2016):
65. The Centre for Art in Wood, <https://centerforartinwood.org/>. (հասանելի է 14.11.2016):
66. United States Holocaust Memorial Museum (USHMM) official website, <https://www.ushmm.org/information/exhibitions/museum-exhibitions/permanent>. (հասանելի է 08.10.2015):

ՀԱՎԵԼՎԱԾ

Վերատպությունների ցանկ

1. Հայաստանի ազգային պատկերասրահ. լուսանկարներ առաջին և ժամանակակից ցուցադրություններից, հատակագծերը
2. Հայաստանի ազգային պատկերասրահ: Հինգերորդ. հարկ, ցուցադրություններ, հատակագծերը
3. Լուվր. ցուցասրահները, նախասրահը
4. Լուվր. ֆունկցիոնալ գոտևորումը
5. Էրմիտաժ. ցուցադրությունները
6. Էրմիտաժ. Նիկոլայ 2-րդի գրադարանը, Մարիյա Ալեքսանդրովնայի հյուրասենյակը
7. Սալամոն Գուգենհայմի թանգարան. Նյու Յորք. ցուցասրահները
8. Սալամոն Գուգենհայմի թանգարան. Բիլթառ. ցուցասրահները
9. Մատենադարան թանգարան-ինստիտուտ: Առաջին հարկ. հատակագծերը
10. Մատենադարան թանգարան-ինստիտուտ: Նկուղային հարկ. հատակագծերը
11. Մատենադարան թանգարան-ինստիտուտ: Երկրորդ հարկ. հատակագծերը
12. Մատենադարան թանգարան-ինստիտուտի կտրվածքները
13. Մատենադարան թանգարան-ինստիտուտի կահավորումը
14. Մատենադարան թանգարան-ինստիտուտի լուսավորությունը
15. Չեսթեր Բյուրի թանգարանը Դուբլինում, Կազանաթենս գրադարանը Հռոմում
16. Հայաստանի Փայտարվեստի թանգարան. ցուցասրահները
17. Ֆիլադելֆիայի փայտարվեստի կենտրոն. ցուցասրահները
18. Հայաստանի Պատմության թանգարան. գոտևորումը
19. Հայաստանի Պատմության թանգարան: Առաջին հարկի հատակագծերը
20. Հայաստանի Պատմության թանգարան: Առաջին հարկի հատակագծերը և ցուցասրահները
21. Հայաստանի Պատմության թանգարան: Երկրորդ հարկի հատակագծերը և ցուցասրահները
22. Ակրոպոլիս թանգարան. Հունաստան. հատակագծերը, ցուցադրությունները


23. Հովհաննես Թումանյանի թանգարան: Առաջին հարկի հատակագծերը և ցուցասրահները
24. Հովհաննես Թումանյանի թանգարան: Երկրորդ հարկի հատակագծերը և ցուցասրահները
25. Մարկ Տվենի տուն-թանգարան. Հարթֆորդ. ցուցասրահները
26. ՀՀ ՊՆ Մայր Հայաստան զինվորական թանգարան. գոտևորումը
27. ՀՀ ՊՆ Մայր Հայաստան զինվորական թանգարան: Առաջին հարկի ցուցադրությունը
28. ՀՀ ՊՆ Մայր Հայաստան զինվորական թանգարան. Հուշ դահլիճ
29. ՀՀ ՊՆ Մայր Հայաստան զինվորական թանգարան. կահավորումը
30. Բաստոնի թանգարան. Բելգիա. գոտևորումը, ցուցադրությունները
31. Կայսերական ռազմական թանգարան. Լոնդոն. գոտևորումը, ցուցասրահները
32. Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան.
լուսանկարներ առաջին ցուցադրություններից
33. Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան. գոտևորումը, ցուցասրահները
34. Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան.
ցուցասրահները
35. Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան. Միջին արևելքի ցուցադրություն Մարկոս Գրիգորյանի հավաքածուի հիման վրա
36. Մետրոպոլիտան. Նյու Յորք. Ցուցադրությունները
37. Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ. հատակագիծը
38. Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ. նախասրահը
39. Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ. ցուցասրահը
40. Գերմանական ճարտարապետության թանգարան. ցուցասրահները
41. Գաֆեսճեան արվեստի կենտրոն. ցուցասրահները

- 42. Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ. ցուցադրությունները
- 43. Հոլոքոստի թանգարան. Վաշինգտոն. ցուցասրահները
- 44. Հայաստանի բնության պետական թանգարան. ցուցադրությունները
- 45. Բնության պատմության ազգային թանգարան. Վաշինգտոն. ցուցասրահները
- 46. Կոմիտասի թանգարան-ինստիտուտ: Ստորին հարկի հատակագիծը
- 47. Կոմիտասի թանգարան-ինստիտուտ: Առաջին հարկի հատակագիծը
- 48. Կոմիտասի թանգարան-ինստիտուտ. ցուցասրահները
- 49. Կոմիտասի թանգարան-ինստիտուտ. բաժինները
- 50. Կոմիտասի թանգարան-ինստիտուտ. լուսավորությունը, կահավորումը
- 51. Ֆ. Շոպենի թանգարան. Վարշավա. ցուցասրահները
- 52. Կալենց թանգարան. ցուցասրահները
- 53. Սալվադոր Դալիի թանգարան. Բարսելոնա. ցուցադրությունները
- 54. Սալվադոր Դալիի թանգարան. Բարսելոնա. գոտևորումը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ



ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ ՀԱՊ-Ի ԱՌԱՋԻՆ
ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ



Նկար 1. Հայաստանի ազգային պատկերասրահ. լուսանկարներ առաջին և ժամանակակից ցուցադրություններից, հատակագծերը. ըստ՝ www.gallery.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ



Նկար 2. Հայաստանի ազգային պատկերասրահ: Հինգերորդ հարկ.
Ցուցադրությունները, հատակագծերը. ըստ՝ www.gallery.am



Նկար 3. Լուվր. ցուցասրահները, նախասրահը. ըստ՝ www.louvre.fr

ԼՈՒՎՐ- ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԳՈՏԵՎՈՐՈՒՄ



Նկար 4. Լուվր. ֆունկցիոնալ գոտաբաշխումը. ըստ՝ www.blog.cityshoppingpoint.com

ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Նկար 5. Էրմիտաժ. Ցուցադրությունները. ըստ՝ www.hermitagemuseum.org

ԷՐՄԻՏԱԺ




Նկար 6. Էրմիտաժ. Նիկոլայ 2-րդի գրադարանը, Մարիյա Ալեքսանդրովնայի հյուրասենյակը. ըստ՝ www.hermitagemuseum.org



Նկար 7. Սալամոն Գուգենհայմի թանգարան. Նյու Յորք. Ֆուցամարահները. ըստ՝ www.guggenheim.org

ՍԱԼԱՄՈՆ ԳՈՒԳԵՆՀԱՅՄԻ ԹԱՆԳԱՐԱՆ. ԲԻԼԲԱՌ



ՑՈՒՑԱՍՐԱՅՆԵՐ




Նկար 8. Սալամոն Գուգենհայմի թանգարան. Բիլբաո. Ցուցասրահները. ըստ՝ <http://www.archdaily.com>

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ




Նկար 9. Մատենադարան թանգարան-ինստիտուտ: Առաջին հարկ. հատակագծերը

ՆԿՈՒՂԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ




Նկար 10. Մատենադարան թանգարան-ինստիտուտ: Նկուղային հարկ.
հատակագծերը

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ: ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿ




Նկար 11. Մատենադարան թանգարան-ինստիտուտ: Երկրորդ հարկ. Հատակագծերը

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՏՐՎԱԾՔՆԵՐԸ



Նկար 12. Մատենադարան թանգարան-ինստիտուտի կտրվածքները

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՅԱՎՈՐՈՒՄԸ



Նկար 13. Մատենադարան թանգարան-ինստիտուտի կահավորումը



Նկար 14. Մատենադարան թանգարան-ինստիտուտի լուսավորությունը



Չեսթեր Բյուրի թանգարան. Դուբլին

Կազանաթենս գրադարան. Հռոմ

Նկար 15. Չեսթեր Բյուրի թանգարանը Դուբլինում, Կազանաթենս գրադարանը Հռոմում. ըստ՝ www.cbl.ie, www.athenslibrary.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՅՏԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ




Նկար 16. Հայստանի Փայտարվեստի թանգարան. ցուցասրահները

Ցուցադրահները



Նկար 17. Ֆիլադելֆիայի փայտարվեստի կենտրոն. Ցուցադրահները. ըստ՝www.centerforartinwood.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ



1. Մուտք
2. Ֆոյե
- 3 Ցուցադրություն. Քարե փորագրություն. Խաչքարեր
4. Ցուցադրություն. Քարե փորագրություն. Խաչքարեր
5. Ցուցադրություն. Կրոնական գտածոներ

Ցուցադրություն. Քարե փորագրություն. Խաչքարեր



Ցուցադրություն. Քարե փորագրություն. Խաչքարեր





Ֆոյե



Նկար 18. Հայաստանի Պատմության թանգարան. Գոտևորումը. ըստ՝
www.historymuseum.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ




Նկար 19. Հայաստանի Պատմության թանգարան: Առաջին հարկի հատակագծերը.
ըստ՝ www.historymuseum.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ



ՀԱՐԿ 1




Նկար 20. Հայաստանի Պատմության թանգարան:Առաջին հարկի հատակագծերը և ցուցասրահները . ըստ՝ www.historymuseum.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ



2-րդ Հարկ



Նկար 21. Հայաստանի Պատմության: Երկրորդ հարկի հատակագծերը և ցուցասրահները. ըստ՝ www.historymuseum.am



Նկար 22. Ակրոպոլիս թանգարան. Հունաստան. հատակագծերը, ցուցադրությունները
ըստ՝ www.theacropolismuseum.gr



Նկար 23. Հովհաննես Թումանյանի թանգարան: Առաջին հարկի հատակագծերը և ցուցասրահները

ՀՈՎԻԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆ



Նկար 24. Հովհաննես Թումանյանի թանգարան: Երկրորդ հարկի հատակագծերը և ցուցասրահները

ՄԱՐԿ ՏՎԵՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԸ



Ցուցասրահները




Նկար 25. Մարկ Տվենի տուն-թանգարան. ԱՄՆ. Ցուցասրահները. ըստ՝ www.marktwainhouse.org

ՀՀ ՊՆ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ




- 1.ԱՐՁԱՆ
- 2.ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍ
- 3.ԴԱՅԼԻԾ
- 4.ԹԱՆԳԱՐԱՆ
- 5.ՀՈՒՇ-ԴԱՅԼԻԾ



Նկար 26. ՀՀ ՊՆ Մայր Հայաստան զինվորական թանգարան. գոտևորումը



Նկար 27. ՀՀ ՊՆ Մայր Հայաստան զինվորական թանգարան: Առաջին հարկի ցուցադրությունը



ՀՀ ՊՆ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ



ՀՈՒՇ ԴԱՅԼԻՃ



Նկար 28. ՀՀ ՊՆ Մայր Հայաստան զինվորական թանգարան. Հուշ դահլիճ

ՀՀ ՊՆ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ




ԿԱՅԿԱՎՈՐՈՒՄԸ

Նկար 29. ՀՀ ՊՆ Մայր Հայաստան զինվորական թանգարան. կահավորումը




Նկար 30. Բաստոնի թանգարան. Բելգիա. գոտևորումը, ցուցադրությունները. ըստ՝ www.bastognewarmuseum.be



Նկար 31. Կայսերական ռազմական թանգարան. Լոնդոն. գոտևորումը, ցուցասրահները. ըստ՝ www.iwm.org



Ե. ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ



ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ ԳԱԹ-Ի ԱՌԱՋԻՆ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ



Նկար 32. Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան.
լուսանկարներ առաջին ցուցադրություններից




Նկար 33. Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան.
գոտևորումը, ցուցասրահները




Նկար 34. Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան.
ցուցասրահները


ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼԵԻ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ




Նկար 35. Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան. Միջին արևելքի ցուցադրություն Մարկոս Գրիգորյանի հավաքածուի հիման վրա



Նկար 36. Մետրոպոլիտան. Նյու Յորք. Ֆուցադրությունները. ըստ՝
www.metmuseum.org



Նկար 37. Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ. հատակագիծը



Նկար 38. Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ. նախասրահը



ՅՈՒՅԱՍՐԱՆԻ ՓՈՎԱԾՔ

Նկար 39. Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ. ցուցասրահը



ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆ




Նկար 40. Գերմանական ճարտարապետության թանգարան. ցուցասրահները. ըստ՝
www.dam-online.de

ԳԱՖԵՍԾԵԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԿԵՆՏՐՈՆ

«ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱՎԻԹ» ՍՐԱՅ



ՍՎԱՌՈՎԱԿԻ ԲՅՈՒՐԵՂՅԱՊԱՆԱՏ



«ԼԻԲԵՆԱԿԻ ԲՈՒԽՏՈՎԱԿԱՆ
ԼՈՒՅՍ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՎ» ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ



«ԳՐԻԳՈՐ ԽԱՆՁՅԱՆ ՊԱՏԿԵՐԻՑ ԱՆՈՒՆ»
ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ



Նկար 41. Գաֆեսճեան արվեստի կենտրոն. ցուցասրահները. ըստ՝ www.cmf.am

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ



Նկար 42. Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ. ցուցադրությունները.
ըստ՝ www.genocide-museum.am



ՀՈԼՈԾՈՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ.
ՎԱՇԻՆԳՏՈՆ

Նկար 43. Հոլոքոստի թանգարան. Վաշինգտոն. ցուցասրահները, ըստ՝
www.ushmm.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ



Նկար 44. Հայաստանի բնության պետական թանգարան. ցուցադրությունները



ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆ.
ՎԱՇԻՆԳՏՈՆ



Նկար 45. Բնության պատմության ազգային թանգարան. Վաշինգտոն.
ցուցասրահները. ըստ՝ www.naturalhistory.si

ԿՈՄԻՏԱՍԻ ԹԱՆԳԱՐԱՆ - ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՑՈՒՑԱՍՐԱՅՆԵՐԸ

ԿՈՄԻՏԱՍԻ ԹԱՆԳԱՐԱՆ (ՀԻՆԱՐԻ ԾԱՌ)

ԿՈՄԻՏԱՍԻ ԿՈՄԻՏԱՍԸ

ՄԻՋԱՆՅՔ

ԿՈՄԻՏԱՍԸ ԵՎ ՀՈԳԵԿՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ԿՈՄԻՏԱՍԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ

ԵԼՔ


ՉԱԳԱԿԱՏՈՒՆ

ՓԱՏԱՆԱԿԱԿՈՐ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿՈՄԻՏԱՍԻ ՀԵՏՈ

ՍՏՈՐԻՆ ՀԱՐԿ


Նկար 46. Կոմիտասի թանգարան-ինտիտուտ: Ստորին հարկի հատակագիծը



Նկար 47. Կոմիտասի թանգարան-ինստիտուտ: Առաջին հարկի հատակագիծը



Նկար 48. Կոմիտասի թանգարան-ինտիտուտ. ցուցասրահները



Նկար 49. Կոմիտասի թանգարան-ինստիտուտ. բաժինները



Նկար 50. Կոմիտասի թանգարան-ինստիտուտ. լուսավորությունը, կահավորումը



Ֆ. ՇՈՊԵՆԻ ԹԱՆԳԱՐԱՆ.
ՎԱՐՇԱՎԱ

Նկար 51. Ֆ. Շոպենի թանգարան. Վարշավա. Ֆուցասրահները.
ըստ՝www.chopinmuseum.com

ԿԱԼԵՆՑ ԹԱՆԳԱՐԱՆ




ՑՈՒՑԱՍՐԱՅՆԵՐԸ




Նկար 52. Կալենց թանգարան. ցուցասրահները. ըստ՝ www.galentz.am

ՍԱԼՎԱԴՈՐ ԴԱԼԻԻ ԹԱՆԳԱՐԱՆ



Նկար 53. Սալվադոր Դալիի թանգարան. Բարսելոնա. Ցուցադրությունները. ըստ՝ www.salvador-dali.org

ՍԱԼՎԱԴՈՐ ԴԱԼԻԻ ԹԱՆԳԱՐԱՆ. ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԳՈՏԵՎՈՐՈՒՄ



Նկար 54. Սալվադոր Դալիի թանգարան. Բարսելոնա. գոտևորումը. ըստ՝
www.salvador-dali.org